Էջմիածին



1968

ՌՆԺԸ
ԻԵ ՏԱՐԻ

Օգոստոս – Սեպտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ը – Թ

1968

ՊԱ-10691

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը	3
«Պատվո նշան» շքանշանի պաշտոնական հանձնումը Հայոց Վեհափառ Հայրապետին	4
Ն.Օրճավորական հեռագիր Վեհափառ Հայրապետի ծննդյան 80-ամյակի առիթով	7
Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բաղրամ Սուրադյանին	9
Վեհափառ Հայրապետի ծննդյան 80-ամյակը	10
ԽՈԲԱԴՐԱԿԱՆ—Պատմական ուղևորություն	12
Վեհափառ Հայրապետի ռադիոզրույցը արտասահմանյան ուղևորություններից Մայր Աթոռ վերադարձին	16
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ուրբաթյան ուղևորությունը արտասահման	19
Մտածումներ՝ հաղված Վեհափառ Հայրապետի 1968 թվականի ուղևորության նյութերից	56
Վեհափառ Հայրապետի գահակալության 13-րդ տարեդարձը Մայր Աթոռում	66
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի շորրորդ համագումարը Ուպսալայում	68
ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ	73
Հոգևոր նեմարանի վերաբացումը	76
Արմին Թ. Վեգները Մայր Աթոռում	79
Հաղորդագրություն	83
Հանգիստ բարձրաշնորհ տ. Խաչ արհիեպիսկոպոս Աթապեկյանի	85
Ողջույն	88
ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԵՐՑԱՆ—Դվինի վարդապետարանի պատմությունը	89
Հ. Հ. ՍԻՐՈՒՆԻ—Կամիտասին հետ	98
Ավարտանարների պաշտպանություն հոգևոր նեմարանում	103



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԹՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ «ՊԱՏՎՈ ՆՇԱՆ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խաղաղության պաշտպանության հայրենասիրական մեծ գործունեության համար և ծննդյան վաթսունամյակի կապակցությամբ հայ եկեղեցու առաջնորդ՝ կաթողիկոս Վազգեն Առաջինին պարգևատրել «Պատվո նշան» շքանշանով։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Ն. ՊՈԴԳՈՐՆԻ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Մ. ԳԵՈՐԳԱՉԵ։

Մոսկվա, Կրեմլ,
19 սեպտեմբերի 1988 թ.



«ՊԱՏՎՈ ՆՇԱՆ» ՇՔԱՆՇԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Սեպտեմբերի 23-ին, երկուշաբթի օրը, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ, մեծահարգ Նագուշ Հարությունյանը նախագահական պալատում և հանդիսավոր իրադրության մեջ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին է հանձնում պաշտոնապես, հանուն ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության, «Պատվո նշան» շքանշանը, Նրա՝ հանուն խաղաղության պաշտպանության հայրենասիրական մեծ գործունեության համար և ծննդյան 80-ամյակի կապակցությամբ:

Շքանշանի հանձնման հանդիսությանը ներկա էին՝ Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, պրոֆ. Ա. Առաքելյանը, Ս. Մելիքսեթյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը:

Հանդիսությանը ներկա էին նաև՝ ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության նախագահ Ռ. Պարսամյանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը, Ներգաղթ կոմիտեի նախագահ Ս. Գասպարյանը, Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի նախագահ գրող Նաիրի Զարյանը և անդամներ, ճարտարապետների միության նախագահ Վ. Հարությունյանը, բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանը, Մաշտոցի անվան Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանը, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի խմբագիր Կ. Վարդանյանը, մամուլի և հեռուստատեսության թղթակիցներ:

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության քարտուղար Ա. Գալստյանը ընթերցում է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության սեպտեմբեր 19 թվակիր հրամանը՝ Հայոց Հայրապետին «Պատվո նշան» շքանշանով պարգևատրելու մասին:

Հրամանագիրը, որի ընթերցումը ունկնդրվում է հոտնկայս, տպված է «Էջմիածին» ամսագրի սույն համարի երրորդ էջում:

Այնուհետև Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունն մեծահարգ նախագահ Նագուշ Հարությունյանը հանձնելով «Պատվո նշան» շքա-

ՀԱՍԱՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՆԱԳՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝
«ՊԱՏՎՈ ՆՇԱՆ» ԾԱՆՇԱՆԻ ՏՎՅՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

նշանը Հայոց Հայրապետին, Նրան դիմում է հետևյալ շնորհավորական ողջույնով.

Մեծարգո Վեհափառ,

Թանկագին բարեկամներ և հարգելի հյուրեր,

Թույլ տվեք Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն սովետի նախագահության, մեր հանրապետության Գերագույն սովետի նախագահության և կառավարության անունից ի սրտե ողջունել Ձեր արգասավոր կյանքի 60-րդ տարելիցը և ջերմորեն շնորհավորել Ձեզ՝ կառավարական բարձր պարգևի՝ «Պատվո նշան» շքանշանի արժանանալու առթիվ:

Սովետական Միության այս բարձր պարգևը հանձնելուց հետո, մեր սիրելի ու մեծարգո Վեհափառ, ես կցանկանայի ամենից առաջ մաղթել Ձեզ քաջառողջություն, անհատնում եռանդ ու կորով, հոգու արիություն՝ խաղաղության պաշտպանության Ձեր հայրենասիրական մեծ գործունեության համար:

Ձեր ամբողջ կյանքն ու բեղմնավոր գործունեությունը, Ձեր ազնիվ ու հայրենանվեր աշխատանքը միշտ ծառայել է մեր վերածնված ու պետականություն ձեռք բերած հայ ժողովրդին, մեր հարազատ մայր հայրենիքին՝ Սովետական Հայաստանին, այն հնավանդ ու նվիրական հողին, ուր մեր հերոսական ու ողբերգական անցյալն է հանգչում, և ուր ծաղկում է մի բարգավաճ ներկա՝ ապագայով հարուստ ու իմաստալից մի իրականություն:

Խաղաղության պաշտպանության Ձեր մարդասիրական մեծ գործունեության այսօրվա արժանավայել գնահատումը առանձնապես մոտ է մեր ժողովրդի սրտին ու մտքին, որովհետև ո՛վ-ով, բայց հայ ժողովուրդը լավ գիտե խաղաղության գինն ու արժեքը: Նա գիտե, որովհետև խաղաղությունը դարեր շարունակ նրա ազգային մեծագույն երազանքն է եղել և միայն մեր մեծ Միության ժողովուրդների եղբայրության հզոր ու անսասան հովանու ներքո նա գտավ խաղաղ ու ստեղծագործ կյանքի իր ապահով հանգրվանը:

Մեծարգո Վեհափառ, թույլ տվեք կրկին անգամ սրտագին ու ջերմորեն ողջունել Ձեր 60-րդ տարելիցը և ցանկանալ Ձեզ նորանոր հաջողություններ՝ խաղաղության պաշտպանության Ձեր հայրենասիրական մեծ գործունեության մեջ՝ հանուն մեր ժողովրդի, հանուն մեր մայր հայրենիքի:

Ապա Հայոց Հայրապետը մեծահայտ նախագահին է ուղղում հետևյալ շնորհակալական և երախտագիտական ճառը.

Մեծարգո Տիար Նախագահ,

Հայաստանյայց առաքելական եկեղեցու և անձամբ Մեր անունից, խորագույն շնորհակալություն ենք հայտնում Սովետական Միության Նախագահության Մեզ շնորհած «Պատվո նշան» շքանշանի համար, որ Ձերդ Վսեմությունը հանձնեցիք Մեզ հանդիսավոր այս պահին:

Շնորհակալություն նաև Ձեզ և մեր հայրենի հարազատ կառավարության:

Իբրև հայ եկեղեցու հովվապետ, անխզելիորեն կապված ենք զգում Մեզ մեր ժողովրդի և մեր վերածնված մայր երկրի հետ և հետևաբար Մեր բոլոր ուժերով աշխատում ենք Մեր խղճի պարտքը կատարել թե՛ հոգևոր, թե՛ ազգային-հայրենասիրական իմաստով:

Մեր գործունեության կարևոր մեկ ասպարեզն ենք նկատում Մեր մասնակցությունը՝ աշխարհի խաղաղության պաշտպանության դատին և ժողովուրդների բարեկամության գաղափարի կենսագործման:

Մենք լծված ենք այս առաքելության, խոր գիտակցությամբը Մեր հոգևոր

կոչումին և մեր փոքրիկ ժողովրդի կենսական և տևական շահերին: Այդ նույն գիտակցությամբ էլ պիտի շարունակենք Մեր աշխատանքը, նույն ոգին ներշնչելով նաև մեր եկեղեցու սպասավորներին և հավատացյալներին, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Այս պատվանշանը, որը Մեզ հանձնեցիք այսօր, Մեզ ավելի է պարտավորեցնում, Մեզ ավելի է խրախուսում և զորացնում:

Թող Աստված հավետ խաղաղ ու անվտանգ, շեն ու պայծառ պահպանի մեր մայր հայրենիքը:

Թող Աստված հավետ խաղաղության մեջ պահպանի աշխարհը համայն և եղբայրական սիրով ջերմացնի հոգիները բոլոր մարդկանց և ժողովուրդների:

Կառավարական պարգևի հանձնումից հետո, Հայաստանի հանրապետության մեծահարգ նախագահը Հայոց Հայրապետին ջերմորեն շնորհավորում է բարձր պարգևի առթիվ և Նրան քաջառողջություն է բարեմաղթում:

Հայոց Հայրապետին ջերմորեն շնորհավորում են նաև՝ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը՝ հանուն հայ եկեղեցու, Մայր Աթոռի և հայ ժողովրդի, բանաստեղծ Նափրի Զարյանը՝ հանուն Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի, ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը՝ հանուն ճարտարապետների միության և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի, Վ. Համազասպյանը՝ հանուն Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի:

Վերջում Վեհափառ Հայրապետը սրտագին շնորհակալական խոսք է ասում հայրենի կառավարությանը և կենտրոնական կառավարությանը՝ պետական բարձր պարգևի համար:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

ԻՆՁ ՄԻԱԾԻՆ

Սովետական Հայաստանի կառավարության և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ՝ Ձեր ծննդյան 60-ամյակի և կառավարական բարձր շքանշանով պարգևատրվելու առթիվ: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և նորանոր հաջողություններ՝ հայրենասիրական և խաղաղության պաշտպանության ու ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման շնորհակալ գործունեության բնագավառում:

Հարգանքներով՝

ԲԱԴԱԼ ՍՈՒՐԱԴՅԱՆ
ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ

Երևան,
20 սեպտեմբերի 1968 թ.

* * *

Ձեր ծննդյան 60-ամյակի և կառավարական բարձր պարգևի՝ «Պատվո նշան» շքանշանով պարգևատրման առթիվ արտագին ողջունում ենք Ձեզ, ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի և անձամբ մեր անունից:

Խաղաղության պաշտպանության օգտին կատարած Ձեր հայրենասիրական մեծ գործունեությամբ Դուք ձեռք եք բերել լայն ճանաչում ոչ միայն մեր երկրում, այլև արտասահմանում՝ Ձեր ժողովրդի և բարի կամեցողության մարդկանց շրջանակներում:

Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և հաջողություններ՝ ժողովուրդների միջև խաղաղության և բարեկամության ամրապնդման գործում:

Վ. ԿՈՒՐՈՑԵԴՈՎ
ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր
կրոնական գործերի խորհրդի նախագահ

Մոսկվա,
19 սեպտեմբերի 1968 թ.

*
* *

Ընդունեցեք մեր շնորհավորանքները Ձեր ծննդյան 60-ամյակի առիթով։ Ցանկանում ենք Ձեզ երկար տարիների առողջություն և հաջողություն՝ ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման գործին ի նպաստ Ձեր անխոնջ աշխատանքների համար։

ՆԻԿՈԼԱՅ ՏԻԽՈՆՈՎ
ՄԻԽԱԻԼ ԿՈՏՈՎ
Խաղաղության պաշտպանության
սովետական կոմիտեի նախագահություն

Մոսկվա,
20 սեպտեմբերի 1968 թ.

*
* *

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ անունից սրտանց շնորհավորում եմ Ձեզ՝ Ձեր ծննդյան 60-ամյակի և կառավարական բարձր շքանշանով պարգևատրվելու առթիվ։

Մաղթում եմ Ձեզ երկար տարիների քաջառողջություն և հետագա բեղմնավոր գործունեություն՝ Ձեր հայրենասիրական և խաղաղության պաշտպանության ի նպաստ տարած անխոնջ աշխատանքներում։

Կ. ԴԱՎԼԱԶՅԱՆ
Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր
հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ

Երևան,
20 սեպտեմբերի 1968 թ.



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հուլիսի 31-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բադալ Մուրադյանը կառավարական տանը ընդունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, որին ներկա է լինում Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Զրույցի ժամանակ Հայոց Հայրապետը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահին հաղորդում է սփյուռքի հայրենակարոտ հայ ժողովրդի ողջույններն ու բարեմաղթությունները և պատմում տպավորություններ Իր արտասահմանյան ուղևորությունից։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԸ

1968 թվականի սեպտեմբերի 20:

Այսօր լրացավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակը:

1908 թվականի սեպտեմբերի 20-ին Բուխարեստի մեջ, բարեպաշտ մի հայ ընտանիքի համեստ հարկի ներքո, ծնվում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Նախախնամության Աջն էր ընտրում և առաջնորդում Նրան, ընտանեկան խոնարհ հարկից մինչև Լուսավորչի գահը:

Այդ բարեբաստիկ օրից անցել են 60 տարիներ, տարիներ՝ ուսման, տքնաջան աշխատանքի:

Գերագույն հոգևոր խորհուրդը թեև իր 1968 թվականի փետրվար 10-ի նիստում որոշել էր «Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 60-ամյակը և գահակալության 14-րդ տարեդարձը հանդիսությամբ նշել 1969 թվականի հոկտեմբերի 5-ին, կիրակի օրը», այնուամենայնիվ 1968 թվականի սեպտեմբերի 20-ին, ուրբաթ օրը, Մայր Աթոռում նշվեց Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակը՝ ընտանեկան, սրտառուչ ու թելադրական հանգամանքների ներքո:

Առավոտյան ժամը 9.30-ին, աշխատանքից առաջ, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայրավանքի ողջ պաշտոնեությունը, շուրջ 150 հոգի, թափոր կազմած, լուսարարապետ գեր. տ. Հայկազուն սարքեպ. Աբրահամյանի առաջնորդությամբ, դիմում է Վեհարանի ընդունարանը առաջին հարկի վրա՝ շնորհավորելու Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակը:

Այդ օրը կրկնակի ուրախության օր էր բոլորի համար նաև նրանով, որ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը Վեհափառ Հայրապետի 60-ամյակի առթիվ սեպտեմբեր 19 թվակիր իր հրամանագրով, պարգևատրել է Հայոց Հայրապետին «Պատվո նշան» շքանշանով, Նրա խաղաղասիրական, հայրենասիրական գործունեության համար:

Վեհարանի ընդունարանում բոլորը ոտքի վրա, լուռ ու երջանիկ սպասում են Հայոց Հայրապետին:

Եվ ահա ընդունարան մուտք է գործում Վեհափառ Հայրապետը: Փոթորկում են ուրախ ծափերն ու ողջույնները:

Վեհափառ Հայրապետը խորապես հուզված է այս անակնկալ և սրտառուչ հանդիպումից:

Լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը խոսք առնելով բացատրում է սույն հանդիսության ընտանեկան բնույթն ու նշանակությունը և ապա, հանուն Մայր Աթոռի միաբանության, հայ եկեղեցու, ջերմորեն շնորհավորում է Հայոց Հայրապետի 60-ամյակը, Մայր Աթոռ ս. Էջմիածնի անսասանության և Հայոց Հայրապետի թանկագին կենաց արևշատության սրտագին մաղթանքներով:

Հոգևոր ճեմարանի վերատեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը, հանուն հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության, շնորհավորում է Հայոց Հայրապետին, շեշտելով, որ ճեմարանը որպես Ն. Ս. Օծության սրտի ամենամոտիկ հաստատություն, Իր որդիական խնդակցությունն է բերում օրվա հանդիսու-

թյան և հույս է հայտնում, որ ճեմարանը հոբելյար Հայրապետի ղեկավարության և գուրգուրանքի ներքո կշարունակի իր առաքելությունը:

«Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը խոսում է հանուն բազմահազար իր ընթերցողների և մայրավանքի պաշտոնեության, նշելով, որ Ն. Ս. Օծության գահակալությունը նոր լույսերով և փառքերով պայծառացրել է Մայր Աթոռ ս. Էջմիածինը, Հայաստանյայց առաքելական եկեղեցին, և շեշտում, որ հայ ժողովուրդը իր պատմության մեջ երբեք այսքան միասնական ու ամբողջական չի եղել իր պաշտամունքի և սիրույն մեջ դեպի ս. Էջմիածինը, մանավանդ վերջին 14 տարիների ընթացքում, Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անձնադիր հովվապետության տարիներին:

Իր խոսքի վերջում Ա. Հատիտյանը ընդհանուր խանդավառության մեջ ընթերցում է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության սեպտեմբեր 19 թվակիր հրամանագիրը՝ Հայոց Հայրապետի ծննդյան 60-ամյակի առթիվ «Պատվո նշան» շքանշանով պարգևատրելու կապակցությամբ: Հրամանագիրը հրատարակվել է ամսագրի 3-րդ էջում:

Հանդիսությանը ներկա է նաև մեր բոլորիս սիրելի Տիրամայրը, լուս ու երջանիկ: «Մայր որդուով բերկրեալ»:

Հանդիսության վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, Իր գոհունակությունն է հայտնում ընտանեկան այս շնորհավորանքի համար, որը Իր սրտին շատ է խոսում իր անմիջականությամբ և անկեղծությամբ և ասում է; որ արդարև անցել են անկատ 60 տարիներ, տարիներ՝ աշխատանքի, դժվարությունների և հաջողությունների և շեշտում, որ մարդուն անհրաժեշտ է միայն առողջություն, որպեսզի կարենա աշխատել և ստեղծագործել:

Ապա օրհնում է բոլորին, Իր գոհունակությունն է հայտնում մանավանդ տ. Հայկազուն արքեպիսկոպոսին, տ. Ներսես ծ. վարդապետին և Ա. Հատիտյանին՝ նրանց սրտագին խոսքերի և շնորհավորանքների համար, որոնք անկեղծ էին, հուզիչ և արտահայտում էին բոլոր ներկաների զգացմունքները և հույզերը:

Հանդիսությունն ավարտվում է աջահամբույրով:

Բոլոր ներկաները հյուրասիրվում են Վեհարանի այգու խաղողներով, դեղձերով և տանձերով:

Թող երկար ապրի Հայոց Հայրապետը, Լուսավորչի Իր գահի վրա նաև Իր հայրենանվեր գործունեությամբ, մինչև այն երջանիկ օրը, երբ Իր օրով ավարտվի ավյուռքի հայության հայրենադարձությունը մայրենի հողի վրա և ս. Էջմիածնի լույսի և խորհուրդի մեջ ապրելու համար որպես մեկ ժողովուրդ, մեկ եկեղեցի և մեկ հայրենիք:

Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակի առթիվ ստացվեցին բազում շնորհավորական հեռագրեր ինչպես պաշտոնական, նույնպես անհատ անձնավորություններից, Մայր Աթոռ ս. Էջմիածնի անասամությանն և Հայոց Հայրապետի թանկագին կենաց արեվշատության մաղթանքներով:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 27-ին Մայր Աթոռ ս. Էջմիածին վերադարձավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ արտասահմանում կատարած հարյուրօրյա ութերորդ Իր ուղևորությունից:

1968 թվականի ապրիլ—հուլիս ամիսներին կատարված հովվապետական այս ուղևորությունը մեծ ու պատմական իրադարձություն է սփյուռքի հայության ազգային-եկեղեցական տարեգրության մեջ:

Այս շրջագայության ընթացքում Հայոց Հայրապետը այցելեց Ավստրիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգաց, Կանադայի, Արգենտինայի, Ուրուգվայի, Բրազիլիայի և Ֆրանսիայի հայ եկեղեցական համայնքները՝ ամրապնդելով նաև մեր ժողովրդի քրիստոնեական հավատքն ու Հայաստանյայց առաքելական եկեղեցու սիրո միությունն ու համագործակցությունը:

Հայոց Հայրապետը ամենուրեք ինչպես միշտ Իր հավատացյալ և հայրենակարոտ զավակների կողմից դիմավորվեց փառաշուք ու ցնծագին ընդունելություններով: Վեհափառ Հայրապետը Իր հոգեպարար քարոզներով, Իր բարձր անձնավորության հմայքով, հայրապետական Իր քաղցր հաղորդականությամբ խոր տպավորություն թողեց բոլորի սրտերի, բոլորի հոգիների մեջ: Մի անգամ ևս ճշմարտվեց, թե Հայոց Հայրապետի բարձր անձնավորության և հեղինակության մեջ սփյուռքը շոշափելիորեն մարմնացած տեսավ հավերժական ս. Էջմիածինն ու վերածնված մայր հայրենիքը, զգաց շունչը հայոց պատմության ու լսեց պատգամը մեր լուսաբնակ նախնիների:

Սփյուռքի հայությունը ալեկոծվեց և ապրեց ազգային հպարտության և մխիթարության ցնծագին օրեր:

Ս. Էջմիածինը ինչպես միշտ, այսօր ևս առավել սփյուռքի հայ կյանքի համար հանդիսանում է հայոց հավատի Արարատը, բաբախող սիրտը՝ հայ ժողովրդի, մշտավառ հայրենասիրության օջախը, մարմնացումը՝ մեր ազգային իդեալների: Էջմիածինը լույս է խավարի դեմ, հույսի ամրոց՝ մոլորումի դեմ, միության վեմ՝ բաժանումների դեմ, և հոգևոր կամուրջ անքակտելի՝ մրրկավ բաժանված մեր ժողովրդի զավակների միջև:

Այս իմաստով հայրապետական այս ութերորդ ուղևորությունը պատմական իրադարձություն հանդիսացավ՝

1. Հոգևոր-եկեղեցական տեսակետից.
2. միջեկեղեցական հանդիպումների մակարդակի վրա.
3. պետական շրջանակների մեջ:

Հայոց Հայրապետի այցելած երկրներում, սփյուռքի ամբողջ տարածքի վրա և հեռու աշխարհների ճամփեքին, Դանուբի ափերից մինչև ափերը Խաղաղականի և Լապլատայի, Կանադայի հյուրընկալ երկնքի տակ թե Ֆրանսիայի, ամեն տեղ մեր ժողովրդի պանդուխտ զավակները, արտասահմանի ողջ հայությունը հազար ու տասնյակ հազարներով իր սիրտը փոեց Հայոց Հայրապետի հայրենակոխ ոտքերի առաջ սիրով ու հուզումով, իր հոգին բացավ որդիական երախտագիտությամբ և իր գլուխը խոնարհեց ս. Էջմիածնի հոգևոր բարձունքներից ճառագայթող կենարար լույսին ու խորհրդին ու

վերածնված հայոց աշխարհից եկած կենդանարար շնչի առաջ: Վեհափառ Հայրապետի անձի և պատգամի մեջ, նրա սուրբ բերանով խոսում էր ինքը՝ հայոց պատմության ոգին, դարերի ծանրությամբ և հուզարամյակների խորհրդով:

Որպիսությամբ պետք է արձանագրել, որ Հայոց Հայրապետը, որպես քաջ հովիվ փնտրելու ելնելով սփյուռքում ցրված Իր պանդուխտ զավակներին, նրանց գտավ ամբողջ, կենսունակ և բարոր, հավատարիմ իրենց նախնիների սուրբ հավատքին, իրենց մայրենի եկեղեցուն ու նրա հավերժության կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնին, հավատարիմ՝ հայ մշակույթին, հայոց պատմության ոգուն ու մեր հինավուրց ու հերոսական երկրին՝ այսօրվա վերածնած մայր հայրենիքին:

Հայոց Հայրապետի համար որպիսություն էր և մխիթարություն տեսնել ու վկայել, որ Ապրիլյան եղեռնից հիսուն տարիներ հետո, հայ ժողովրդի մնացորդացը և՛ իր մայր հողի, և՛ սփյուռքի բոլոր տարածքի վրա իր հոգում գտավ ոգեկան ու կենսունակ անապառ ուժեր ու ոտքի կանգնեց, իր վերքերը բուժեց և իր նահատակությունը գիտեցավ վերաձել հաղթանակի, եղեռնը՝ վերածննդի:

Արևմտյան հայության գլխով եկավ ու անցավ վերջին մեծ աղետը: Ամայացավ Արևմտյան Հայաստանը, և աշխարհով մեկ ցրվեց արևմտահայությունը՝ փշրված ադամանդի նման: Թշնամին չկարողացավ սակայն, մահացնել հողում խոր արմատ գցած մեր ժողովրդի կենսունակության և հավերժության արմատները: Թշնամին չկարողացավ իր արյունոտ ձեռքը երկարել Արարատի բարձունքին: Մենք կա՛նք ու կլինե՛նք, որովհետև հայ ժողովուրդը կառուցող ժողովուրդ է, ոգեկան, իմացական արժեքներ դավանող ու ստեղծող ժողովուրդ, մշտանորոգ կյանքի և հավերժության ձգտող ժողովուրդ:

Ինչպես հայրենի ժողովուրդը, սփյուռքի հայությունը նույնպես լծվել է եկեղեցաշեն, կրթանվեր, մշակութային ու հայրենասիրական կենդանարար աշխատանքների:

Հայոց Հայրապետի այցելած երկրներում վերջին մի քանի տարիների ընթացքում մեր պանդուխտ եղբայրներն ու քույրերը հայկական ճարտարապետական ոճով գեղեցիկ ու ինքնատիպ տաճարներ են կանգնեցրել Վիեննայի, Նյու-Յորքի, Դետրոյտի, Բոստոնի, Բուենոս-Այրեսի, Մոնտեվիդեոյի մեջ՝ որպես վկայությունն ու հաղթանակը մեր ժողովրդի քրիստոնեական հավատքի ու կենսունակության, եկեղեցիներ, որոնք օրհնվեցին մեծ հանդիսությամբ և խանդավառ մթնոլորտում Ամենայն Հայոց Հայրապետի սուրբ Աջով:

Այսօր ողջ սփյուռքի հայության առաջ դրված հիմնական հարցը մայր հայրենիքից դուրս և հեռու ափերի վրա ապրող հայության ազգապահպանման և գոյատևման հարցն է՝ եկեղեցիների կառուցումով, դպրոցների, մշակութային սրահների շինարարությամբ, հայ գրի ու գրականության զարգացումով, հայրենական ապրումներով:

Հակառակ այն իրողության, որ այսօր սփյուռքը, եղեռնից հիսուն տարիներ հետո էլ ապրում է բարոր, տնտեսապես ապահով, հավատարիմ իր մայրենի եկեղեցու շուրջ, այնուամենայնիվ սփյուռքը որպես իրականություն դեռևս մնում է բովանդակ հայ ժողովրդի արտի վերքը, քանի դեռ չի մեկտեղված իր հայրենի հողի վրա ապրելու համար որպես մեկ և ամբողջական հավաքականություն՝ իր մեկ և ամբողջական հայրենիքում, հայրենի պետության ապահով ու խաղաղ հովանու տակ:

Հայ սփյուռքը աստղերի նման փշրված ու ցանված օտար հորիզոնների տակ ու ենթակա՝ տարբեր մշակույթների ազդեցությանը, չի կարող ապրել, եթե չխարսխվի գաղափարական ամուր հիմքերի վրա:

Ս. Էջմիածին և մայր հայրենիք՝ ահա երկու գաղափարականներ, երկու սրբություններ, որոնց ներշնչումով և տեսիլքով միայն հայ սփյուռքը կարող է գոյատևել:

Սփյուռքի համար չկա այլ փրկարար ճանապարհ, եթե ոչ բոլոր հայ հոգիների եղբայրացում և միավորում՝ Էջմիածնի լույսին ու հայրենիքի վեհ զգացումին մեջ: Ով այսօր իր հոգին չի լուսավորում ս. Էջմիածնից ճառագայթող լույսով և իր սիրտը չի տաքացնում վերածնած հայրենիքի լուսավոր ապրումներով, ոչ մեկ բանով կարող է ջերմանալ, հայանալ և զորանալ: Սփյուռքի ամեն մի հայ իր հոգու խորքում որպես սրբություն պիտի ունենա հավերժական Էջմիածինն ու վերածնված հավիտենական Հայաստանը: Սփյուռքի հայության գիտակցության մեջ այս մտածումը արդեն իսկ բյուրեղացած հավատք ու առաջնորդող ոգի է դառնում:

Ամենայն Հայոց Հայրապետի վերջին այցելությունը առավել պայծառացրեց մեր պանդուխտ ժողովրդի այս հրաշալի ապրումը:

Հայոց Հայրապետը Իր շրջագայությունից Մայր Աթոռ ս. Էջմիածին վերադարձավ խորապես մխիթարված, որ հայ ժողովրդի գիտակցության մեջ ամուր կերպով դրոշմվել է նաև մեր եկեղեցու միության և անբաժանե-

լիության սրբազան սկզբունքը, Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնության ներքո:

Հայ հոգու, հայ խղճմտանքի և հայ գիտակցության համար այլևս անհանդուրժելի են մեր եկեղեցին սրբեստականորեն բաժանող ձեռնարկները ու փորձերը: Մեկ է մեր ժողովուրդը, մեկ է մեր եկեղեցին ու մեկ է նրա նվիրապետական վերին իշխանությունը, խորհրդանշված Ամենայն Հայոց Հայրապետության պատմական Աթոռ ս. Էջմիածնով՝ երկհազարամյա միակ կենտրոնը հայց. առաք. եկեղեցու:

Միջեկեղեցական հանդիպումների մակարդակի վրա նույնպես հայրապետական սույն ուղևորությունը եղավ բացառիկ ու պատմական: Հայոց Հայրապետը հանդիպումներ ունեցավ, մեր ժամանակները հատկանշող էկումենիկ ոգով, քույր եկեղեցիների հոգևոր պետերի հետ:

Մեր օրերում և արդի եկեղեցական կյանքի պայմաններում, քրիստոնեական եկեղեցիները կյանքի հրամայականի առաջ դուրս են եկել իրենց մեկուսացումից, մոտենում են միմյանց, փորձում են իրար ավելի լավ ճանաչել, միասին աղոթել և աշխատել հավաքական ճիգերով, էկումենիկ ոգով, հանուն քրիստոնեական հավատքի ամրապնդման, հանուն ավետարանական պատգամների կենսագործման, հանուն աշխարհի խաղաղության և ժողովուրդների եղբայրության:

Այս մտածումների լույսի տակ Հայոց Հայրապետի վերջին շրջագայությունը սրտագին առիթ էր ստեղծել մի նոր և ավելի բարձր աստիճանի բարձրացնելու հայ և քրիստոնեական քույր եկեղեցիների, այդ թվում՝ հռոմեական կաթոլիկ, հույն օրթոդոքս, անգլիկան, եպիսկոպոսական, բողոքական, ավետարանական համայնքների եղբայրական բարեկամությունը ու սիրո միությունը:

Արդարև, ամեն տեղ Հայոց Հայրապետը դիմավորվեց քույր եկեղեցիների պետերի և ներկայացուցիչների կողմից եղբայրական սիրով ու հարգանքներով:

Հուզիչ, պատմական և անմոռանալի եղան հայ և քույր եկեղեցիների հոգևոր պետերի ողջագուրումները:

Պաշտոնական առիթներով եկեղեցիներում և սեղանների շուրջ արտասանված ճառերը, ելույթները, ողջույնի խոսքերը խանդավառ ու ջերմ մթնոլորտում, վերածվեցին քրիստոնեական եղբայրության սրբազան տոնի ու հոգևոր դաշինքի:

Հայոց Հայրապետի հանդիպումները քույր եկեղեցիների հոգևոր պետերի հետ, համատեղ կատարված էկումենիկ աղոթքները ու արարողությունները գեղեցիկ և սրտառուչ առիթը հանդիսացան Հայաստանյայց առաքելական եկեղեցու, նրա դարավոր կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնի և նրա սրբազան գահակալի և հայ հավատացյալ ժողովրդի հանդեպ անվերապահ հարգանքի, սիրո և բարի վկայությունների արտահայտությանց:

«Քրիստոնյա Արևմուտքը շատ է պարտական Արևելքի պատմական և հնագույն եկեղեցիներից մեկին՝ հայ եկեղեցուն, և նրա դարավոր կենտրոն ս. Էջմիածնի հայրապետական Աթոռին, քրիստոնյա Հայաստանին ու հայ ժողովրդին, նրա քրիստոնեական փառապանծ ավանդությունների, կենդանի հավատքի և նահատակության համար,—նշում է Նյու-Յորքում ապրիլի 30-ին ԱՄՆ-ի ազգային եկեղեցիների նախագահ դոկտ. Է. Էբսին, ԱՄՆ-ի ազգային եկեղեցիների կենտրոնի պալատում, Հայոց Հայրապետի պատվին տրված էկումենիկ պաշտոնական ընդունելության ժամանակ:

Նման արտահայտություններ, բարի վկայություններ եղան, ամեն տեղ ամեն առիթով, հայ եկեղեցու, Մայր Աթոռ ս. Էջմիածնի, նրա գահակալի և հայ հավատացյալ ժողովրդի հասցեին:

Արևմուտքի քրիստոնեական շրջանակներում Հայոց Հայրապետի այցելությունը քույր եկեղեցիների կողմից գնահատվում է որպես մի նոր և կարևոր նպաստ քրիստոնեական էկումենիզմի օգտին, եկեղեցիների հարաբերությունների ամրապնդման և քրիստոնեական մշակույթների և ժողովուրդների կապերի սերտացման տեսակետից:

Պետական ղեկավար անձանց հետ հանդիպումները, նույնպես բարձր մակարդակի վրա հանդիսացան ուշագրավ իրադարձություններ:

Հայոց Հայրապետը ամեն տեղ, որպես գլուխը և գերագույն պետը Հայաստանյայց առաքելական եկեղեցու, հանդիպումներ ունեցավ պետական բարձրաստիճան անձնավորությունների հետ նրանց հաղորդելով Իր ողջույնն ու աստվածային օրհնությունը՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Սփյուռքի տարածքի վրա հայ ժողովրդի հավատացյալ զավակները ապրում են որպես կրոնական համայնքներ, կազմակերպված կյանքով՝ իրենց մայրենի եկեղեցու շուրջ, և վայելում են որպես լիիրավ քաղաքացիներ երկրի պետական օրենքի համաձայն ամեն հնարավորություն և ազատություն՝ կազմակերպելու իրենց կրոնական մշակութային կյանքը:

Պետք է ուրախությամբ արձանագրել, որ Հայոց Հայրապետի այցելած բոլոր հյուրընկ-

կալ երկրներում հայ ժողովրդի գավակները իրենց հավատքով ու ազգային-եկեղեցական բարեմասնություններով, իրենց աշխատանքով ու նվիրումով, որպես խաղաղասեր, շինարար և օրինապահ քաղաքացիներ, վայելում են կառավարական շրջանակների հարգանքն ու վստահությունը և հյուրընկալ ժողովուրդների համակրանքը:

Ինչքան մխիթարական էր Հայոց Հայրապետի սրտի համար, պաշտոնական-պետական այցելությունների ժամանակ, լսել բազում բարի վկայություններ իր հոգևոր գավակների օրինապահության և ազնիվ քաղաքացիներ լինելու մասին:

Հայոց Հայրապետը ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում, Ուրուգվայում, Բրազիլիայում մեծարվում և ընդունվում է որպես տվյալ պետության և ժողովրդի թանկագին հյուրը, որպես «Արևելքի հնագույն մեկ եկեղեցու՝ հայ եկեղեցու գերագույն պետի, որպես խաղաղության և ժողովուրդների եղբայրության ջերմ պաշտպանի»:

Այստեղ ամենայն կարևորությամբ պետք է նշել 1968 թ. մայիսի 2-ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հանդիպումը Նյու-Յորքում, ՄԱԿ-ի պալատում, ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Ու-Թանի հետ, «անհուն մխիթարությամբ իր օրհնությունը բերելու Միացյալ ազգերի կազմակերպության՝ մաղթելով, որ նա դառնա հետզհետե առսվել հզոր այն ուժը և գործոնը, որ ապահովի աշխարհի խաղաղությունը, ժողովուրդների անվտանգությունն ու պետությունների համերաշխ գործակցությունը, իրավունքի և քաղաքակրթության հրամայականների ներքո»,— ինչպես նշվել էր Հայոց Հայրապետի բովանդակալից և հուզիչ ուղերձում՝ կայացված նույն օրը կեսօրին, ՄԱԿ-ին առընթեր 18 երկրների դեսպանների պաշտոնական հաշկերույթի ժամանակ:

Հայոց Հայրապետը Մայր Աթոռ ս. Էջմիածին է վերադարձել արտասահման կատարած իր ութերորդ ուղևորությունից խորապես մխիթարված և սիրտը լեցուն ուրախությամբ:

Հայոց Հայրապետը վերադարձել է մանավանդ առավել լավատես դեպի սուրբ ապագան Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Հուլիսի 23-ին Փարիզում արտասանած Իր վերջին պատգամի մեջ Վեհափառ Հայրապետն ասում էր.

«Մայր Աթոռ ս. Էջմիածին այսօր է՝ և հավետ պիտի՝ ըլլա ինչ որ եղած է ի սկզբանե, այսինքն վեմ հավատքի, լույս հոգիներու և պաշտպան հայրենյաց»:

Եկեցի՛ և եկեցի՛:

Ա՛յս է նաև հավատքը բովանդակ հայության այսօ՛ր, վա՛ղը և հավիտյա՛նս:

«Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա, և շնորհազարդ պայծառացո գաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին», այժմ և հավիտյան:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՌԱԴԻՈԶՐՈՒՅՑԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ

(1968 թ. հուլիսի 30)

Աստուծո ողորմությամբ վերադարձանք Մայր Աթոռ՝ ուրախ ու միսիթարված սրտով։ Մեր ուղևորությունը տևեց ուղիղ հարյուր օր։ Այցելեցինք յոթ երկիրներ՝ Մեր օրհնությունը տանելով հայ եկեղեցիներուն և հավատացյալներուն Վիեննա, Նյու-Յորք և այլ ութ հայաշատ քաղաքներ Ամերիկայի Միացյալ Նահանգաց մեջ, ապա Մոնրեալ և Քեպեք, այնուհետև Հարավային Ամերիկա՝ Բուենոս-Այրես, Մոնտեվիդեո, Սան-Պավլո և Ռիո-Դե Ժանեյրո և հետո Փարիզ։

Ամենուր հայ բարեպաշտ և հայրենաբաղձ ժողովուրդը սքանչելի միասնությամբ, հազարներ և տասնյակ հազարներ, սիրով, կարոտով, ցնծությամբ իրենց հոգիները բացին՝ ստանալու համար ողջույն վերածնած մայր Հայաստանեն և օրհնություն՝ սուրբ Էջմիածնեն։ Հրաշքի համազոր իրողություն է սփյուռքի հայության սրբազան կիրքը, անխորտակելի կամքը՝ վառ պահելու իր հայկական գիտակցությունը, իր նախնյաց լույս հավատքը, և հավատարիմ մնալու իր ազգային մշակույթին, իր մայր հողին և իր սրբություն սրբոց սուրբ Էջմիածնին։ Հեռավոր ափեր, ծովեր, օվկիանոսներ և հազար ու մեկ արտաքին գործոններ անզոր են շիջեցնելու հայոց հոգիներու հրդեհը բոցավառ։ Անգամ մը ևս համոզվեցանք, թե մեր ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի ոգեկան հզոր մարմին մը կկազմե, մեկ ու սնբաժան, որուն մեջ կա և հավետ անմար կմնա խորհուրդը մշտանորոգ կյանքին և ստեղծարար ուժին։

Արտասահման ապրող հայության առաջ դրված մեծագույն և բախտորոշ հարցը ազգապահպանման հարցն է, որուն համար անհրաժեշտ է առավել կազմակերպվածությամբ ու նպատակասլացությամբ մեկտեղել բոլոր բարոյական, իմացական և նյութական ուժերն ու միջոցները։ Հատկապես կարևոր է ամեն տեղ ընդլայնել հայ վարժարանների ցանցը։ Այս տեսա-

կետե առավել մխիթարական է Հարավային Ամերիկայի կացությունը: Մեր ուղևորության ընթացքին ամեն տեղ Մենք այցելեցինք ոչ միայն մեր եկեղեցիները, այլ նաև բոլոր հայ վարժարանները, ամենօրյա թե կիրակնօրյա, օրհնեցինք աշակերտները և գնահատանքի Մեր խոսքը ըսինք հայ դաստիարակելու և վարժարաններու վարիչ մարմիններու, սփյուռքի հայ վարժարանները նկատելով մեծագույն ընծաները մատուցված մայր հայրենիքին:

Խոր հուզումի ապրումներ ունեցանք Մոնթե-Բելլոյի և Սան-Պավլոյի նահատակաց հուշարձաններուն Մեր տված այցելությանց առթիվ, երբ հանդիսավոր իրադրության մեջ ներկա եղան բազմահազար հայեր: Աննկարագրելի էր ծովածավալ բազմության հոգեկան ալեկոծումը, իբրև արտահայտություն երկյուղած հարգանքի Ապրիլյան եղեռնի նահատակներու հիշատակին, և իբրև ուրախության պոռթկում՝ վերածնած մայր հայրենիքի նկատմամբ: Եվ քանի-քանիներ կդիմեին մեզի՝ աղաղակելով՝ «Ողջույն տարեք Ծիծեռնակաբերդին, ողջույն տարեք Արարատին»: Բոլորի սրտերը փոթորկված էին մանավանդ, որովհետև նույն օրերուն մեր ժողովուրդը կոգեկոչեր հիշատակը Սարդարաբադի հերոսներուն, որոնց սուրբ արյունով 1915 թվականի Մեծ եղեռնը 1918-ին պսակվեցավ Սարդարաբադի Մայիսյան հաղթությամբ: Երջանիկ եղանք հաստատելով, թե ինչպես մայր երկրի մեջ, նույնպես և սփյուռքի ամբողջ տարածքի վրա, հայ ժողովուրդը տոգորված է ու ոգեշնչված նույն ապրումներով, նույն մտորումներով և նույն երազանքներով, վերաշինվող հայոց հայրենիքի լուսավոր ներկայի և առավել փառավոր ապագայի նկատմամբ:

Այս հուսադրիչ իրողությունը սակայն պետք չէ մեզ մղե դեպի կրավորական ինքնագոհացում, այլ ընդհակառակը՝ դեպի կենդանի գործ՝ առավել կազմակերպվածությամբ և առավել հետևողականությամբ, որպեսզի արտասահմանի նոր սերունդները ևս ապրին ու գործեն սորվին հայ ժողովուրդի և հայ հայրենիքի ներկայի և ապագայի գիտակցությամբ: Սփյուռքի հայ երիտասարդությունը անհրաժեշտ է դաստիարակել մեր նախնյաց հավատքով, սուրբ Էջմիածնի օրհնության ներքև, անհրաժեշտ է լուսավորել անոնց գիտակցությունը հայոց պատմության ոգիով և հայ մշակույթի հին ու նոր արժեքներով, անհրաժեշտ է նույնպես ոգեշնչել զանոնք վերածնած հայոց հայրենիքով, արդի Հայաստանով և անոր պայծառ գալիքով, վասնզի տարակույս չկա, թե ամենայն հայոց ապագան կդարբնվի Հայաստանի մայր հողի վրա, մեր օրերու իրականության հաստատուն պատվանդանին վրա՝ չարքաշ, շինարար և ստեղծարար աշխատանքով հայրենաբնակ հայերուն, հայրենի հարազատ պետության հովանիին ներքև՝ խաղաղության, անվտանգության և ազատ ու հարաճուն զարգացման պայմաններու մեջ:

Մեր ազգի և հայրենիքի վերածննդյան այս ճանապարհին վրա Մայր Աթոռ ս. Էջմիածին ինք ևս իր պատմական առաքելությունը կշարունակե ու պիտի շարունակե անշեղ կերպով, միշտ կանգնած իր հարազատ ժողովուրդի և մայր երկրի կողքին, միշտ ծառայելու համար անոնց հիմնական և հավիտանական շահերուն:

Մեր ուղևորությունեն կվերադառնանք առավել զորացած այս գիտակցության մեջ և առավել լավատես՝ դեպի ս. Էջմիածնի նախախնամական առաքելությունը:

ՊԱ - 10691



Ճշմարտապես «ի վերայ Աջոյն և սրբոյ Էջմիածնի, ամենայն ազգն հայոց կապեալ կայ» այժմ և հավիտյան:

Եվ իբրև եզրակացություն, սփյուռքի մեր զավակներուն ուղղյալ, Մեր հորդորն է՝ մեկտեղել, կենտրոնացնել բոլոր կենսունակ ուժերը, բոլոր հնարավոր միջոցները, և համերաշխ ու միաբան աշխատանքով ամուր հիմերու վրա կազմակերպել ազգապահպանման նկիրական գործը, անսասան հավատքով և լավատեսությամբ դեպի մեր ազգի ու մայր երկրի ապագան՝ առաջնորդող նշանաբան ունենալով՝ մեկ ու անքաժան Հայաստանյայց եկեղեցի՝ սուրբ Էջմիածնի ամենայն հայոց հայրապետության իշխանությամբ, և իբրև մեկ ու անքաժան հայ մշակույթ և հայ ժողովուրդ, ամենայն հայոց մայր հայրենիքի, հավերժական Հայաստանի, ապրող ու աճող արդի իրականությամբ:

Թող Աստված օրհնե մեր վերածնած ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի ու հաջողությամբ կենսագործե անոր արդար իղձերն ու երազանքները բոլոր:

Ողջ լերուք, զորացյալ սուրբ Հոգվով, այժմ և հավիտյան ամեն:

ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԱԿԱՌՈՒՑԵՑ Ս. ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

1968 թվականի ապրիլի 16-ին, երեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Վիեննայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Հարավային Ամերիկայի եկեղեցական և թեմական իշխանությունների հրավերներին, մեկնեց Մայր Աթոռից՝ հովվապետական այցելություն տալու վերոհիշյալ հայ համայնքներին՝ անձամբ տանելով Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնությունը անխտիր բոլոր իր հոգևոր զավակներին՝ նախաձեռնելու նորակառույց մի շարք եկեղեցիների օծման հանդիսություններին՝ համբարձումն մեր սուրբ հավատքի, հայ եկեղեցու սիրո միության և ազգային հայրենասիրական միասնականության։

Հայոց Հայրապետի այս ութերորդ ուղևորության ծրագրում նախատեսված էր հովվապետական այցելություններ Ավստրիայի, ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի, Ուրուգվայի, Բրազիլիայի և Ֆրանսիայի հայ եկեղեցական համայնքներին։

Հայոց Հայրապետը այս անգամ ևս դիմավորվել է ամենուրեք իր հավատավոր և հայրենակարոտ զավակների կողմից փառաբանությամբ և սրտագին ընդունելություններով։

Ուղևորի տարածքի վրա տարող հայ ժողովուրդը իր սիրտն է փռել Հայոց Հայրապետի ոտքերի առաջ և մի անգամ ևս որդիական երախտագիտությամբ ու սրտառուչ հավատարմությամբ իր գլուխն է խոնարհել սուրբ Էջմիածնիր ճառագայթող կենարար լույսի, աստվածային օրհնության և վերածնված հայոց աշխարհից եկած կենդանարար շունչի առաջ։

Ափյուռքի հայությունն ողջաց, տեսավ ու հասկացավ, որ Ամենայն Հայոց Հայրապետությունը, ինչպես միշտ, այսօր ևս առավել, հայ կյանքում իր առաքելությամբ հանդիսանում է հայոց հավատքի Աստուած, ափյուռքի հայության փրկության լաստոր, հանդիսանում է միություն՝ բաժանման դեմ, և օջախ՝ նշմարիա հայրենասիրության։

Վեհափառ Հայրապետը իր շնորհաբեր այցելությամբ, իր քարոզներով, հայրական իր անուշ վերաբերմունքով ու իր ճառագայթող անձնավորության հմայքով անմոռանալի տպավորություններ է թողել հայ և օտար եկեղեցական, պետական, հասարակական շրջանակների մեջ, ամեն սրտի և բոլորի հոգիների մեջ։

Այս իմաստով սույն ութերորդ ուղևորությունը պատմական մեծ իրադարձություն է հանդիսացել։

1. Հոգևոր-եկեղեցական տեսակետից,
2. միջեկեղեցական հանդիպումների մակարդակի վրա և
3. պետական շրջանակների մեջ։

Ահա թե ինչու ամեն տեղ փառաշուք հանդիսությամբ էին դիմավորում Հայոց Հայրապետին և անսահման հետաքրքրությամբ էին լսում նրա խոսքը, որ հնչում էր հստակ, ջերմ ու քրիստոնեական։

Արդարև, մեծ է Ն. Ս. Օծության ութերորդ ուղևորության հոգևոր, ազգային-հայրենասիրական նշանակությունը։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը Գերագույն հոգևոր խորհրդի առաջադրանքով և Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությամբ որոշել է այս անգամ ևս հովվապետական ութերորդ ուղևորության հուշագրությունը, Ն. Ս. Օծության ողջույնի խոսքերն ու քարոզները, դրույցներն ու ելույթները,

հանդիսությանց նկարագրությունները, ինչպես նաև հայ և օտար շրջանակների կողմից արտահայտված զգացումներն ու խոհերը ամփոփել մասնավոր մի հատորի մեջ։

Այժմ մեր ընթերցողներին ենք ներկայացնում հայրապետական ուղևորության օրագրությունը միայն։

Վեհափառ Հայրապետը Վիեննայում

Ապրիլի 20-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը «Իլ-18» ինքնաթիռով մեկնում է Վիեննա։

Այս ուղևորության ժամանակ Վեհափառ Հայրապետին ուղեկցում են Վրաստանի հայոց առաջնորդ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ դեր. տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր ու հոգևոր ճեմարանի ավագ դասախոս պրն. Արթուն Հատիսյանը։

Մոսկվայում, Շերեմետևոյի միջազգային օդանավակայանում, Հայոց Հայրապետին և շքախմբի անդամներին ճանապարհեցին ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր եկեղեցական գործերի խորհրդի նախագահի տեղակալ պրն. Մակարցևը, ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի պրն. նախագահ Կ. Դալլաքյանը, ինչպես նաև Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի հայոց առաջնորդ տ. Պարգև եպս. Գևորգյանը, եկեղեցական խորհրդի անդամներ և հավատացյալներ։

Մոսկվայից մեկնելուց առաջ Հայոց Հայրապետը հետևյալն է հաղորդում ՏԱՍՍ-ի գործակալությանը.

«Ապրիլի 16-ին իմեկնինք Մայր Աթոռից և կուղևորվինք դեպի արտասահման հրավերով Վիեննայի և Ամերիկայի Միացյալ Նահանգաց հայ եկեղեցական իշխանությանց նախագահելու համար նորակառույց եկեղեցիների օծման արարողություններին։

Վիեննայում ս. Հռիփսիմե եկեղեցու օծումը տեղի կունենա ապրիլի 21-ին, իսկ Նյու-Յորքի Մայր տաճարի օծումը՝ ապրիլի 28-ին։

Համաձայն Ամերիկայի հայոց եկեղեցու առաջնորդարանի նախագծած ծրագրի, Մենք պիտի այցելենք նաև մի շարք այլ հայաշատ քաղաքներ Միացյալ Նահանգաց մեջ, ինչպիսիք են Վաշինգտոն, Բոստոն, Դետրոյտ, Չիկագո, Լոս-Անջելես, Ֆրեզնո և Սան-Ֆրանցիսկո, տանելու համար մեր հավատացյալ ժողովուրդին Մեր օրհնությունը սուրբ Էջմիածնից և մեր վերածնած մայր հայրենիքից։

Բնական է, թե պիտի հանդիպինք քույր եկեղեցիների բարձր ներկայացուցիչներին և Մենք շատ ուրախ պիտի լինինք տանելու նրանց բոլորին Մեր եղբայրական ողջույնը հայոց սուրբ գրական երկրից և քրիստոնեական հավատքի բազմադարյան մեր կենտրոնից։

Վերջին օրերս ստացանք նաև սիրալիր հրավեր Հարավային Ամերիկայի մեր եկեղեցական կենտրոնից՝ Բուենոս-Այրեսի հոգևոր իշխանության կողմից՝ այցելելու Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի հայ եկեղեցիները և հավատացյալներին։

Մենք ընդունեցինք նաև այս հրավերը և ուրախ ենք, թե Մեր օրհնությունը պիտի բաշխենք նաև Հարավային Ամերիկայի Մեր հավատացյալ զավակներին։

Որպես հայ եկեղեցու գերագույն պետ կխորհինք, թե վերոհիշյալ Մեր այցելությունները երջանիկ պատեհություններ են, որպեսզի է՛լ ավելի ամրապնդվի սփյուռքի հայության հոգևոր կապը իր պատմական միակ կենդրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնի հետ և է՛լ ավելի զորանա միության և միասնության գիտակցությունը մեր պանդուխտ ժողովրդի կյանքի և գործունեության մեջ։

Մենք ուրախ պիտի լինենք, եթե Մեր այցելությունների և հանդիպումների առթիվ Մեր խոսքով և գործով կարողանանք որոշ չափով ավելի նպաստել եկեղեցիների և ժողովուրդների միջև բարեկամության ու եղբայրության ոգու և աշխարհի խաղաղության գատի ամրապնդմանը։

Ապրիլի 20-ին, շաբաթ օրը, կեսօրից հետո, ժամը 4-ին, «Տու-138» ինքնաթիռը վայրէջք է կատարում Վիեննայի միջազգային օդանավակայանում, ուր Հայոց Հայրապետին սրտագին ծափերով և ջերմագին դիմավորում են Կ. Պոլսի հայոց պատրիարք Նորին ամենապատվություն տ. Շնորհք արքեպ. Գալստյանը, որը հատկապես եկել էր անձամբ ողջունելու Հայոց Հայրապետին մատուցելով ամբողջ Թրքահայ հավատացյալների, հոգևորականության և եկեղեցական մարմինների որդիական սերն ու հավատարմությունը, Վիեննայի հայոց հոգևոր հովիվ հոգ. տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, համայնքային վարչության անդամները՝ առաջնորդ պրն. Սարգիս Կարապետյանի գլխավորությամբ, ընդունելության հանձնախմբի անդամները, ողջ գաղութը Վիեննայի, ինչպես նաև մասնավոր հյուրեր Միլանոյից, Աթենքից, Մարսելից, Փարիզից, Ժնևից, Բրյուսելից, Լոնդոնից, Բեյրութից, ԱՄՆ-ից և Ստամբուլից։

Օդանավակայանում Հայոց Հայրապետին անձամբ ողջունում են Ավստրիայի կաթո-

Վիեննայի Հայոց Ողբակառույց ս. Հռիփսիմե եկեղեցու մուտքը, ձախ կողմում ս. Հռիփսիմե կույսի խաչանկար-մոզաիկը

լիկ եկեղեցու պետ Նորին վսեմություն կարդինալ Ֆրանց Գյոնիգը իր շքախմբով, Ավստրիայի կրոնական նախարարի օգնական դոկտ. Շիման, դաշտամունքի նախարարության ներկայացուցիչ դոկտ. Ժոզեֆ Ռիքերը, Վիեննայի քաղաքապետի տեղակալ դոկտ. Տրիմլը, Ավստրիայում հույն օրթոդոքս եկեղեցու պետ միտրոպոլիտ Գիտոը, Կ. Պոլսի հունաց տիեզերական պատրիարք Նորին Սրբություն Աթենագորասի ներկայացուցիչ Խրիսոստոմոս արքեպիսկոպոսը, հանուն ռուս պրավոսլավ եկեղեցու Մելքիսեդեկ արքեպիսկոպոսը, Վիեննայի հայոց Մխիթարյան միաբանության աբբահայրը տ. Մեսրոպ արքեպ. Հապոդյանը, ռումին, բուլղար և այլ հարանվանությանց հոգևոր ներկայացուցիչներ։

Օդանավակայանի դահլիճում տեղի է ունենում հայ և օտար մամուլի ասուլիս։ Վեհափառ Հայրապետը պատասխանում է թղթակիցների հարցերին։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը մեծ շքերթով առաջնորդվում է Վիեննայի հայոց նորակառույց ս. Հռիփսիմե եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով, ողջունում և օրհնում հավատացյալներին։

Եկեղեցական արարողության ավարտին, հանդիսավոր իրադրության մեջ, կատարվում է եկեղեցու բակում Գալուստ Կյուլպենկյան Մշակութային տան բացման հանդիսությունը։ Վեհափառ Հայրապետը կրարում է մուտքի ժապավենը և նախագահում հանդիսությանը։ Հոգ. տ. Մեսրոպ ծ. վարդապետը ողջունում է Հայոց Հայրապետի

շնորհաբեր ժամանումը։ Վեհափառ Հայրապետը ողջունում և օրհնում է ավստրիահայ երիտասարդությանը և տալիս հայրապետական իր պատգամը։

Այնուհետև նախագահում է երեկոյան ժամերգությանը և եկեղեցու քարեբարուհի, հանգուցյալ տիկին Հռիփսիմե Ռոզ Թրիքի (Հալաջյան) հիշատակի հոգեհանգստյան պաշտոնին։

Ապա Ն. Ս. Օծությունը առաջնորդվում է Վիեննայի Իմպերիալ հյուրանոցը։

Ապրիլի 21-ին՝ կիրակի.—Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը հանդիսավորությամբ կատարում է Վիեննայի Հայոց նորակառույց ս. Հռիփսիմե եկեղեցու օծումը և ապա մատուցում հայրապետական ս. պատարագ։

Օծման հանդիսությանը և հայրապետական պատարագին ներկա են՝ Կ. Պոլսի Հայոց սրբազան պատրիարք-հայրը, Վիեննայի ողջ հայ համայնքը և բազմաթիվ հյուրեր այլ երկրներից։

Եկեղեցական հանդիսությանց ներկա են նաև կարդինալ Ֆրանց Գյոնիգը, կրթական նախարար Պիֆֆլ Պերլնիչը, Ավստրիայում սովետական դեսպան Բորիս Ֆ. Պոտցերովը, դավանությանց նախարարության ներկայացուցիչ դոկտ. Վեկները, փոխ-քաղաքապետ դոկտ. Գերիմվերը, քույր եկեղեցիների հոգևոր պետեր։

Նույն օրը, կեսօրից հետո, ժամը 3-ին, Իմպերիալ հյուրանոցում համայնքային վարչությունն ու Վիեննայի Հայոց հոգևոր հովվությունը ի պատիվ Հայոց Հայրապետի կազմակերպում են պաշտոնական ընդունելություն, որին ներկա են լինում կրոնական և պետական բարձրաստիճան անձնավորություններ, որոնց թվում նաև ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարքը։

Ընդունելության ժամանակ ճառեր են փոխանակում Վեհափառ Հայրապետը, կարդինալ Ֆրանց Գյոնիգը և կրթական նախարար Պիֆֆլ Պերլնիչը։

Ժամը 8-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տրվում է համայնքային մեծ ճաշկերույթ, որին մասնակցում են շուրջ 200 հրավիրյալներ։ Վեհափառ Հայրապետին ողջունում են սրբազան պատրիարք-հայրը, տ. Մեսրոբ ծ. վրդ. Գրիգորյանը, պրն. Սարգիս Կարապետյանը, պրնք. Ստեփան և Արամայիս Սրապյան եղբայրները, դոկտ. Տիգրան Ալեքսանյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը։ Վեհափառ Հայրապետը օրհնում և իր հայրական ողջույնն ու պատգամն է տալիս ներկաներին։

Ապրիլի 22-ին՝ երկուշաբթի.—Առավոտյան ժամը 10-ին Իմպերիալ հյուրանոցի սրահում տեղի է ունենում մամուլի ասուլիս։

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբի ուղեկցությամբ այցելում է Վիեննայում սովետական կառավարության դեսպան նորին վսեմություն Բորիս Ֆ. Պոտցերովին։

Ժամը 12-ին հյուրանոցի իր հարկաբաժնում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունները հայ համայնքների ներկայացուցիչների, առանձին ղեկավար հասարակական գործիչների և ծանոթ ազգային անձնավորությունների։

Ժամը 13.30-ին Ավստրիայի կաթոլիկ եկեղեցու պետ կարդինալ Ֆրանց Գյոնիգը Հայոց Հայրապետի պատվին ճաշկերույթ է տալիս կարդինալական իր ապարանքում։ Ճաշկերույթին ներկա են լինում ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարք-հայրը, հայրապետական շքախմբի անդամները, Վիեննայի Հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, համայնքային վարչության ատենապետ պրն. Սարգիս Կարապետյանը։

Հյուրերի թվում էր նաև Վիեննայի Մխիթարյան հայրերի արքահայր տ. Մեսրոպ արքեպ. Հապոզյանը և տ. Պողոս վրդ. Պողոսյանը։

Ժամը 3-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելում է Վիեննայի Մխիթարյան հայրերի վանքը։

Երեկոյան ժամը 7-ին Վեհափառ Հայրապետը հյուրանոցի իր հարկաբաժնում մասնավոր տեսակցություն է ունենում Կ. Պոլսի հայոց ամենապատիվ տ. Շնորհք պատրիարքի հետ։

Այնուհետև Ն. Ս. Օծությունը ընդունում է այցելությունը մի խումբ ազգայիններից, այդ թվում՝ տեր և տիկին Սարգիս-Աստղիկ Քյուրքչյանների (Լոնդոն), պրնք. Արամայիս և Ստեփան Սրապյան եղբայրների (Միլանո), պրն. Օննիկ Մանուկյանի և ընտանիքի (Գոմո), պրն. Կարապետ Ղազարյանի (Ժնև) և ուրիշների։

Ապրիլի 23-ին՝ երեքշաբթի.—Առավոտյան ժամը 11-ին տ. Շնորհք սրբազան պատրիարքը, հրաժեշտ առնելով հայոց Հայրապետից, մեկնում է Ժնև՝ ընկերակցությամբ դավանանակիր արժ. տ. Շնորհք քհն. Մուրադյանի և պրն. Կարապետ Ղազարյանի։

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը հյուրանոցում ընդունում է այցելությունը մի խումբ ստամբուլահայերի։

Ժամը 2-ին պրն. Սարգիս Կարապետյանը, ի պատիվ Հայոց Հայրապետի, ճաշկերույթ է տալիս Դոնաու-Դուրմ Դանուբյան աշտա-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ՓԱՂԱՔԱՊԵՏ ՋՈՆ Ֆ. ԼԻՆՏՋԻՆ
(Նյու-Յորք, Ուոլդորֆ Աստորիա Հյուրանոց, 1968 թ. ապրիլի 28)

բակում՝ շուրջ 50 պաշտոնական անձանց մասնակցությամբ։

Ժամը 7.30-ին Ավստրիայի կրթական նախարար պրն. Պիֆֆլ Պերչիչը, և պատիվ Հայոց Հայրապետի, հանուն Ավստրիական կառավարության պաշտոնական ճաշկերույթ է կազմակերպում Հայոց Հայրապետն ու պրն. կրթական նախարարը ճառեր են փոխանակում։

կաց խորանի առջև սեղի է ունենում հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ ի հիշատակ Ապրիլյան եղեռնի մեր նահատակների։

Երեկոյան ժամը 8-ին ս. Հռիփսիմե եկեղեցում, փակ խորանի առաջ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Ապրիլյան եղեռնի մեր բյուրավոր նահատակների հիշատակին։ Խոսք ունեցան տ. Մեսրոպ ծ.

Վեհափառ Հայրապետը և Ավստրիայի կարդինալ՝ Դրանց Գլուխները (Վիեննա 1968 թ. սեպտեմբեր 21)

Ապրիլի 24-ին՝ շաբաթ երեկոյան.—Առավոտյան ժամը 10-ին հյուրանոցում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը հունահայ թեմական խորհրդի անդամների՝ գլխավորությամբ գոկտ. Մանեսան Գյուտանիրյանի։

Ժամը 11-ին, Ապրիլյան եղեռնի տարելիցի առիթով, Վիեննայի հայոց ս. Հռիփսիմե նորոգ եկեղեցում պատարագ է մատուցում հայրապետական շքախմբի անդամ և ս. Էջմիածնի հոգևոր հեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը և քարոզում «Մի երկնչիր հոտ փոքրիկ» բնաբանով։

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ նահատակաց խորանի առջև սեղի է ունենում հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ ի հիշատակ Ապրիլյան եղեռնի մեր նահատակների։

Երեկոյան ժամը 8-ին ս. Հռիփսիմե եկեղեցում, փակ խորանի առաջ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Ապրիլյան եղեռնի մեր բյուրավոր նահատակների հիշատակին։ Խոսք ունեցան տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանը։ Վերջում Վեհափառ Հայրապետը օրհնում է հիշատակը մեր անմոռաց նահատակների։

Երեկոյան ժամը 10-ին Վիեննայի հայոց հոգևոր հովվությանն ու համայնքային վարչությունը Իմպերիալ հյուրանոցում հրաժեշտի ընթրիքով Հայոց Հայրապետին և շքախմբի անդամներին բարի ճանապարհ մաղթեցին։

Ն. Ա. Օծությունը օրհնում է ներկաներին և տալիս հայրապետական Իր պատգամը։

Վեհափառ Հայրապետը Բրյուսելում

Ապրիլի 25-ին՝ երեքշաբթի.—Վեհափառ Հայրապետը առավոտյան ժամը 11-ին հրա-

ժեշտ առնելով Վիեննայի հայ համայնքից, մեկնում է դեպի Նյու-Յորք «Պան-Ամերիկան» ինքնաթիռով։ Հայոց Հայրապետին և շքախմբի անդամներին Վիեննայից մինչև Նյու-Յորք ուղեկցում է Մայր Աթոռի բարեբար պր. Հերրի Պըրտը։

Դեպի Նյու-Յորք ճանապարհի վրա ինքնաթիռը մի պահ կանգ է առնում Բրյուսելի միջազգային օդանավակայանում, ուր հավաքված հայությունը Բելգիայի այլ քաղաքներից ևս, շուրջ 100 հոգի, ջերմորեն դիմավորում և ողջունում են Հայոց Հայրապետին՝ գլխավորությամբ գաղութային վարչության ատենապետ Վարդան Մուրդիկյանի։ Վեհափառ Հայրապետը ողջունում և օրհնում է բոլորին։

Նրանց եպս. Սիմոնյանը, հոգևորական դասը՝ եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանա հայրեր, ազգային-եկեղեցական իշխանության ներկայացուցիչներ, թեմական պատգամավորներ, բարեգործական, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց. կազմակերպությունների. հայ և օտար մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության ներկայացուցիչներ։

Հայոց Հայրապետի ժամանումը Նյու-Յորք ողջունում է նաև քաղաքապետի տեղակալ և պրոտոկոլի պետ Ճան Ս. Պալմիերը և քույր եկեղեցիների հոգևոր պետեր, հանրանվանությանց ներկայացուցիչներ։ Հայոց Հայրապետին արծաթյա ափսեի մեջ մատուցվում է ավանդական աղ ու հաց։



Համաժողովրդական խանդավառ դիմավորում (Նյու-Յորք, Քենեդիի օդանավակայան, 1968 թ. ապրիլի 25)

Վեհափառ Հայրապետը Նյու-Յորքում

Ապրիլի 25-ին՝ երեքշաբթի.—7-ժամյա խաղաղ թռիչքից հետո, երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ժամանում է Նյու-Յորքի Քենեդիի միջազգային օդանավակայանը, ուր դիմավորվում է բազմահազար ժողովրդի խանդավառ ցույցերով և բարի գալստյան ցնծալից արտահայտություններով։

Հայոց Հայրապետի ժամանումը ողջունում են ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ դեր. տ. Թորգոմ եպս. Մանուկյանը և արևմտյան թեմի առաջնորդ դեր. տ. Եղիշե եպս. Սիմոնյանը, հոգևորական դասը՝ եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանա հայրեր, ազգային-եկեղեցական իշխանության ներկայացուցիչներ, թեմական պատգամավորներ, բարեգործական, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց. կազմակերպությունների. հայ և օտար մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության ներկայացուցիչներ։

Հայոց Հայրապետի ժամանումը Նյու-Յորք ողջունում է նաև քաղաքապետի տեղակալ և պրոտոկոլի պետ Ճան Ս. Պալմիերը և քույր եկեղեցիների հոգևոր պետեր, հանրանվանությանց ներկայացուցիչներ։ Հայոց Հայրապետին արծաթյա ափսեի մեջ մատուցվում է ավանդական աղ ու հաց։

Օդանավակայանի ընդունելությանց սրահում տեղի է ունենում հայ և օտար մամուլի ու ռադիոյի ասուլիս, ուր խոսում է Վեհափառ Հայրապետը իր ԱՄՆ այցելության նպատակների մասին, և որից հետո Հայրապետական շքերթը ճանապարհ է ընկնում դեպի հայոց առաջնորդանիստ Մայր եկեղեցին՝ մոտոցիկլետավոր պատվո ոստիկանների ուղեկցությամբ։

Նորակերտ Մայր եկեղեցու ընդարձակ գավթում հավաքված ժողովրդական հոծ բազմությունը ջերմորեն դիմավորում է Հայոց Հայրապետին, որի օրհնաբեր ներկայու-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ՄԱԿ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՈՒ ՏԱՆԸ ԵՎ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

(Նյու-Յորք, ՄԱԿ-ի պալատ, 1968 թ. մայիսի 2)

թյունը խանդավառում է վտարանդի Իր զավակների սրտերը։

Առաջնորդարանում, փոքր հանգստից հետո, երեկոյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետը «Հրաշտփառ»-ով և եկեղեցական թափորով առաջնորդվում է Նորակառույց Մայր եկեղեցու պլխավոր մուտքի առաջ, ուր տեղի է ունենում բարի գալստյան արարողություն։

Հայոց Հայրապետը ողջունում և օրհնում է ներկա հոծ բազմությանը՝ բաշխելով ամենքին աստվածային և կենարար օրհնություն Մայր Աթոռ ս. Էջմիածնից։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Նյու-Յորքի մեծագույն հյուրանոցներից մեկը՝ Ուոլդորֆ Աստորիա հատուկ հարկաբաժին, 35-րդ հարկում։ Հյուրանոցի դեկավարությունը ի պատիվ Հայոց Հայրապետի դրոշազարդում է պանդոկի շքամուտքը։ Ամերիկյան դրոշի կողքին ծածանվում է նաև Մայր Աթոռ ս. Էջմիածնի հայրապետական դրոշակը՝ հայրապետական խորհրդանշաններով։

Նույն օրը տեղական մամուլը, ռադիոն ու հեռուստացույցը արձագանքում են Ամենայն Հայոց Հայրապետի այս պատմական այցը Իր հավատացյալ հոտին՝ շեշտելով նրա բացառիկ կարևորությունը։

Ապրիլի 26-ին՝ ուրբաթ.— Առավոտյան ժամը 10-ին առաջնորդարանի մեջ տեղի է ունենում հայ և օտար մամուլի ասուլիս։

Ժամը 12-ին առաջնորդարանում Հայոց Հայրապետին այցելեց ԱՄՆ-ի, Կանադայի և Հարավային Ամերիկայի հույն օրթոդոքս եկեղեցու պետ Նորին Սրբություն Յակոբոս արքեպիսկոպոսը իր շքախմբի հետ։

Երեկոյան ժամը 5-ին հյուրանոցի Իր հարկաբաժնում Վեհափառ Հայրապետն ընդունում է պաշտոնական այցելությունը Նյու-Յորքի քաղաքապետ Ջոն Ֆ. Լինդզի՝ ընկերակցությամբ դիվանագիտական հարաբերությունների վարիչ Բիլ Բեքթի։

Ժամը 6-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական մեծ շքախմբի ընկերակցությամբ փոխադարձ այցելություն է տալիս Նյու-Յորքի հույն օրթոդոքս եկեղեցուն և Յակոբոս արքեպիսկոպոսին։ Երկու հոգևոր պետերը և հոգևորականությունը միասին ադոթում են՝ ամրապնդելով հայ և հույն եկեղեցիների քրիստոնեական եղբայրությունն ու համագործակցությունը։ Արարողությանը ներկա են նաև հույն համայնքի հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներ, քույր եկեղեցիների հոգևոր պետեր, պետական անձնավորություններ, որոնց թվում նաև՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Կ. Բլեյկը։ Վերջում Հայոց Հայրապետի պատվին արվում է ընդունելություն։

Երեկոյան ժամը 8-ին հյուրանոցի հարկաբաժնում Նյու-Յորքի ծանոթ 14 աղդյիններ Հայոց Հայրապետի պատվին ընդունելություն են կազմակերպում, ուր Ամենայն Հայոց Հայրապետի սրտագին կոչով մեկ միլիոն դոլարի նվիրատվություն է կատարվում Նյու-Յորքի Հայոց Նորակառույց Մայր եկեղեցուն ի նպաստ։

Ապրիլի 27-ին՝ շաբաթ.— Առավոտյան ժամերին Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է մի շարք այցելություններ և ժամը 3-ին նախագահում է առաջնորդարանին առընթեր Հայկ և Ալիս Գավուքչյանների անվան սրահում Հայաստանյայց առաքելական եկեղեցու երիտասարդական միությանը, Իր բարձր պատվին կազմակերպված բովանդակալից ու ոգեցիկ հանդիսությանց, և օրհնելով միության հարյուրավոր երիտասարդ-աղջամուղիներին, տալիս է հայրապետական Իր օրհնությունն ու պատգամը։

Երեկոյան ժամը 5-ին, առաջնորդարանում, Հայոց Հայրապետին է այցելում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Կ. Բլեյկը։

Երեկոյան ժամը 7-ին Վեհափառ Հայրապետը նախագահում է Մայր եկեղեցու «ղոնբաշէք»-ի արարողությանը։

Ապրիլի 28-ին՝ կիրակի.—Հանդիսավոր իրադրության մեջ ու խանդավառ մթնոլորտում, եկեղեցական մեծաշուք հանդիսությամբ, առավոտյան ժամը 10-ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը կատարում է Նյու-Յորքի Հայոց Նորակառույց ս. Վարդան Մայր եկեղեցու օծումը՝ ինքնահայրությամբ Հայկ Գավուքչյանի, ի ներկայության պետական, եկեղեցական բարձրաստիճան դեսպանների և հոծ բազմության։ Այնուհետև Վեհափառ Հայրապետը նորաբաց Մայր եկեղեցու սուրբ սեղանի վրա մատուցում է անդրանիկ պատարագը և հոգեշունչ մի քարոզով շեշտում օրվա հոգևոր հանդիսության նշանակությունը, որպես հայ հավատքի հաղթանակն ու վկայությունը քաղաքակրթության այս մեծ ոստանի մեջ, որով արդարորեն հպարտանալու իրավունքը ունի Ամերիկայի հայ համայնքը։

Երեկոյան ժամը 8-ին Ուոլդորֆ Աստորիա հյուրանոցի շքեղ սրահում Հայոց Հայրապետի պատվին տրվում է համահայկական մեծ ճաշկերույթ, որին մասնակցում էին շուրջ 1800 հրավիրյալներ։ Սեղանը շնորհավորում է Հ. Բ. Ը. միության նախագահ պ. Ալեք Մանուկյանը։

Ապրիլի 29-ին՝ երկուշաբթի.— Առավոտ-

յան ժամը 9.30-ին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Իր շքախմբի մնայուն անդամների, այցելում է ՄԱԿ-ի մոտ սովետական միության մշտական ներկայացուցիչ Յակով Ա. Մալեկին։

Ժամը 1-ին առաջնորդարանի մեջ, Վարդանանց Ասպետների եղբայրակցության դիվանը Հայոց Հայրապետի պատվին ընդունելություն է կազմակերպում, որտեղ ողջույնի խոսքով հանդես է գալիս «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը։ Վեհափառ Հայրապետը Իր պատգամը տալով օրհնում է եղբայրակցությանը։

Երեկոյան ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական մեծ շքախմբով այցելում է Նյու-Յորքի կաթոլիկների Սենտ-Պատրիկ մեծ ու փառավոր Մայր տաճարը, ուր ընդունվում է հանդիսավորապես Նյու-Յորքի կաթոլիկ արքեպ. Տերենս Քուքի կողմից և առաջնորդվում եկեղեցական թափորով Մայր տաճար, ուր տեղի է ունենում էկումենիկ բարի գալստյան կրոնական արտառուլ արարողություն։ Հայոց Հայրապետն ու Տերենս Քուք արքեպիսկոպոսը ողջույնի և բարի գալստյան խոսքեր են փոխանակում։ Կաթոլիկ էկումենիկ հանձնախմբի շեկավար Ջեյմս Ռիդնի եպիսկոպոսը արեշատության մասնավոր բարեմաղթություններ է կատարում հայ և կաթոլիկ եկեղեցիների համագործակցության, Պավղոս Զ պապի և Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի կենաց, ինչպես նաև ԱՄՆ-ի, նրա նախագահի, հայ ժողովրդի բարօրության և աշխարհի խաղաղության համար։

Ապրիլի 30-ին՝ երեքշաբթի.—Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական մեծ շքախմբով այցելում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Ազգային խորհրդի կենտրոնի և եկեղեցիների համաշխարհային խորհրդի ամերիկյան մասնաճյուղի պալատը, ուր ընդունվում է հարգալից հանդիսությամբ և առաջնորդվում կենտրոնի աղոթասրահը և ապա տեսակցություն է ունենում խորհրդի նախագահ դոկտ. Էդվին Էսբրի հետ, որը Հայոց Հայրապետի պատվին ընդունելություն է կազմակերպում, որին ներկա են լինում քույր եկեղեցիների ներկայացուցիչներ։ Վեհափառ Հայրապետը այնուհետև նախագահի առաջնորդությամբ այցելում է պալատի հարկաբաժինները։

Մայիսի 1-ին՝ չորեքշաբթի.—Առավոտյան ժամը 11-ին, առաջնորդարանում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ և օրհնությամբ, բացվում է ամերիկահայ հոգևորականության տարեկան համագումարը, ուր բովանդակալից և ընդարձակ ճառով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը։ Համագումարին մասնակցում է 60 հոգի։

Ժամը 1-ին Վեհափառ Հայրապետը նախագահում է առաջնորդարանում՝ հոգևորականության ճաշին։ Կեսօրից հետո համագումարը շարունակում է իր աշխատանքները։

Մայիսի 2-ին՝ հինգշաբթի.—Այսօր առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը Նյու-Յորքում, ՄԱԿ-ի պալատում, պաշտոնական այցելություն է տալիս ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Ու Տանին՝ ընկերակցությամբ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի։

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի և Հայոց Հայրապետի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, սրտագին մթնոլորտում։

Այնուհետև, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը ՄԱԿ-ի ընդունելությանց սրահում Նախագահում է ՄԱԿ-ի մոտ 17 երկրների մշտական ներկայացուցիչ-դեսպանների պատվին տրված ճաշկերույթին, ուր բովանդակալից գրավոր մի ուղերձով ողջունում է պետությունների ներկայացուցիչներին և աղոթում աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարօրության համար։

Այնուհետև, Վեհափառ Հայրապետը ժամը 3-ին հանդիպում է ունենում ՄԱԿ-ի հայ պաշտոնեության հետ, որոնք սրտագին ողջունում են Հայոց Հայրապետին։ Պենոն Վահեն, հանուն հայ պաշտոնեության, ողջունում է Հայոց Հայրապետի շնորհարեր ներկայությունը՝ որդիական սեր հայտնելով դեպի Հայոց Հայրապետն ու հայրենիքը։

Ժամը 4-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է ՄԱԿ-ին առընթեր եկեղեցիների խորհրդի կենտրոնը, ուր նրա պատվին թեյասեղան է տրվում։

Ժամը 8-ին առաջնորդարանում կազմակերպվում է հայ մամուլի հարցազրույց, ուր Վեհափառ Հայրապետը հանդամանորեն խոսում է Մայր Աթոռ ս. Էջմիածնի միաբանության, Էջմիածնի հոգևոր հեմարանի, «Էջմիածին» ամսագրի, ներքին թեմերի գործունեության և սփյուռքի ազգային-եկեղեցական կյանքի մի շարք հարցերի շուրջ։

Այնուհետև, Վեհափառ Հայրապետը ժամը 11-ին Նյու-Յորքի Հայոց նորակառույց ս. Վարդան Մայր եկեղեցում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և օրհնությամբ, բացվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների արևմտյան թեմի պատգամավորական ժողովը, ուր 150 եկեղեցական և աշխարհական պատգամավորներ ներկայացնում են 43 կրոնական-եկեղեցական հայ համայնքներ։

Պատգամավորական ժողովի հանդիսավոր բացումից հետո, Վեհափառ Հայրապետը

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ԱՄՆ-Ի ՀՈՒՅՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ Տ. ԵԱԳՈՊՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԵՎ Տ. ԵՂԻՇԵ ԵՊԻՍ. ՍԻՄՈՆՅԱՆԸ

(Նյու-Յորք, Հայոց առաջնորդարան, 1988 թ. ապրիլի 28)



Հայոց Հայրապետի պատվին՝ բարի գալստյան ընդունելություն, Ուոլդորֆ Աստորիա հյուրանոցում (Նյու- Յորք, 1968 թ. ապրիլի 28)

գրավոր բովանդակալից ճառով ողջունում է պատգամավորական ժողովին և հաջողություն մաղթում նրա աշխատանքներին։

Ժամը 2-ին Վեհափառ Հայրապետը նախագահում է իր պատվին տրված պատգամավորների ճաշկերույթին։

Ժամը 9-ին հայրապետական շքախմբի անդամ և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը առաջնորդարանի Հայկ և Ալիս Գավուքչյան սրահում քանախոսում է «Հայ եկեղեցին և հայ մշակույթը» թեմայի շուրջ։

Մայիսի 4-ին՝ շաբաթ.—Պատգամավորական ժողովը շարունակում և ավարտում է իր աշխատանքները։

Առավոտյան ժամերին Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է բազում այցելություններ։

Երեկոյան ժամը 8-ին Վեհափառ Հայրապետը նախագահում է առաջնորդարանում՝ պատգամավորների պատվին տրված ճաշկերույթին։

Մայիսի 5-ին՝ կիրակի.—Վեհափառ Հայրապետը հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում և քարոզում ս. Վարդան Նորոց Մայր եկեղեցում։

Ժամը 4-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդարանի մեծ սրահում նախագահում է իր պատվին տրված համերգին։

Ժամը 7-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը հանդիպում է ունենում առանձին մտավորականների հետ։

Մայիսի 6-ին՝ երկուշաբթի.—Առավոտյան ժամը 11-ին հյուրանոցի իր հարկաբաժնում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Եգիպտոսի, Հորդանանի և Սիրիայի դեսպանների և Երուսաղեմի նախկին քաղաքապետի։

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական մեծ շքախմբով այցելում է Նյու-Յորքի եպիսկոպոսական եկեղեցու պետ դոկտ. Ջոն Հայնզ արքեպիսկոպոսին՝ ուղեկցությամբ տ. Աքեյֆ եպիսկոպոսի։ Հայոց Հայրապետի և եպիսկոպոսական եկեղեցու պետի միջև տեղի է ունենում սրտագին զրույց՝ ջերմ մթնոլորտում։

Երեկոյան ժամը 6-ին Հ. Բ. Ը. միության կենտրոնական վարչությունը իր սրահում, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպում է մեծ ընդունելություն, որին ներկա են լինում միության անդամներն ու ազգային դեմքեր։ Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը գրավոր դեղեցիկ ճառով ողջունում են ընդհանուր քարտուղար պրն. Գրիգոր Կիրակոսյանը ու օր. Վերժինե Էքոնոմյանը։ Ողջույնի խոսք է ասում նաև «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը՝ վեր հանելով Հ. Բ. Ը. միության կատարած նախախնամական դերը հայ կյանքում։

Վեհափառ Հայրապետը իր օրհնության խոսքում ոգեկոչում է հիշատակը Հ. Բ. Ը. միության մեծանուն հիմնադիրներին և հայրապետական իր բարձր գնահատությանն է արժանացնում միության կրթական, եկեղեցանվեր ու ազգօգուտ ծառայությունները և օրհնում միության բոլոր անդամներին և մասնաճյուղերին։

Մայիսի 7-ին՝ երեքշաբթի.—Առավոտյան ժամերին Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է այցելությունը Նյու-Յորքի հայ ավետարանական համայնքի պետերի։

Առավոտյան ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում հանդիպում է ունենում ամերիկահայ մտավորականության հետ։ Առաջնորդարանի գիվանապետ և գրող Սուրեն Մանվելյանը Հայոց Հայրապետին է ներկայացնում մեկ առ մեկ ներկա մտավորականներից յուրաքանչյուրին՝ խոսելով նաև անցնող 8 տարիների ընթացքում նրանց գրական կենսագրության և մատենագրական վաստակի մասին։ Ապա սիրված գրող Բենիամին Նուրիկյանը գրավոր ու բովանդակալից մի ուղերձով ողջունում է Հայոց Հայրապետին, հանուն ամերիկահայ մտավորականության։

Այնուհետև խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, ողջունում ներկայությունը ամերիկահայ մտավորականների, որոնք դրժվարին պայմաններում պատվով են կատարում իրենց պարտքը հայ մշակույթի հանդեպ, և հորդորում է սերտ կապ պահպանել հայրենի մտավորականության հետ, որը նույնպես նորանոր ու մնայուն գրական վաստակներով հարստացնում է հայ մշակույթի գարավոր գանձարանը։

Ժամը 6-ին, հյուրանոցի իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելություններ Նյու-Յորքի հրեական համայնքի ղեկավոր վեց ռաբբիներ։

Ժամը 7-ին, առաջնորդարանի մեջ, Վեհափառ Հայրապետը հանդիպում է ունենում ռումինահայերի, իր նախկին ժողովրդի աշակերտ-աշակերտուհիների հետ, որոնք մեծ թվով, շուրջ 400 հոգի, եկել էին ողջունելու մասնավոր ջերմությամբ և հպարտությամբ երբեմնի իրենց առաջնորդին, ուսուցչին և այժմյան Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետին։

Երեկոյան ժամը 10-ին, հյուրանոցի իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Անթիլիասի Աթոռի միաբան տ. Հրանդ արքեպ. Խալատրյա-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՆՅՈՒ-ՅՈՐՔԻ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ԿԱՐԴԻՆԱԼ ՏԵՐԵՆՍ ՔՈՒՔԸ ՀԱՅՈՑ Ս. ՎԱՐԴԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(Նյու-Յորք, 1968 թ. ապրիլի 28)

ների՝ ընկերակցությամբ տ. Տաքեն քհն. Գաբրսայանի, տ. Մեսրոպ քհն. Թաշճյանի, պրն. Եղիշե Մելիքյանի, պրն. Մուշեղ Հարությունյանի։

Վեհափառ Հայրապետը Ֆիլադելֆիայում

Մայիսի 8-ին՝ շաբաթ.—Առավոտյան ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ տ. Թորգոմ արքեպիսկոպոսի, իր մեկնող շքախմբի անդամների, տ. Գարեգին եպս. Գաղանճյանի, Գուին-Մերի մասնավոր դեսպանով հովվապետական այցելության է մեկնում Ֆիլադելֆիա, որի հոգևոր հովիվ տ. Զավեն ծ. վրդ. Արզումանյանը, իր համայնքի 30 անդամների ուղեկցությամբ, եկել էր Նյու-Յորք՝ Հայոց Հայրապետին առաջնորդելու Ֆիլադելֆիա։

Կայարանում ժողովրդի խանդավառ ցույցերով դիմավորվում է Հայոց Հայրապետը և առաջնորդվում ս. Երրորդություն եկեղեցի, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով, ողջունում և օրհնում իր հոգևոր զավակներին։ Այնուհետև առաջնորդվում է Բելվիու Սարատ Ֆորդ հյուրանոցը, ուր երեկոյան իր պատվին կազմակերպվում է մեծ ընդունելություն՝ շուրջ 800 հոգու մասնակցությամբ։ Քաղաքապետ Ռեյմս Հ. Տատը հանդիսավոր իրադրության մեջ Հայոց Հայրապետին է հանձնում քաղաքի բանալին։ Վեհափառ Հայրապետը ողջունելով քաղաքապետին, մաղթում է, որ եղբայրության ոգին տիրական դառնա աշխարհի բոլոր քաղաքների մեջ, և ժողովուրդներն ու ազգերը ապրեն խաղաղության, բարեկամության պայմաններում։

Վեհափառ Հայրապետը Վաշինգտոնում

Մայիսի 9-ին, հինգշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով և մասնավոր դեսպանով ժամանում է Վաշինգտոն, առավոտյան ժամը 10.30-ին, և հանդիսավորապես առաջնորդվում է Կապիտոլ, ուր ներկայացուցչական ժողովը բացվում է Հայոց Հայրապետի աղոթքով։ Երեք սենատորներ դեղեցիկ ճառով ողջունում են Հայոց Հայրապետի օրհնաբեր ներկայությունը, որպես օրհնություն և քարիք Վաշինգտոնի համար։

Ապա տեղի է ունենում մամուլի ասուլիս Կապիտոլի ընդունելության դահլիճում։

Այնուհետև վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Շորհեմ արդիական հյուրանոցը՝ Իր շքախմբով։

Հեսմիյօրեի ժամը 3-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Վաշինգտոնի ս. Պողոս-Պետրոս Մայր եկեղեցին և ծաղկեպսակ է դնում ԱՄՆ-ի նախկին նախագահ Ռոյսրս Վիլսոնի դերեզմանի վրա։ Կատարվում է նաև հոգեհանդստյան մասնավոր պաշտոն հայ ժողովրդի բարեկամ, ամերիկյան նախագահի հիշատակին։

Ժամը 6-ին Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք է գործում Վաշինգտոնի Հայոց ս. Աստվածածին եկեղեցին, ողջունում և օրհնում Իր հոգևոր զավակներին։

Երեկոյան ժամը 8-ին, Շորհեմ հյուրանոցի Պալատիում դահլիճում, ի պատիվ Հայոց Հայրապետի, տրվում է մեծ ճաշկերույթ՝ մասնակցությամբ շուրջ 500 հայ և ոչ հայ հրավիրյալների։

Մայիսի 10-ին՝ ուրբաթ.—Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Վաշինգտոնում Արլինգտոնի «Անծանոթ զինվորի» հուշարձանը, ուր ծաղկեպսակ է դնում և «Հոգուց» է արտասանում։ Շրախմբի անդամները վեհ ու ներդաշնակ երգում են «Քահանայք և ժողովուրդք» հանդիսության շարականը։ Հայոց Հայրապետին ընծայվում են զինվորական պատիվներ։

Ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը, Իր մեծ շքախմբով, այցելում է Ամերիկայի եղերաբախտ նախագահ Ճոն Ֆ. Քենեդիի դերեզմանը Արլինգտոնի մեջ, ծաղկեպսակ է դնում նրա շիրմի վրա, որի առաջ վառվում է հավիտենական կրակը։ Այնուհետև տեղի է ունենում հանդիսության մասնավոր արարողություն, որից հետո Հայոց Հայրապետը «Հոգուց» է արտասանում մեծ ամերիկացու հիշատակին։

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս ԱՄՆ-ի պետական քարտուղարի տեղակալ Նիկոլա Քաթենբախին, ուր ընդունվում է մեծարանքով։ Հայոց Հայրապետը և պետական քարտուղարի տեղակալը ճառեր են փոխանակում։

Ժամը 3-ին Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Վաշինգտոնից և, այցելելուց հետո Անարատ Հղության մեծ ու փառավոր տաճարը, մեկնում է Դետրոյտ։

Վեհափառ Հայրապետը Դետրոյտում

Մայիսի 10-ին՝ ուրբաթ.—Երեկոյան ժամը 6-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբի ուղեկցությամբ ժամանում է Դետրոյտ, ուր արժանանում է ժողովրդական խանդավառ ու սրտառուչ ընդունելության։

Հայոց Հայրապետը հանդիսավորությամբ առաջնորդվում է Դետրոյտի Հայոց ս. Հովհաննես դեղեցիկ եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով և օրհնում խուռներամ բազմությանը՝ բաշխելով բոլորին

Վեհափառ Հայրապետը ամերիկահայ հոգևորականության համագումարի պատվիրակների հետ (Նյու-Յորք, 1968 թ. մայիսի 1)

հոգևոր միխիթարություն և ողջույն Մայր Աթոռ ս. Էջմիածնից։

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Բոնշարդրեն արդիական հյուրանոցը։

Մայիսի 11-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Դետրոյտի հայոց եկեղեցու հովվատունը, ուր դիմավորվում է մանկապարտեզի աշակերտների կողմից՝ ծաղիկներով և դրոշակներով։ Մանուկները իրենց երգերով և արտասանություններով անչափ ուրախացնում են Հայոց Հայրապետի սիրտը։

Ապա հովվատան ընդունարանի մեջ Հայոց Հայրապետին են այցելում քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, որոնք ներկա են լինում նաև Հայոց Հայրապետի պատվին արված էկումենիկ սիրո ճաշին։

Ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը նախագահում է եկեղեցուն առընթեր Մշակութային սրահում իր պատվին կազմակերպված երիտասարդական հավաքին ու հանդիսությանը, ուր ողջունում և օրհնում է բոլորին և իր հայրապետական մասնավոր պատգամը տալիս երիտասարդությանը՝ հավատարիմ մնալու մեր ոգեկոչ, մշակութային արժեքներին ու ազգային ավանդություններին, ապրելու համար որպես հայ, որպես ազգասեր ու հույսը հայ ժողովրդի։

Այնուհետև Վեհափառ Հայրապետի ներկայությամբ և օրհնությամբ կատարվում է հայ վետերանների նորակառույց շենքի բացումը։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը նախագահում է ս. Հովհաննես եկեղեցում կիրակնամուտի ժամերգությանը։

Մայիսի 12-ին՝ կիրակի.—Վեհափառ Հայրապետը հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Դետրոյտի հայոց ս. Հովհաննես եկեղեցում և կատարում օծումը նորակիրառ ս. Սեղանի և Բանին կենաց բարոյությամբ միխիթարում հավատացյալներին։

Երեկոյան ժամը 6-ին Մշակութային սրահում տրվում է հրաժեշտի ճաշկերույթ՝ մասնակցությամբ 800 հրավիրյալների։ Սեղանը շնորհալիորեն դեկավարում է Հ. Բ. Ը. միության նախագահ պրն. Այեր Մանուկյանը։ Վեհափառ Հայրապետը օրհնության և շնորհակալության ջերմ խոսք է ասում։

Մայիսի 13-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը իր շրախմբով մեկնում է Կալիֆոռնիա, Սան-Ֆրանցիսկո։

Վեհափառ Հայրապետը Սան-Ֆրանցիսկոյում

Մայիսի 13-ին՝ երկուշաբթի.—Առավոտյան ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը ինքնաթիռով մեկնում է հովվապետական այցելության Ամն-ի հայոց արեմտյան՝ Կալիֆոռնիայի թեմը՝ նախ Սան-Ֆրանցիսկո քաղաքը։

Ն. Ս. Օծությանը ուղեկցում են տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը և շքախմբի մնայուն անդամները։

Օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորում են Կալիֆոռնիայի թեմի առաջնորդ ա. Եպիշե եպս. Սիմոնյանը, հոգևոր հովիվներ տ. Տիրայր, տ. Արիս, ա. Լևոն վարդապետները, քահանա հայրեր, համայնքային և ընդունելության հանձնաժողովի անդամներ և հավատացյալների հոծ բազմություն։

Օրհնության ի բարի գալստյան խոսքերից հետո, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մարկ Հոպկինս հյուրանոցը։

Երեկոյան ժամը 8-ին Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք է գործում Սան-Ֆրանցիսկոյի Հայոց ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցին, ուր ողջունում և օրհնում է հոծ բազմությանը հավատացյալ իր զավակներին։

Մայիսի 14-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը հյուրանոցի հարկաբաժնում թեմական առաջնորդ տ. Եղիշե եպիսկոպոսի դիմավորությամբ ընդունում է Կալիֆոռնիայի ողջ թեմի հոգևոր հովիվների այցելությունը։

Ժամը 1-ին Վեհափառ Հայրապետին սեղանակից են լինում՝ առաջնորդ սրբազանը, հոգևոր հովիվներն ու թեմի դանազան վարչությանց, ծխական խորհուրդների դեկավար անդամներ, հարանվանությանց ներկայացուցիչներ, շուրջ 80 հոգի։

Երեկոյան ժամը 8-ին Օրլենդ քաղաքի «Կայզեր սենտրալ» սրահում, ի պատիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, տրվում է մեծ ճաշկերույթ՝ մասնակցությամբ հայ ի օտար 500 հրավիրյալների։

Մայիսի 15-ին՝ չորեքշաբթի.—Վեհափառ Հայրապետը ամբողջ օրը հյուրանոցի հարկաբաժնում ընդունում է մի շարք պաշտոնական այցելություններ և զրաղվում է համայնքի եկեղեցական-մշակութային հարցերով։

Մայիսի 16-ին՝ հինգշաբթի.—Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը, տ. Թորգոմ, տ. Եղիշե առաջնորդ սրբազանների և իր մնայուն շրջախմբի անդամների ուղեկցությամբ, ինքնաթիռով մեկնում է Ֆրեզնո՝ Կալիֆոռնիայի հայության մայրաքաղաքը։

Seminarii Theologici Generalis

ԱՄՆ-ի եպիսկոպոսական եկեղեցու աստվածաբանական ակադեմիայի աստվածաբանության պատվո տիտղոսի պաշտոնագիրը

Վեհափառ Հայրապետը Ֆրեզնոյում

Օդանավակայանի մեջ հավաքված բազմությունը չերմորեն ողջունում է իր սիրելի հոր և հայրապետի շնորհաբեր ժամանումը։ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է հատկապես պատրաստված ամբիոն՝ ողջունելու և օրհնելու Իր զավակներին։

Այնուհետև ինքնաշարժերի և ոստիկանների պատվո ջոկատի ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ֆրեզնոյի հայոց ս. Պողոս եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով, օրհնում ներկա հոծ բազմությանը, որը սրտատրոփ ու ուրախության արցունքներով լսում է Հայոց Հայրապետի խոսքը։

Ն. Ս. Օծությունը առաջնորդվում է այնուհետև «Դեպ Ուեպ» արդիական հյուրանոցը, ուր ժամը 7-ին տեր և տիկին Մարտիրոս Փիրոյանները մասնավոր ճաշկերույթով պատվում են Հայոց Հայրապետին և շքախմբի բոլոր անդամներին։

Մայիսի 17-ին՝ ուրբաթ.—*Վեհափառ Հայրապետը հյուրանոցի իր հարկաբաժնում առավոտյան ժամերին ընդունում է բազում այցելություններ, այդ թվում նաև «Ֆրեզնայի ռադիո հայկական ժամ»-ի դեկավարությանը։*

Երեկոյան ժամը 7-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Ֆրեզնոյի «Հայ տարեցներու տուն-ծերանոց»-ը, ուր օրհնում և մխիթարում է զթության այդ հարկի տակ իրենց կյանքը խաղաղության և ապահովության մեջ անցկացնող հայ մամիկներին և պապիկներին։

Ժամը 8-ին Ֆրեզնոյի Հասիենդա հյուրանոցում Հայոց Հայրապետի բարձր պատվին տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում են ավելի քան 800 հրավիրյալներ։ Ֆրեզնոյի քաղաքապետ Ֆլոյտ Հայդը Հայոց Հայրապետին է հանձնում քաղաքի բանալին և նրան հռչակում պատվավոր քաղաքացի Ֆրեզնոյի։

Բարի գալստյան պաշտոնական ողջույնի գիր (Լոս-Անջելոս, մայիս 18)

Վեհափառ Հայրապետը Լոս-Անջելոսում

Մայիսի 18-ին՝ շաբաթ.—*Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը տ. Թորգոմ, տ. Եղիշե սրբազանների և շքախմբի մնայուն անդամների ուղեկցությամբ ինքնաթիռով մեկնում է Լոս-Անջելոս և ժո-*

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ (Նյու-Յորք, 1968 թ. մայիսի 9)

դովրդական խանդավառ ցույցերով առաջնորդվում է Մոնթե-Բելլո քաղաքը՝ այցելելու և իր օրհնությունը տալու Ապրիլյան եղեռնի նահատակաց հուշարձանին։ Մոնթե-Բելլոյի քաղաքապետ Կեյվիտ Ջիմմերը դիմավորում է Հայոց Հայրապետին և առաջնորդում նրան դեպի Գեղասար, որի բարձունքի վրա կանգնած է նահատակաց հուշարձանը։ Տեղի է ունենում ծովածավալ բազմության ներկայության հանդիսավոր հավաք, ուր քաղաքապետը հանդես է գալիս ջերմ ճառով և Հայոց Հայրապետին է հանձնում քաղաքի բանալին։ Ճառով հանդես են գալիս նաև հուշարձանի շինության անդամ Հակոբ Մանդիկյանը, Մխիթար Մինասյանը և դոկտոր Ռ. Հովհաննեսյանը։ Այնուհետև Վեհափառ Հայրապետը օրհնության և ողջույնի իր խոսքի մեջ ոգեշնչում է հիշատակի Ապրիլյան եղեռնի նահատակների և 1918 թվականի Մայիսի 25—26-ին Սարդարապատի հերոսամարտի հիսնամյակը։ Ապա Ն. Ս. Օծության հանդիսավորությամբ կատարվում է հոգեհանգստյան մասնավոր կարգ հուշարձանի առաջ, ուր դեռեղվում են Մայր Աթոռ ս. էջմիածնից բերված երկու խաչքարերը։

Ապա Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է «Սենյուրի պլաժա» հյուրանոցը, ուր երեկոյան ժամը 8-ին Նրա բարձր պատվին կազմակերպվում է համայնքային մեծ ճաշկերույթ, 1000 հոգու մասնակցությամբ։

Մայիսի 19-ին՝ կիրակի.—Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը կատարում է Լոս-Անջելոսի ս. Հակոբ եկեղեցու հոգի օրհնության կարգը և այս ուրախ առիթով նվիրում ս. էջմիածնից բերված մի խաչքար։

Ժամը 12-ին Ն. Ս. Օծությունը հանդիսավոր ս. պատարագ է մատուցում և քարոզում Լոս-Անջելոսի եպիսկոպոսական Սենտ-Պոլ Մայր եկեղեցում։

Մայիսի 20-ին՝ երկուշաբթի.—Առավոտյան ժամերին հյուրանոցի իր հարկաբաժնում Վեհափառ Հայրապետը ընդունում է բազում այցելություններ, այդ թվում նաև մեծանուն գրող Ջավեն Սյուրմելյանին։

Ժամը 11-ին Ն. Ս. Օծությունը իր շքախմբով այցելում է Ֆերահյան հայկական միջնակարգ վարժարանը, ուր նրա բարձր պատվին տեղի է ունենում աշակերտական հանդիսություն և ապա հյուրասիրություն։

Ն. Ս. Օծությունը հայրապետական իր բարձր գնահատությանը արժանացնելով կրթական այս հաստատության մեջ կատարված գործը օրհնում է ղեկավարությանը, ուսուցչական կազմին ու աշակերտությանը, նոր և մնայուն հաջողություններ ցանկանալով նրանց կրթական-մանկավարժական և դաստիարակչական բնագավառում։

Ժամը 1-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Վալիի ս. Պետրոս եկեղեցին, ուր ս. պատարագ է մատուցում հայրապետական շքախմբի անդամ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը և Բանին կենաց քարոզությամբ մխիթարում հավատացյալներին։

Երեկոյան ժամը 8-ին հյուրանոցի ընդունելությանց դահլիճում Վեհափառ Հայրապետը հանդիպում է ունենում ռումինահայերի հետ։ Հանդիպմանը ներկա են լինում շուրջ 350 ռումինահայեր։

Մայիսի 21-ին՝ երեքշաբթի.—Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Բասադինայի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ուր ս. պատարագ է մատուցում և քարոզում հայրապետական շրջախմբի անդամ տ. Ներսես ծ. վրդ. Պոլատյանը։

Ժամը 1-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Մոնթե-Բելլո քաղաքում, Բիվերլի Հիլվանդանոցում, խնամվող ազգային հերոս Միսակ Թորլաքյանին։

Ժամը 2-ին այցելում է Մեսրոպյան մանկապարտեզ և նախակրթարան, ուր հավաքված ծնողները աշակերտության հետ միասին, խանդավառորեն ողջունում են Հայոց Հայրապետին։ Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետին է հանձնվում քաղաքի բանալին։ Աշակերտության ուղղյալ հայրենասիրական ճառով հանդես է գալիս հայոց ազգագրական շրջախմբի անդամ, էջմիածնի հոգևոր Ճեմարանի դասախոս Արթուն Հատիտյանը։

Ն. Ս. Օծությունը օրհնում է այս կրթական հարկի տակ կատարված մշակութային-դաստիարակչական շնորհակալ աշխատանքը՝ սրտագին բարեմաղթություններով։

Հայոց Հայրապետի պատվին տրվում է թեյասեղան։

Ժամը 4-ին, հետ միջօրեի, Վեհափառ Հայրապետը այցելում է Լոս-Անջելոսի հայոց ս. Սարգիս եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով՝ օրհնելով և ողջունելով ներկա հավատացյալներին։

Հայոց Հայրապետի պատվին կազմակերպվում է ընդունելություն։

Ժամը 6-ին Լոս-Անջելոսի հայոց առաջնորդարանում ողջերթի ճաշկերույթ է տրվում ի պատիվ Հայոց Հայրապետի, որին ներկա են լինում շուրջ 50 հրավիրյալներ, հոգևորականներ, թեմական ժողովի անդամներ, եկեղեցական հոգաբարձությանց ներկայացուցիչներ և հայրապետական ընդունելության հանձնաժողովի անդամներ։

Հայոց Հայրապետը լավագույն ու անմոռանալի տպավորություններով հրաժեշտ է տալիս Կալիֆոռնիայի թեմի իր զավակներից։

Վեհափառ Հայրապետը Չիկագոյում

Մայիսի 22-ին՝ շաբաթ.— Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբի ուղեկցությամբ, ինքնաթիռով, մեկնում է Չիկագոյի և Միդլ-Ուեստի 8 եկեղեցական համայնքներին և ողջ հայությանը հս անձամբ տանելու օրհնություն և ողջույն։ Միդվեյ օդանավակայանում խանդավառ ու սրտագին դիմավորություն, կողովներով ծաղիկ ու ժպիտ, սպիտակ ազավնիների թռիչք, սպա մամուլի ասուլիս։ Այնուհետև «Հրաշափառ»-ով Հայոց Հայրապետը մուտք է գործում Չիկագոյի հայոց ս. Հովակիմ և Աննա եկեղեցին, օրհնում և իր պատգամը տալիս ներկա հավատացյալներին։

Հայոց Հայրապետը իր շքախմբով առաջնորդվում է Շերիտոն գեղեցիկ պանդոկը, ուր փոքր դադարից հետո, երեկոյան ժամը 8-ին, հյուրանոցի սրահներից մեկում հանդիպում է ունենում Չիկագոյի և Միդլ-Ուեստի հայ երիտասարդական կազմակերպության անդամների հետ, ուր ողջունելով հայ եկեղեցու և հայ ժողովրդի ապագա հույսը հանդիսացող երիտասարդությանը, Հայոց Հայրապետը շեշտում է, որ երիտասարդությունը ուժ է, մեր ապագան ու հույսը, և թելադրում է սերտել ու սիրել հայոց պատմությունը, հայ եկեղեցու դավանությունը, հայ մշակույթի գանձերը և ապրել հպարտությամբ՝ որպես հայ, որպես քրիստոնյա հավաքականություն։

Մայիսի 23-ին՝ երեքշաբթի.— Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը իր մեծ շրախմբով այցելում է Չիկագո քաղաքի բաղաքապետ Ռիչարդ Ճոն Դալեին։ Հայոց Հայրապետն ու պրն. քաղաքապետը ողջույնի և բարի դալստյան ճառեր են փոխանակում։ Հայոց Հայրապետին պրն. քաղաքագլուխը հանձնում է քաղաքի մեդալիոնը, որի վրա գրված է. «Հայոց մեծ կրոնապետին և հանուն խաղաղության պայքարողին»։ Ն. Ս. Օծությունը Չիկագոյի պատվո բնատարանի է հռչակվում։

Ժամը 12-ին Շերիտն հյուրանոցի մեջ Չիկագոյի ծանոթ ազգայիններից և Մայր Աթոռի բարեբար պրն. Ուոլտեր Վարդանը Հտոդ Հայրապետի պատվին ընդունելություն է կազմակերպում։

Երեկոյան ժամը 8-ին, հյուրանոցի շքեղ սրահներից մեկում, Չիկագոյի և Միդլ-Ուեստի հայությունը մեծ ճաշկերությամբ մեծարում է Հայոց Հայրապետին։

Ընդունելությանը ներկա են լինում պետական ու եկեղեցական բարձրաստիճան հյուրեր և այլ 800 հայ հրավիրյալներ։

Մայիսի 24-ին՝ ուրբաթ.— Առավոտյան ժամերին Վեհափառ Հայրապետը ծանոթանում է Չիկագոյի տեսարժան վայրերին ու պատմական հուշարձաններին։ Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելություններ հայտնի գրականագետ և վիրաբույժ դոկտ. Հ. Քելեկյանի։

Երեկոյան հյուրանոցում Հայոց Հայրապետին սեղանակից են լինում Չիկագոյի և Միդլ-Ուեստի ութ եկեղեցական համայնքների հոգևոր հովիվները, ծխական խորհրդի և հայրապետական ընդունելության հանձնաժողովի անդամները։

Վեհափառ Հայրապետը Բոստոնում

Մայիսի 25-ին՝ շաբաթ.— Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առնելով Չիկագոյից ինքնաթիռով մեկնում է Բոստոն, իր շքախմբի ընկերակցությամբ՝ իր օրհնությունն ու ողջույնը տալու Նյու-Ինգլենդի երեք շրջանների տասը եկեղեցական համայնքների իր հավատացյալ զավակներին։ Լոկքն օդանավակայանում խանդավառ ու բացառիկ ջերմությամբ համաժողովրդական ընդունելություն և դիմավորում։ «Հրաշափառ»-ով մուտք է գործում Վեհափառ Հայրապետը Ուոթրթաուընի հայոց ս. Հակոբ եկեղեցին, ու ողջունում և օրհնում է ծովածավալ բազմությանը, իր հոգևոր զավակներին և ապա նախագահում եկեղեցուն առընթեր Մշակութային սրահում՝ Բոստոնի և Նյու-Ինգլենդի հայ երիտասարդական կազմակերպության մեծ հավաքույթին, ուր օրհնում է ներկաներին։

Ապա Ն. Ս. Օծությունը առաջնորդվում է Ստաղլեր Հիլտոն հյուրանոցը։ Ժամը 7-ին Վեհափառ Հայրապետը հյուրանոցի իր հարկարաժնում ընդունում է այցելությունը հայ մամուլի, բարեգործական, հայրենասիրական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների։

Երեկոյան ժամը 9-ին հյուրանոցի սրահներից մեկում Հայոց Հայրապետին սեղանակից են լինում մի խումբ պատվական տոհմայիններ։

Մայիսի 26-ին՝ կիրակի.— Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Բոստոնի հայոց ս. Հակոբ եկեղեցում և իր քարոզի մեջ ոգեկոչում և օրհնում հիշատակը

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՄՈՆՏԵ-ԲԵԼԼՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԴԵՅՎԻՏ ՋԻՄՄԵՐԸ ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՄՈՏ

(Լոս-Անջելոս, Մոնտե-Բելլո, 1968 թ. մայիսի 18)

Սարդարապատի հերոսամարտի նահատակների՝ հիսնամյակի առիթով։

Հավարտ ս. պատարագի Հայոց Հայրապետի հանդիսավորությամբ կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ ի հիշատակ Սարդարապատի հերոսամարտում զոհված հերոսների։

Երեկոյան ժամը 8-ին Ստազիր Հիլտոն հյուրանոցի շքեղ սրահներից մեկում Հայոց Հայր սրբազանի պատվին Բոստոնի և Նյու-Ինգլենդի հայությունը կազմակերպում է մեծ ընդունելություն, մասնակցությամբ 1200 հայ և օտար հրավիրյալների։ Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետն ու Մեծն Բոստոնի կաթոլիկ եկեղեցու պետ Նորին վսեմություն կարդինալ Քուշինգը բարի դալրստյան և ողջույնի սրտագին ուղերձներ են կոխանակում։ Ընդունելությանը ներկա են նաև պետական, եկեղեցական բարձրաստիճան անձնավորություններ։

Մայիսի 27-ին, երկուշաբթի օր, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով պաշտոնական այցելություն է տալիս Նորին վսեմություն կարդինալ Քուշինգին, նրա պալատում, ուր ընդունվում է ջերմորեն։

Ժամը 6-ին Հայոց Հայրապետը Իր շքախմբով պաշտոնական այցելություն է տալիս նաև Մեծն Բոստոնի և Մեսեչուսեցտի նահանգապետ Նորին վսեմություն Ջոն Վոլշին։

Երեկոյան ժամը 8-ին Բոստոնի և Նյու-Ինգլենդի 10 եկեղեցական համայնքների վարչություններն ու հոգևորականության, ընդունելության հանձնախմբերը ողջերթի հաշիվերությամբ պատվում և բարի ճանապարհ են մաղթում Հայոց Հայրապետին։

Երեկոյան ժամը 10.30-ին Հայոց Հայրապետին է այցելում «Հայրենիք» օրաթերթի խմբագիր բժիշկ Երվանդ Խաթանասյանը։

Վեհափառ Հայրապետը Նյու-Յորքում

Մայիսի 28-ին՝ երեքշաբթի.—Առավոտյան ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը հրաժեշտ առնելով Բոստոնից, վերադառնում է Նյու-Յորք և առաջնորդվում Ուոլդորֆ Աստորիա թաուերի հյուրանոցը։

Երեկոյան ժամը 8-ին հյուրանոցի Իր հարկաբաժնում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Դանիել Վարուժանի դստեր՝ տիկ. Վերոնիկա Սաֆրազյանի, որը Հայոց Հայրապետի բարեխոսության վրա իր հոր գրական արխիվը, որը գտնվում է Կասաբյանկա, պրն. Ժիրայր Արիգյանի մոտ, նվիրում է Հայաստանի գրականության ինստիտուտին։

Մայիսի 29-ին՝ չորեքշաբթի.—Առավոտյան ժամերին Վեհափառ Հայրապետը հյուրանոցի իր հարկաբաժնում ընդունում է մի շարք այցելություններ։

Երեկոյան ժամը 6-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը հանդիպում է ունենում 18 հայրենակցական վերաշինաց և կրթական կազմակերպությունների ղեկավարության անդամների հետ, որոնք բարի գալուստ մաղթելով Հայոց Հայրապետին, ներկայացնում են իրենց գործունեության ընդհանուր պատկերը՝ խնդրելով նրա օրհնությունն ու պատգամը իրենց ապագա է՛լ ավելի կազմակերպված աշխատանքների արդյունավորության համար։

Երեկոյան ժամը 7-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը ընդունում է ԱՄՆ-ի Ռամկ. ազատական կուսակցության ղեկավար անդամներին։

Ժամը 8-ին հայրապետական շքախմբի անդամ և հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պողոսյանը առաջնորդարանի Մշակութային սրահում հետաքրքիր դասախոսությամբ ներկայացնում է հոգևոր ճեմարանի կրթական ծրագիրը ու ճեմարանի առօրյան՝ մի շարք նկարներով։

Ժամը 9-ին հյուրանոցի Իր հարկաբաժնում Վեհափառ Հայրապետին է այցելում Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի տեսուչ տ. Շահե եպս. Աճեմյանը։

Մայիսի 30-ին՝ հինգշաբթի.—Առավոտյան ժամերին Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում այցելություններ է ընդունում իսկ ժամը 6-ին հանդիպում է ունենում հայր Այվա Աբել քահանայի հետ, որը 1967 թ. իր որդու հետ բարձրացել էր Արարատի գագաթը՝ Էրզրումի կողմից։ Հայր Այվա Արելը Հայոց Հայրապետին է նվիրում նոյան տապանի մի մասունք և Ն. Ս. Օձուքյանն է ներկայացնում դեպի Արարատ ուղևորության ընթացքում իր կատարած մի շարք գունավոր և հետաքրքիր նկարները։

Երեկոյան ժամը 8-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդարանի Մշակութային սրահում ներկա է լինում Հայաստանյայց առաքելական եկեղեցու երիտասարդական կազմակերպության ներկայացրած «Կարապի երգը» պիեսի բեմադրությանը։

Մայիսի 31-ին, ուրբաթ օր, առավոտյան ժամը 11-ին, հյուրանոցում Վեհափառ Հայրապետին է այցելում պրոֆ. Վազգեն Թարսեղյանը։

Երեկոյան ժամը 6-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում օրհնում է Իր

պատվին թեմական խորհրդի տված հրաժեշտի ճաշը։

Հայրապետական շքախմբի անդամ տ. Ներսես ծ. վրդ. Պողոսյանը հրավիրվում է պատարագելու և քարոզելու Թինդհապտրնի քաղաքի հայոց եկեղեցին։

Վեհափառ Հայրապետը Մոնրեալում

Հունիսի 1-ին՝ շաբաթ.— Առավոտյան ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը հովվապետական այցելության է մեկնում Կանադա՝ Մոնրեալի հայ համայնքին տանելով օրհնություն և ողջույն։

Հայոց Հայրապետին ընկերակցում են տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը և Արթուն Հատիտյանը։

Օդանավակայանում սրտագին և ջերմ համաժողովրդական խանդավառ դիմավորում՝ դիմավորությամբ առաջնորդական փոխանորդ տ. Վաչե եպս. Հովսեփյանի։ Մոնրեալի, Տորոնտոյի, Սենտ Կատարինեի, Նիագարա Ֆոլսի հայ համայնքների ներկայացուցիչներ եկել էին ողջունելու Հայոց Հայրապետին։

Վեհափառ Հայրապետը համարվում է թանկագին հյուրը Կանադայի կառավարության։

Օդանավակայանի ընդունելության սրահում տեղի է ունենում մամուլի ասուլիս։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մոնրեալի եպիսկոպոսական Սեյնտ Ջեյմս Մայր եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով, ողջունում և օրհնում ժողովրդի հոծ բազմությանը։

Ն. Ս. Օձությունը իր շքախմբով առաջնորդվում է Քուին էլիզաբեթ արդիական մեծ հյուրանոցը։

Երեկոյան ժամը 8-ին հյուրանոցի շքեղ սրահում Հայոց Հայրապետի պատվին տրվում է համայնքային մեծ ճաշկերույթ՝ մասնակցությամբ հայ և օտար 800 հրավիրյալների։

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետն ու Կանադայի վարչապետ Դանիել Ջոնսոնը ճառեր են փոխանակում։

Հունիսի 2-ին՝ կիրակի.—Վեհափառ Հայրապետը առավոտյան ժամը 10-ին հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Մոնրեալի եպիսկոպոսական Սեյնտ Ջեյմս Մայր տաճարում և քարոզում։

Երեկոյան ժամը 6-ին Վեհափառ Հայրապետը օրհնում է Մոնրեալի հայոց ապագա եկեղեցու շինության հողն ու քարը և նվիրում ս. Էջմիածնից բերված մի դեղեցիկ ու մեծ խաչքար։

Երեկոյան ժամը 8-ին Վեհափառ Հայրապետը Մոնրեալի համալսարանի մեծ սրահում հանդիպում է ունենում կանադահայ երիտասարդական կազմակերպության հետ և ներկա լինում իր պատվին կազմակերպված խանդավառ ու բովանդակալից գեղարվեստական հայրենասիրական հանդիսությանը, ուր օրհնում և իր հայրապետական պատգամն է տալիս երիտասարդությանը։

Հունիսի 3-ին, երկուշաբթի օր, առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը իր եկեղեցական մեծ շքախմբով այցելություն է տալիս Մոնրեալի քաղաքապետ Ժան Դրապոյին։ Հայոց Հայրապետն ու պրն. քաղաքապետը ճառեր և հուշանվերներ են փոխանակում։

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Մոնրեալի ցուցահանդեսն ու քրիստոնեական տաղավարը։

Ժամը 1-ին Մոնրեալի քաղաքապետարանի խորհուրդը՝ ի պատիվ Հայոց Հայրապետի ճաշկերույթ է տալիս կանադական «Գերեկ» ճաշասրահում։

Ժամը 8-ին հյուրանոցի իր հարկարաժնում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելություններ Անթիլիասի միաբան տ. Սուրեն վրդ. Քաթարոյանի և մի խումբ ազգայիններին։

Երեկոյան ժամը 9-ին հյուրանոցի սրահներից մեկում Վեհափառ Հայրապետը մասնավոր հանդիպում է ունենում Մոնրեալի և սմբոզ Կանադայի հայ համայնքների, կազմակերպությունների, մշակութային, երիտասարդական, մամուլի, հայկական ռադիոժամի միությունների և անհատ ազգայիններին՝ շուրջ 200 ներկայացուցիչների հետ։

Վեհափառ Հայրապետը Գերեկում

Հունիսի 4-ին՝ երեքշաբթի.—Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը մասնավոր գնացքով մեկնում է Գերեկ՝ ընկերակցությամբ տ. Թորգոմ և տ. Վաչե սրբազանների և պրոտոկոլի պետ պրն. Դե Կրիի։

Հայոց Հայրապետը իր շքախմբով այցելում է Գերեկի վարչապետ Դանիել Ջոնսոնին և այնուհետև ընդունվում է բացառիկ պատիվներով Կանադայի գուվերնոր գեներալ Ռոլանդ Միշների կողմից, նրա Սիտադել միջնադարյան դղյակում, ուր Հայոց Հայրապետի պատվին տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա են լինում նաև Կանադայի կաթոլիկ եկեղեցու պետ կարդինալ Ռոյը, անգլիական եկեղեցու պետ արքեպ. Հովարդ Կլարկը և այլ պաշտոնական անձինք։

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետն ու Կանադայի մեծահարգ գուվեր-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ԳԵԲԵԿԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԴԱՆԻԵԼ ՋՈՆՍՈՆԸ, ՄՈՆՐԵԱԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԺԱՆ ԴՐԱՊՈՆ ԵՎ Տ. ՎԱՉԵ ԵՊՍ. ՀՈՎՍԵՓՅԱՆԸ

(Մոնրեալ, 1968 թ. Հուլիսի 1)

նորը ճառեր են փոխանակում ջերմ մթնոլորտում։

Երեկոյան ժամը 7-ին Վեհափառ Հայրապետը վերադառնում է Մոնրեալ և, որպես հյուրը Եվնիկե Ղարիբյանի և որդու՝ Աշոտ Ղարիբյանի, երկու օր հանգստանում է Լորենշտեյն լեռների վրա էստերել հյուրանոցում, լճափին, և հունիսի 7-ին, ուրբաթ օրը, վերադառնում է Նյու-Յորք։

Վեհափառ Հայրապետը կրկին Նյու-Յորքում

Հունիսի 7-ին՝ ուրբաթ օրը, երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը վերադառնում է Կանադայի իր այցելությունից Նյու-Յորք և, որպես մասնավոր հյուրը տեր և տիկին Հայկ-Ալիս Գավուքչյանների, երեք օր մնում է նրանց Նյու-Յորքամերձ վիլլայում, իր շքախմբի մնայուն անդամների հետ։

Հունիսի 8-ին՝ շաբաթ օրը, երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ առաջնորդարանում մասնավոր խորհրդակցություն է տեղի ունենում ազգային-եկեղեցական մի շարք կարևոր հարցերի շուրջը, որին մասնակցում են՝ առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոսը, տ. Կոմիտաս եպիսկոպոսը, Հ. Բ. Ը. միության նախագահ պրն. Ալեք Մանուկյանը, ծանոթ ազգայիններ պրնք. Ռիչարդ Գրեգորին, Տատուր Տատուրյանը, Տիգրան Պոյաճյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանը։

Երեկոյան ժամը 7-ին Նյու-Յորք ժամանեց Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, որպես հայրապետական շքախմբի անդամ՝ Հարավային Ամերիկայում կատարվելիք հովվապետական այցելության։

Հունիսի 9-ին՝ կիրակի.—Հայրապետական շքախմբի անդամ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը պատարագում և քարոզում է Նյու-Յորքի հայոց ս. Խաչ եկեղեցում։

Առավոտյան ժամը 11-ին Գավուքչյանների վիլլայում Վեհափառ Հայրապետը ընդունեց տ. Շահե եպս. Աճեմյանի այցելությունը։

Ն. Ս. Օծությունը վիլլայում ժամը 12-ին հնոտխոսային դրույց ունեցավ Երուսաղեմի ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի հետ։

Հունիսի 10-ին՝ երկուշաբթի.—Առավոտյան Վեհափառ Հայրապետը փոխադրվում է Ուոլդորֆ Աստորիա հյուրանոց։

Առավոտյան ժամը 12-ին Նյու-Յորք է ժամանում Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը՝ հանուն իր և կենտրոնական վարչության ողջունելու Հայոց Հայրապետին և անձամբ առաջնորդելու դեպի Հարավային Ամերիկա։

Երեկոյան ժամը 8-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Անթիլիասի միաբան տ. Հրանդ տրքեպ. Խաչատրյանի, որին ընկերակցում էին տ. Երվանդ վրդ. Արելյանը, պրնք. Եղիշե Մելիքյանը, Միհրան Կյուրեղյանը և Մուշեղ Հարությունյանը։

Հունիսի 11-ին՝ երեքշաբթի.—Վեհափառ Հայրապետը և՛ հյուրանոցում, և՛ առաջնորդարանում ընդունում է այցելություններ։

Հունիսի 12-ին՝ չորեքշաբթի.—Առավոտյան ժամը 10-ին հյուրանոցում Վեհափառ Հայրապետին է այցելում տ. Շահե եպս. Աճեմյանը։

Ժամը 11-ին առաջնորդարանում անգլիական եկեղեցու ներկայացուցիչ դեր. տ. Աքեյֆ եպիսկոպոսը հանդիսավորապես Հայոց Հայրապետին է հանձնում Հարվարդի համալսարանի պատվո դոկտորության տիտղոսագիրը։

Ժամը 2-ին տեր և տիկին Հարրի Թաղեոսյանները Հայոց Հայրապետի պատվին ընդունելություն են կազմակերպում Ուոլդորֆ Աստորիայի դահլիճ-հաշատրահում։

Երեկոյան ժամը 8-ին առաջնորդարանի Հայկ և Ալիս Գավուքչյան մեծ սրահում Հայոց Հայրապետի պատվին տրվում է ողջերթի համահայկական մեծ հաշկերույթ՝ 800 հոգու մասնակցությամբ։

Հունիսի 13-ին՝ հինգշաբթի.— Հետմիջօրեի ժամը 3-ին Վեհափառ Հայրապետի բարձրը նախագահությամբ գումարվում է խորհրդակցական ժողով՝ Երուսաղեմի ս. Հարության տաճարի վերանորոգության և կենտրոնական հանձնաժողովի վերակազմելու հարցով, որին ներկա են լինում տ. Թորգոմ, ՊՆ. Կոմիտաս, տ. Շահե սրբազաններ, պրնք. Ալեք. Մանուկյանը, Տատուր Տատուրյանը, Տիգրան Պոյաճյանը, Ռիչարդ Գրեգորին, դոկտ. Վ. Բարսեղյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանը։

Հունիսի 14-ին՝ ուրբաթ.— Հետմիջօրեի ժամը 1-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետի պատվին տրվում է հոգևորականաց հրաժեշտի հաշ, որին ներկա է լինում նաև Հայաստանի լուսավորության մինիստր Շավարշ Սիմոնյանը, որը պաշտոնական հրավերով գտնվում էր Նյու-Յորքում՝ ելույթ ունենալու համար ՄԱԿ-ում կրթական հարցերի շուրջ։

Երեկոյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում ԱՄՆ-ի հայությունից, հոգևորականությունից, ազգային եկեղեցական մարմիններից և մեկնում Հարավային Ամերիկա։

Վեհափառ Հայրապետը հանդիսավոր թափորով մուտք է գործում վերջին անգամ Նյու-Յորքի հայոց նորակառույց ս. Վարդան Մայր եկեղեցին, աղոթում բարեհաջող ուղեվորության համար և, օրհնելով բոլորին, առաջնորդվում է Նյու-Յորքի Քենեդիի անվան միջազգային օդանավակայան։ Այստեղ հայրապետական շքախմբի անդամ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը հրաժեշտ է առնում Վեհափառ Հայրապետից, մասնակցելու համար Ուփսալայում (Շվեդիա) նիկեղեցիների համաշխարհային խորհրդի 4-րդ համագումարին, որպես անդամ Հայց. առաք. եկեղեցու պատվիրակության։

հում Հայոց Հայրապետին։

Հետմիջորեի ժամը 4-ին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ տ. Բարգեն արքեպիսկոպոսի, տ. Կոմիտաս և տ. Տիրայր եպիսկոպոսների և Արթուն Հատիտյանի, ժամանում է Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս-Այրես։

Վեհափառ Հայրապետը Արգենտինայում

Հունիսի 15-ին, շաբաթ օրը, Երեկոյան ժամը 4-ին, Բուենոս-Այրես է ժամանում Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ

Վեհափառ Հայրապետը՝ Հայրապետական պատվիրակ տ. Բարգեն արքեպ. Ապատյանի և Արգենտինայի Կենտրոնական վարչության անդամների հետ (Բուենոս-Այրես, 1968 թ. հուլիսի 8)

Առավոտյան ժամը 2-ին ինքնաթիռը ժամանում է Մայամի, ուր տեղի հայությունը ջերմորեն դիմավորում և ճանապարհում է Հայոց Հայրապետին, Մայր Աթոռի բարերար պ. Հերրի Պերտի և եկեղեցական վարչության գլխավորությամբ։

Հունիսի 15-ին՝ շաբաթ.— Վեցժամյա թռիչքից հետո ինքնաթիռը իջնում է Պերուի մայրաքաղաք Լիմա և ապա, շարունակելով ճանապարհը, առավոտյան ժամը 11-ին հասնում է Չիլիի մայրաքաղաք Սանտ-Յագո, ուր հավաքված փոքրաթիվ հայությունը կարոտով և սիրով ողջունում է և ճանապար-

Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ տ. Բարգեն արքեպ. Ապատյանի, տ. Կոմիտաս եպս. Տեր-Սահակյանի, տ. Տիրայր եպս. Մարտիկյանի և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանի։

Բուենոս-Այրեսի Էսեյսայի միջազգային օդանավակայանում սրտագին ու համաժողովրդական, խանդավառ դիմավորում։ Պետական նվագախմբի խրոխտ հնչյունների ներքո Հայոց Հայրապետին ընծայվում են զինվորական պատիվներ։ Ն. Ա. Ծծության օրհնարեր ժամանումը ողջունում են պետու-

թյան և քույր եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչներ, կենտրոնական վարչության, հայրապետական ընդունելության հանձնաժողովի անդամներ, ազգային, հայրենակցական, երիտասարդական, մշակութային, տիկնանց կազմակերպություններ։ Հայ արիների և արենույշների ջոկատներ ծաղիկներ են փռում Վեհի անցքի վրա և խաղաղության աղավնիներ թռածում հանդիսության սրահի մեջ, մինչ «Գայանեի» հայկական պարախմբի տղաներն ու աղջիկները, հայկական տարազների մեջ, Վեհին առաջնորդում են օդանավակայանի ընդունելության սրահը։

Հանուն Արգենտինայի կառավարության Հայոց Հայրապետին բարի գալուստ է մաղթում օտար դավանության կրոնական նախարար Ռոբերտո Ռոման Պրավոն։ Հայոց Հայրապետը օրհնում է հյուրընկալ հողը արգենտինյան, նրա ժողովուրդն ու բարեխնամ կառավարությունը։

Մամուլի ասուլիսից հետո հայրապետական շքերթը ուղղվում է, պատվո ոստիկանների առաջնորդությամբ, դեպի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին, ուր մուտք է գործում Հայոց Հայրապետը «Հրաշափառ»-ով, օրհնում և ողջունում ժողովրդի հոծ ու խանդավառ բազմությանը։

Առաջնորդարանին առընթեր «Հայ կեդրոն»-ի մեծ սրահում Ամենայն Հայոց Հայրապետին պաշտոնապես բարի գալուստ է մաղթում, հանուն Հարավային Ամերիկայի ողջ հայության, հայրապետական պատվիրակ սրբազանն ու հանուն կենտրոնական վարչության՝ պրն. Հովհ. Ռագուզյանը։

Ընդունելություն առաջնորդարանում և բարի գալստյան ու ողջույնի խոսքեր են փոխանակվում։ Հանուն Կենտ. վարչության Վեհափառ Հայրապետին ողջունում է դրն. Վահան Գալֆայանը։ Աջահամբույրից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ալվեար հյուրանոց՝ իր շքախմբի անդամներով։

Հունիսի 16-ին՝ կիրակի.—Տոն կաթողիկէ Մայր Աթոռ ս. Էջմիածնի.

Օրվա մեծ տոնի առիթով հայրապետական շքախմբի անդամ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Բուենոս-Այրեսի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում և քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ օրվա տոնի հոգևոր, եկեղեցական և ազգային նշանակության մասին։ Այդ օրը նաև եկեղեցու օծման 30-րդ տարեդարձն է։

Հայրապետական քարոզից հետո, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հայրապետական մաղթերգ։ Հավարտ ս. պատարագի՝ հոգեհանգիստ Մայր եկեղեցու հիմնադիր-բարերար Հրանդ Նիքոլայանի և ճարտարապետ Իսրայել Արսլանի հիշատակին։

Ժամը 3-ին «Հայ կեդրոն»-ի մեջ Հայոց Հայրապետի պատվին ընդունելության հանձնախումբը բարի գալստյան ճաշկերույթ է կազմակերպում՝ շուրջ 200 հոգու մասնակցությամբ։ Հանուն Կեդրոնական վարչության Հայոց Հայրապետի շնորհարեր ներկայությունը ողջունում է պր. Մանվել Պարսամյանը։ Ողջույնի խոսքերով հանդես են գալիս նաև տ. Կոմիտաս և տ. Տիրայր եղիազարյանները և պր. Լեոն Ավետիսյանը։

Հունիսի 17-ին՝ երկուշաբթի.—Ամեն օր առավոտյան ժամը 10—2-ը և երեկոյան ժամը 6—8-ը Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է այցելություններ։

Երեկոյան ժամը 6-ին Հ. Բ. Ը. միության տեղական մասնաճյուղը և տիկնանց հանձնախումբը բարի գալուստ են մաղթում Հայոց Հայրապետին։

Ժամը 6.30-ին Ն. Ս. Օծության այցելում են կենտրոնական վարչության նախկին ատենապետ պրն. Արմեն Պերկամալին, ռումինահայ Ռուբեն և Արամ Իսրայելյանների ընտանիքները։

Ժամը 7-ին Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելություններ նշանավոր երգիչ և բանաստեղծ Շարլ Աղնավուրի։

Ժամը 8-ին Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգաբարձության կամ Արգենտինայի կենտրոնական վարչության այցելությունը՝ ատենապետ պրն. Էդվարդ Սեֆերյանի գլխավորությամբ։

Հունիսի 18-ին՝ երեքշաբթի.—Առավոտյան առաջնորդարանում մամուլի ասուլիս «Լա Նասիոն» թերթի։ Ապա այցը՝ Բուենոս-Այրեսի հայկական դրամատան տնօրեն Ավետիս Արրահամյանի։ Ավելի ուշ Հայոց Հայրապետին է այցելում սիրված բանաստեղծուհի Ալիսա Կիրակոսյանը՝ իր հարգարժան հոր հետ։

Ժամը 12-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Հարավային Ամերիկայի Հ. Հ. Դաշնակցության կենտրոնական կոմիտեի անդամների, որոնք հանուն իրենց կազմակերպության, ջերմորեն ողջունում են Հայոց Հայրապետի շնորհաբեր ժամանումն ու ներկայությունը՝ հաջողություն մաղթելով Ն. Ս. Օծության առաքելության և հայտնում իրենց որդիական սերն ու հավատարմությունը դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը։

Երեկոյան ժամը 6-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբով պաշտոնական այցելություն է տալիս արտաքին և կրոնական

գործերի ոչ-կաթոլիկ նախարարության պետ գոկտ. Ռոբերտս Ռոման Պրավոլին։

Երեկոյան ժամը 8-ին Հ. Բ. Ը. միությունը, իր նորաշեն ակումբի մեծ դահլիճում, բարի գալստյան ընդունելություն է կազմակերպում ի պատիվ Հայոց Հայրապետի՝ շուրջ 400 հրավիրյալների մասնակցությամբ։ Ընդունելության ներկա էին նաև տիկին Մարթա Դիարբեքիրյան և տիկին Քաթլին Սեֆերյան։

Վեհափառ Հայրապետը և Արգենտինայի կարդինալ Անտոնիո Կաձիանոն առաջնորդարանում
(Բուենոս-Այրես, 1968 թ. Հունիսի 26)

Հունիսի 19-ին՝ շաբաթի.—Ժամը 11-ին առաջնորդարանում տեղի է ունենում հայ և օտար մամուլի ասուլիս։

Ժամը 6-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը ընդունում է Մարաշի Հայրենակցական միության վարչությանը և ապա ժամը 7-ին՝ ռումինահայերի այցելությունը։

Երեկոյան ժամը 9-ին «Խրիմյան» կրթական հաստատության վարչությունը իր գեղեցիկ սրահի մեջ Հայոց Հայրապետի պատվին կազմակերպում է բարի գալստյան ընդունելություն՝ 400 հրավիրյալների մասնակցությամբ։

Հունիսի 20-ին՝ հինգշաբթի.—Բուենոս-Այրեսի Հայաստանյայց եկեղեցու երիտասարդաց կազմակերպության վարչությունը առաջնորդարանում ժամը 8-ին սիրալիր ճաշկերույթով պատվում է Հայոց Հայրապետի ժամանումը։

Հունիսի 21-ին՝ ուրբաթ.—Առավոտյան ժամերին՝ այցելություններ առաջնորդարանում։ Պահչեճյան վարժարանի հոգաբարձության և ապա ծանոթ դրագիտուհի տիկին Էմմա Ռամոս Մեխիայի։

Երեկոյան ժամը 4-ին՝ Վեհափառ Հայրապետի այցը Ֆլորես Թաղի Արծրունյան ազգային վարչության և Վարագա ս. Խաչ եկեղեցին։

Երեկոյան ժամը 9-ին «Մարոն» հնչակյան տիկնանց, «Տխրունի» ուսանողական երիտասարդաց և «Շարժում» թերթի խմբագրությունն ու Մշակութային ընկերությունը Հայոց Հայրապետի պատվին մեծ ընդունելություն են կազմակերպում ամերիկյան կլուբի մեջ՝ մասնակցությամբ ավելի քան 500 հրավիրյալների։

Հունիսի 22-ին՝ շաբաթ.—Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունեց այցելությունը Բուենոս-Այրեսի հույն օրթոդոքս եկեղեցու պատվիրակության։

Ժամը 1-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետին սեղանակից եղան Բուենոս-Այրեսի ծանոթ երկու ազգայիններ և Մայր Աթոռի բարերարներ պրն. Տիգրան Մյուրեքյանը և Գեորգ Սարաֆյանը, ինչպես նաև հարգված ու սիրված բժիշկ Մկրտիչ Սերոբյանը։

Երեկոյան ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում նախագահում է կիրակամտի ժամերգությանը։

Ժամը 7-ին առաջնորդարանում ընդունում է տիկնանց և զանազան կազմակերպությունների ներկայացուցիչներին։

Հունիսի 23-ին՝ կիրակի.—Առավոտյան ժամը 10-ին հայրապետական ս. պատարագ և քարոզ՝ Բուենոս-Այրեսի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում։ Ծովածավալ բազմություն։

Հավարտ ս. պատարագի առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը «Կոմիտաս» երգչախմբի՝ զեկավար պրոֆ. Մանուկ Հալբերտյանի գլխավորությամբ։

Ժամը 6-ին Վեհափառ Հայրապետը նախագահում է Հ. Մ. Ը. Մ.-ի Ռամոս Մեխիա արվարձանի մեջ իր պատվին կազմակերպված սկաուտական տողանցին և ապա թե-

յասեղանին, որին մասնակցում էին 400 հրավիրյալներ և 170 արիներ և արենուշներ։

Հունիսի 24-ին՝ երկուշաբթի.—Առավոտյան ժամերին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Մխիթարյան հայրերի՝ Խաչատուր վրդ. Վրթանեսյանի գլխավորությամբ, և ապա հայ ավետարանական համայնքի ներկայացուցիչների, Հաճնի հայրենակցական, Այնթապի հայրենակցական, «Սեան» թերթի և Մշակութային ընկերության, և ապա երաժշտագետ-երգահան Ալիսա Թերզյանի և արգենտինացի դիրիժոր մաեստրո Խոսե Ռոդրիկես Ֆորեի, որը այցելել է Սովետական Հայաստան և Երևան։

Ժամը 4-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Վիսենթի Լոպեսի հայ ազգային վարժարանն ու մանկապարտեզը, ուր սովորում են 80 աշակերտ-աշակերտուհիներ։

Երեկոյան ժամը 8-ին Հայաստանյայց առաքելական եկեղեցու երիտասարդաց կազմակերպությունը «Սինդանո» կլուբի մեջ հանդիպում է կազմակերպում Վեհափառ Հայրապետի հետ, որին ներկա են լինում արգենտինահայ համալսարանականների միությունը, Հ. Բ. Ը. միության երիտասարդաց լիգան, Հ. Մ. Ը. Մ.-ի երիտասարդացը, արգենտինահայ մշակութային երիտասարդաց միությունը, Արմենիա, Մարո Հնչակյան, Տիրունի, գտնելք Վարդանանց, «Կոմիտաս» երգչախումբը, ս. Գրիգոր Լուսավորիչ կրթական հաստատության շրջանավարտից միությունը, Հայ ձայն, Հանդիպում հայրենիքի հետ, Արմենիա ռադիո ժամերի և այլ երիտասարդական կազմակերպությանց ներկայացուցիչներ և անդամներ՝ շուրջ 300 երիտասարդ-երիտասարդուհիներ։

Վեհափառ Հայրապետը ողջունում է ներ-

Վեհափառ Հայրապետը և Արգենտինայի հանրապետության նախագահ գեներալ Կառլոս Օնգանիան
(Բուենոս-Այրես, 1968 թ. հունիսի 28)

Ժամը 1-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետին ուղղանկից եղան Բուենոս-Այրեսի հոգևոր հովիվներն ու քահանա հայրերը, տ. Հարությունն ծ. վրդ. Մուշյանը, տ. Վազգեն վրդ. Քեշիշյանը, տ. Նորայր ավագ քհն. Տեր-Խորենյանը, տ. Շավարշ քհն. Մեհրարյանը, տ. Սեդրակ քհն. Խաչատրյանը։

կայությունը այս խոստումնալից երիտասարդական կազմակերպությունների և առնում մի շարք թելադրություններ, որոնք պարտադիր պետք է լինեն բոլոր հայ երիտասարդներին, որոնցից թեև յուրաքանչյուրն ունի իր գործունեության առանձին ծրագիրն ու նպատակը, բայց բոլորը պետք է միասնական լինեն հայ եկեղեցուն, հայ մշակույթին և արգենտինյան այդ բարի և հոգևոր երկրին հավատարմությամբ և նվիրումով իրենց գործունեության մեջ։

Հունիսի 25-ին՝ երեքշաբթի.— Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես ծաղկեպսակ է զետեղում Բուենոս-Այրեսի Սան Մարտինո հրապարակի կենտրոնում բարձրացող Արգենտինյալի հուշատարար զորավար Սան Մարտինի հուշարձանի առաջ։

Պատվո զինվորական պահակախումբը պատիվներ է ընծայում Հայոց Հայրապետին։

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Վալենտին-Ալսինայի «Խրիմյան կրթական հաստատությունը», ուր սովորում են շուրջ 500 աշակերտ-աշակերտուհիներ, մանկապարտեզի, նախակրթարանի և երկրորդական վարժարանների բաժիններում։ Հայոց Հայրապետին ողջունում է տնօրեն պրն. Հովհ. Տեվեճյան։ Տեղի է ունենում աշակերտական հանդիսություն, ուր Հայոց Հայրապետը իր օրհնությունն ու պատգամն է տալիս բոլոր ներկաներին։

Հետ միջօրեի ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Արգենտինայի արտաքին գործոց նախարար Նիքանոր Կոստա Մենդեսին։

Հայոց Հայրապետն ու պրն. նախարարը ճառեր են փոխանակում ջերմ մթնոլորտում։

Երեկոյան ժամը 6-ին Հայաստանյայց առաքելական եկեղեցու եղբայրակցության ս. Գրիգոր Լուսավորիչ աղոթարանի մեջ Վեհափառ Հայրապետը ներկա եղավ աղոթքի մասնավոր արարողության, ապա վարչությունը թելով պատվեց Հայոց Հայրապետին։

Երեկոյան ժամը 9-ին Սահակ Պահլեճյան ամբողջօրյա դպրոցի հոգաբարձությունը դպրոցի ընդարձակ սրահում մեծ ընդունելությամբ պատվում է Հայոց Հայրապետին՝ մասնակցությամբ 300 հրավիրյալների։

Հունիսի 26-ին՝ չորեքշաբթի.— Առավոտյան ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Արգենտինայի հանրապետության նախագահ, Նորին վսեմություն գեներալ Կառլոս Օնգանիային՝ նախագահական շքեղ պալատում։

Հայոց Հայրապետն ու հանրապետության մեծաշարգ նախագահը ողջույնի և բարի գալստյան ճառեր են փոխանակում։ Հետագրության ընթացքում Հայոց Հայրապետը պրն. նախագահի կուրծքը զարդարում է ս. Գրիգոր Լուսավորիչ առաջին կարգի աղամանդակուռ շքանշանով։

Ժամը 12.30-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Արգենտինայի Ազգային դեղագույն ատյանի նախագահ դոկտ. Էդվարդո Օրթիսի արդարադատության պալատը։

Ժամը 1-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է օրհնել պրն. Արմեն Պերկալիի հյուրընկալ հարկի տակ իր պատվին կազմակերպված ընտանեկան սեղանը։

Ժամը 4-ին, հանուն Վեհափառ Հայրապետի, տ. Բաբգեն արքեպ. Ասպատյանը, տ. Կոմիտաս, տ. Տիրայր եպիսկոպոսները և Արթուն Հատիսյանը այցելում են Վիժա Սալտադի թաղի Սահակ Պահլեճյան ամբողջօրյա վարժարանը, ուր սովորում են շուրջ 200 աշակերտ-աշակերտուհիներ։

Պատվիրակության պատվին դպրոցի հոգաբարձությունն ու տեսչությունը թելասեղան են կազմակերպում։

Երեկոյան ժամը 7.30-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետին է այցելում Արգենտինայի կարդինալ Նորին Վսեմություն Անտոնիո Կաժժիանոն՝ ընկերակցությամբ Հուան Կառլոս Առամպուրի արքեպիսկոպոսի և Կրասելլի եպիսկոպոսի։

Երկու հոգևոր պետերի և նրանց շքախմբերի միջև տեղի է ունենում սրտագին զրույց՝ էկումենիկ ոգով։

Երեկոյան, ավելի ուշ, ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը ս. Գրիգոր Լուսավորիչ կրթական հաստատության փոքր դահլիճում հանդիպում է ունենում Բուենոս-Այրեսում ապրող նախկին ռումինահայերի հետ և նրանց համար մասնավոր դասախոսություն է կարդում ս. Գրիգոր Նարեկացու կյանքի և գործունեության և մանավանդ «Նարեկ»-ի դաղափարական բովանդակության և հոգևոր արժեքի մասին։

Հունիսի 27-ին՝ հինգշաբթի.— Վեհափառ Հայրապետը այսօր, ժամը 12-ին, բարեհաճում է ճաշել «Հայ կեդրոն»-ի մեծ սրահում՝ ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանաց խնամատար մայրերի հրավերով, դպրոցի ավելի քան 700 աշակերտության, ուսուցչական կազմի և վարչության անդամների հետ։

Այդ օրը դպրոցը նշում է նաև տեսուչ տ. Հարություն ծ. վրդ. Մուշյանի ծննդյան 50-ամյակը։

Երեկոյան ժամը 7.30-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում հանդիպում է ունենում արգենտինահայ ուսուցիչների հետ, որոնց հայ դպրոցների հայկական և տեսա-

կան բաժիններում պատասխանատու և կարևոր աշխատանքներ են կատարում։ Վեհափառ Հայրապետը ողջունում է նրանց և օրհնում նրանց կրթանվեր աշխատանքը։

Հունիսի 28-ին՝ ուրբաթ.—Առավոտյան ժամերին Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է այցելություններ մի շարք հայրենակցական մարմինների, «Համազգային» թերթի խմբագրությանը և հայ մասոնների տեղական մասնաճյուղի։

իր տան մեջ պատվում է Հայոց Հայրապետին։ Ընդունելությանը ներկա են շուրջ 400 հրավիրյալներ։ Հայոց Հայրապետի ոտքերի առաջ, ըստ հանցիների ավանդական սովորության, մատաղ է մորթվում։

Հունիսի 29-ին՝ շաբաթ.—Առավոտյան ժամը 11-ին տ. Կոմիտաս եպիսկոպոսը և Արքուն Հատիտյանը, հանուն Վեհափառ Հայրապետի, այցելում են Բուենոս-Այրեսում սովետական դեսպանատուն։

Վեհափառ Հայրապետը ծաղկեպսակ է գետեղում Բուենոս-Այրեսում՝ զորավար Սան Մարտինի հուշարձանի առաջ (1968 թ. հունիսի 25)

Ժամը 1-ին Վեհափառ Հայրապետը պր. Արտաշես Պոյաճյանի հյուրընկալ հարկի տակ օրհնում է նրա սեղանի աղն ու հացը։

Հետ միջօրեի ժամը 4-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Փայիրմուի թաղի մեջ Մխիթարյան հայրերի վարժարանը, ուր տեսչություն, հոգաբարձություն ու ծնողական խորհուրդը թեյասեղանով պատվում ու մեծարում են Հայոց Հայրապետին։

Երեկոյան ժամը 8-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը ընդունում է «Աբրաբոս Եպրշիմի անդամ-անդամուհիներին։

Նույն երեկոյան, ավելի ուշ, ժամը 10-ին, Հաճնի հայրենակցական միության կենսաբանական վարչությունը ճաշկերույթով

Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է մի շարք այցելություններ և ժամը 12-ին օրհնում է սեղանը տեր և տիկին Վարդան Բարակյան ընտանիքի։

Այսօր Գոբանոպա է մեկնում, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, շքախմբի անդամ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝ Հայոց Հայրապետի ողջույնն ու օրհնությունը տալու, պատարագելու և Բանին կենաց քարոզությամբ մխիթարելու հավատացյալներին։

Հունիսի 30-ին՝ կիրակի.—Ժողովրդական խանդավառ մթնոլորտի մեջ այսօր առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը կատարում է օծումը Վիսենթե Լոբեսի թաղում հայոց Նորակառույց ս. Գեորգ եկեղե-

ցու և Բանին կենաց քարոզությամբ մխիթարում հավատացյալներին։

Սծված եկեղեցու ս. Սեղանի վրա առաջին պատարագը մատուցում է հայրապետական պատվիրակ սրբազանը։

Ս. Գևորգ եկեղեցին կառուցվել է մասնավորաբար վերջին տարիներին Ստամբուլից տեղադրված հայերի ջանքերով։ Եկեղեցու կողքին գործում է նաև նորակառույց «Գուլումճյան ազգային վարժարան»-ը։

Ս. Պատարագից հետո իտալական «Ինինո» ակումբում Հայոց Հայրապետի պատվին տրվում է ճաշկերույթ, որին ներկա են լինում հայ և օտար 800 հրավիրյալներ։

Երեկոյան ժամը 8-ին Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո տեղի է ունենում «Հայ կեդրոն»-ի մեծ սրահում ս. Գրիգոր Լուսավորիչ կրթական հաստատության երեք վարժարանների կիսամյա հանդեսը՝ ի պատիվ Հայոց Հայրապետի։

Գործադրության է դրվում խնամքով ու ճաշակով պատրաստված գեղարվեստական ծրագիրը, որը արժանացավ Վեհափառ Հայրապետի բարձր գնահատության և ուշադրության։

Վեհափառ Հայրապետը աշակերտությանն ուղղած բովանդակալից մի պատգամով Իր հայրապետական ուրախությունն ու գոհունակությունն է հայտնում և իր օրհնությունն է տալիս կեդրոնական վարչությանը, տեսուչ տ. Հարությունյան ծ. վրդ. Մուշյանին, ուսուցչական կազմին ու աշակերտությանը։

Հուլիսի 1-ին՝ երկուշաբթի.—Առավոտյան ժամը 12-ին առաջնորդարանում ս. Գրիգոր Լուսավորիչ դպրոցների ծնողական խորհուրդը ի պատիվ Հայոց Հայրապետի ճաշկերույթ են կազմակերպում։

Հետո միջօրեի ժամը 5-ին Պլաղա հյուրանոցի հայելիազարդ սրահում Հայաստանյայց առաքելական եկեղեցու եկեղեցասեր տիկնանց կազմակերպությունը թեյասեղանով պատվում է Հայոց Հայրապետին։ Ընդունելությանը ներկա են լինում ավելի քան 300 անդամուհիներ և համակիրներ։ Վեհափառ Հայրապետը օրհնում է միության անդամուհիներին և տալիս Իր պատգամը։

Նույն օրը, երեկոյան ժամը 9-ին, շքախմբի անդամ և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը «Հայ կեդրոն»-ի սրահում դասախոսություն է կարդում «Հայ մշակույթի միջազգային դերը» թեմայի շուրջ, որին ներկա են լինում ավելի քան 600 ունկնդիրներ՝ մեծ մասամբ երիտասարդություն։

Երեկոյան ժամը 10-ին Վեհ. Հայրապետը Իր շնորհաբեր ներկայությամբ օրհնում է սրբոց. Պողոս և Գևորգ Սարաֆյանների ընտանեկան տարեկը, նրանց սեղանի աղն ու հացը։

Հուլիսի 2-ին՝ երեքշաբթի.—Առավոտյան ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը փոխադարձ այցելություն է տալիս Արգենտինայի կարդինալ Անտոնիո Կամժիանոյին։

Հայոց Հայրապետին ընկերակցում էին տ. Բաբգեն, տ. Կոմիտաս, տ. Տիրայր սրբազանները, տ. Հարություն, տ. Վազգեն վարդապետները, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը։

Ժամը 1-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետին սեղանակից է լինում բանաստեղծուհի Ալիսա Կիրակոսյանը՝ հոր և մի քանի այլ մտավորականների հետ։

Երեկոյան ժամը 7-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով ներկա գտնվեց Ալվեար հյուրանոցի սրահում Իր պատվին Հայ օգնության միության (ՀՕՄ) կազմակերպած մեծ թեյասեղանին, որին ներկա են գտնվում շուրջ 300 անդամուհիներ և համակիրներ։

Վերջում Հայոց Հայրապետը Իր պատգամը տալով օրհնում է միության անդամուհիներին։

Ավելի ուշ, գիշերվա ժամը 10-ին, արգենտինահայ կենտրոնական վարչությունը Հայոց Հայրապետի պատվին առաջնորդարանում ողջերթի ճաշկերույթ է կազմակերպում, որին ներկա են լինում, հայրապետական պատվիրակ սրբազանի գլխավորությամբ, կեդրոնական վարչության անդամները։

Հուլիսի 3-ին՝ չորեքշաբթի.—Առավոտյան ժամերին՝ այցելություններ առաջնորդարանում։

Հետ միջօրեի ժամը 6-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը դիտում է 1960 թվականի հայրապետական այցելության կինոժապավենը։

Ժամը 8-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ընդունում է այցելությունը Սան-Պավլոյի վարչության ներկայացուցիչներ պրն. Գառնիկ Պաղարյանի և Ժոզեֆ Տիշչեքենյանի, որոնք անձամբ եկել էին Հայոց Հայրապետին ողջունելու հանուն Սան-Պավլոյի հայության և վարչության ու նրան առաջնորդելու Սան-Պավլո։

Ավելի ուշ, գիշերվա ժամը 10-ին, Բուենոս-Այրեսի ծանոթ ազգայիններից և Մայր Աթոռի բարերար տեր և տիկին Տիգրան Մյորաքյանները իրենց բնակարանի մեջ Հայոց Հայրապետի պատվին կազմակերպել էին ընդունելություն՝ ավելի քան 100 բարձրաստիճան պետական և հայ ծանոթ դեմքերի մասնակցությամբ։

Հուլիսի 4-ին՝ հինգշաբթի.—Առավոտյան ժամը 12-ին Ալեգրա Դիարբեքիրյան-Պետ-

բոսյանը և ամուսինը՝ Սարգիս Պետրոսյանը, իրենց ծոմամերձ բնակարանում Հայոց Հայրապետի պատվին ընդունելություն են կազմակերպում՝ ընտանեկան շրջանակի մեջ, որին ներկա է լինում նաև Մայր Աթոռի բարեբարտ պր. Սարգիս Դիարբեքիրյանը։

Երեկոյան ժամը 9-ին համագգությային ողջերթի ճաշկերույթ՝ ի պատիվ Հայոց Հայրապետի, 750 հրավիրյալների մասնակցությամբ, արգենտինյան Ռուրալ ընկերությանը։

Մարանի, Մայր Աթոռի շինարարական, տնտեսա-ֆինանսական և ներքին թեմերի կազմակերպչական պակերը։

Երեկոյան ժամը 9-ին Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և ներկայությամբ կատարվում է Մարաշի հայրենակցական միության նորակառույց Մարաշ—Հայաստան տան հանդիսավոր բացումը՝ ի ներկայության ավելի քան 500 մարաշցիների և այլ հրավիրյալների։

Վեհափառ Հայրապետի այցը ս. Գրիգոր Լուսավորիչ նախակրթարան (Բուենոս-Այրես, 1968 թ. Հունիսի 27)

թյան սրահում։ Հանուն ընդունելության հանձնախմբի ողջերթի ճառեր են արտասանում պր. Գեորգ Սարաֆյանը՝ իսպաներեն լեզվով, և պր. Հովհ. Տեվեճյանը՝ հայերեն։ Վերջում Հայոց Հայրապետը Իր օրհնությունն ու պատգամն է տալիս բոլոր ներկաներին և օրհնում Արգենտինան ու նրա հյուրընկալ ժողովուրդը։

Հուլիսի 5-ին՝ ուրբաթ.— Ամբողջ օրը Վեհափառ Հայրապետը ողջերթի այցելություններ է ընդունում առաջնորդարանում։

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետի պատվին տրվում է ողջերթի ճաշկերույթ՝ կենտրոնական վարչության, հայրապետական ընդունելության հանձնախմբի կողմից։ Ն. Ս. Օծությունը ճաշկերույթի ընթացքում խոսում է մասնավորապես Մայր Աթոռ ս. Էջմիածնի մասին՝ ներկայացնելով ընդհանուր գծերի մեջ միաբանության, հոգևոր ճեմարանի, Մայր Աթոռի շինարարական, տնտեսա-ֆինանսական և ներքին թեմերի կազմակերպչական պակերը։

Երեկոյան ժամը 9-ին Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և ներկայությամբ կատարվում է Մարաշի հայրենակցական միության նորակառույց Մարաշ—Հայաստան տան հանդիսավոր բացումը՝ ի ներկայության ավելի քան 500 մարաշցիների և այլ հրավիրյալների։

Հայոց Հայրապետի բարձր պատվին տրվում է և՛ թեյասեղան, և՛ ճաշկերույթ։

Հունիսի 6-ին՝ շաբաթ.—Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Արգենտինայի հայությունից սրտագին ու անմոռաց տպավորություններով։

Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ուր աղոթելուց և Իր հրաժեշտի պատգամն ու օրհնությունը հաղորդելուց հետո բոլոր ներկաներին, առաջնորդվում է ս. Գրիգոր Լուսավորիչ կրթական հաստատությանը առնքեր Կենտրոնական վարչության նոր դնած հոդամասը՝ օրհնելու երկրորդական վարժարանի նորակառույց շենքի հողն ու բարը, ժողովրդի խանդավառ ցույցերի և ծափերի մեջ։

Հանդիսավոր իրադրության մեջ կատար-

վում է դպրոցի հիմնաքարի օրհնությունը՝ ինքնամայրությամբ տիկին Քաթին Սեֆերյանի։ Ն. Ս. Օծությունը շնորհավորում է Հայրապետական պատվիրակ սրբազանին, կենտրոնական վարչությանը՝ այս կեղեցիկ ու կրթանվեր ձեռնարկի հաջողության համար, և ապա օրհնում հայ ժողովրդին։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը նույնպիսի հանդիսությամբ առաջնորդվում է Բուենոս-Այրեսի էսեյսայի օդանավակայանը՝ Ուրուգվայ մեկնելու համար։

Հայոց Հայրապետին և շքախմբի անդամներին ճանապարհում են պետական բարձրաստիճան ներկայացուցիչներ, հոգևորական դասը, կենտրոնական վարչության, ընդունելության հանձնախմբի անդամները, ազգային, բարեգործական, մշակութային, երիտասարդաց, տիկնանց բոլոր կազմակերպությունները ու ժողովրդի հոծ բազմությունը՝ խանդավառ արտահայտություններով, արցունքով և բարեմաղթություններով։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում են Հայրապետական պատվիրակ սրբազանը, Հարիմբի մնայուն անդամները և, հանուն կենտրոնական վարչության՝ պրն. Հովհաննես Ստեփանյանը։

Վեհափառ Հայրապետը Մոնտեվիդեոյում

Հուլիսի 6-ին՝ շաբաթ.—Երեկոյան ժամը 6-ին Վեհափառ Հայրապետը ինքնաթիռով ժամանում է Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեո։ Ժողովրդական խանդավառ դիմավորում։ Մամուլի ասուլիս՝ օդանավակայանում։ «Հրաշափառ»-ով մուտք՝ հայոց ս. Ներսես Շնորհալի եկեղեցին, ուր ողջունում և օրհնում է ժողովրդի բազմությանն ու գաղութային վարչությանը, ընդունելության հանձնախմբի անդամներին։ Ապա Իր շքախմբով առաջնորդվում է Ժուվեդրյա Պարկ հյուրանոցը, ուր տեղի է ունենում հայ և օտար մամուլի ասուլիս, և ժամը 10-ին վարչությունն ու ընդունելության հանձնախումբը բարի գալստյան առաջին ընդունելությունն են կազմակերպում։ Ընդունելությանը մասնակցում են նաև «Կոմիտաս», «Հայ կեղրոն», «Հայրենիքի արձագանք», «Ռադիո Արմենիա», «Հայ-ուրուգվայական բարեկամություն» և «Ուսանողական հայ լսարան» ռադիոժամերի ներկայացուցիչները։

Հուլիսի 7-ին՝ կիրակի.—Առավոտյան հայրապետական ս. պատարագ և քարոզ՝ Մոնտեվիդեոյի հայոց ս. Ներսես Շնորհալի եկեղեցում։ Մ. պատարագին ներկա են՝ պատական նվիրակ մոնսենյոր Բրյունիերին և Ուրուգվայի արքեպիսկոպոս Կառլոս Բաբիին ի բոյր եկեղեցիների և հարանվանությանց ներկայացուցիչները։

Ժամը 3-ին համագաղութային բարի գալստյան ընդունելություն՝ ի պատիվ Հայոց Հայրապետի Կլուպ Ուրուգվայի շքեղ ու հայելիազարդ սրահում՝ մասնակցությամբ հայ ի օտար 400 հրավիրյալների, պետական ու եկեղեցական ներկայացուցիչների։ Գաղութային վարչության ատենապետ Միսաք Գույումճյանը, հանուն Ուրուգվայի ողջ համայնքի, ողջունում է Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելությունը։

Երեկոյան ժամը 8-ին հյուրանոցի ընդունելության սրահում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելություններ ուրուգվահայ տիկնանց, օրիորդաց, երիտասարդաց, բարեգործական, հայրենակցական, ուսանողական, շուրջ 35 կազմակերպությունների, միությունների անդամներին հավաքաբար և զրույց ունենում նրանց հետ՝ հայրենասիրական ջերմ մթնոլորտում։

Հուլիսի 8-ին, երկուշաբթի օր, ժամը 10-ին՝ Վեհափառ Հայրապետի այցը Ուրուգվայի արտաքին գործոց մինիստր Վինանսի Ֆլորեսին։

Ժամը 11-ին հյուրանոցում Վեհափառ Հայրապետին է այցելում Ուրուգվայի հրնչակյան կուսակցական տեղական մասնաճյուղը։

Ժամը 3-ին Վեհափառ Հայրապետը այցելում է «Արմենիա» տեղական դպրոցը համար 156 Էսգուելա Արմենիա, ուր նրա բարձր պատվին գործադրության է դրվում գեղարվեստական մի մասնավոր ծրագիր։ Ապրիլյան եղեռնի հիսունամյակի առիթով, Ուրուգվայի կառավարության որոշումով, ի հարգանս հայ ժողովրդի նահատակների, տեղական ուրուգվայական դպրոցներից մեկը կոչվում է «Արմենիա»։ Ուրուգվայահայ հասարակությունը գուրգուրանքով է շրջապատել այս դպրոցը։

Ժամը 4-ին Վեհափառ Հայրապետը այցելում է ս. Ներսես Շնորհալի եկեղեցուն առընթեր հայ ազգային վարժարանը, ուր սովորում են շուրջ 150 աշակերտ-աշակերտուհիներ, մինչև նախակրթարանի 5-րդ դասարանը։ Աշակերտությունը իր երգերով, արտասանություններով խորապես ուրախացնում է Հայոց Հայրապետի սիրտը։

Ժամը 6-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Ուրուգվայի պառլամենտի նախագահ և կառավարության փոխ-նախագահ Ալբերտո Աբդալլահին։

Հայոց Հայրապետն ու պառլամենտի մեծահարգ նախագահը ճառեր են փոխանակում՝ սրտագին մթնոլորտում։

Ժամը 10-ին հայ ազգային վարժարանի

սրահում ուրուգվայահայությունը ողջերթի մեծ ճաշակությամբ պատվում ու մեծարում է Հայոց Հայրապետին։

Հուլիսի 9-ին՝ երեքշաբթի.—Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ տ. Կոմիտաս եպիսկոպոսի, այցելում է Մոնտեվիդեոյի պապական նվիրակ մոնսինյոր Անտոնիո Բրյունիերին, նրա տարանքում։

Ժամը 5-ին Հայոց Հայրապետը նույնպես այցելում է Ուրուգվայի արքեպիսկոպոս Բարթելի Կաղոսին։

Վեհափառ Հայրապետը ծաղկեպսակ է գետեղում ազգային հերոս Խոսե Արտիկասի հուշարձանի առաջ (Մոնտեվիդեո, 1968 թ. հուլիսի 9)

Արթուն Հատիտյանի և ուրուգվայահայ գաղութային վարչության անդամների, այցելություն է տալիս Մոնտեվիդեոյում սովետական կառավարության դեսպան Իգոր Կոնստանտինովիչ Կոլոսովսկուն։

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Մոնտեվիդեո քաղաքի մեծահարգ քաղաքապետին՝ գորավար Բարթուդիմեոս Էռոռեային։

Հայոց Հայրապետն ու մեծահարգ պրն. քաղաքապետը ճառեր և հուշանվերներ են փոխանակում։ Վերջում գորավար Բարթուդիմեոս Էռոռեան Հայոց Հայրապետի պատվին կոկտեյլի ընդունելություն է տալիս՝ Ուրուգվայի բարձրաստիճան պետական մարդկանց և մի խումբ հայ ծանոթ ազգայիններին մասնակցությամբ։

Ժամը 4-ին, հեքսմիջօրեի, Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես շքեղ ծաղկեպսակ է գետեղում Ուրուգվայի ազգային հերոս և ազատարար, գորավար Խոսե Արտիկասի հուշարձանի առաջ։ Հայոց Հայրապետին դինվորական պատիվներ են ընծայվում։

Ժամը 4.30-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Մոնտեվիդեոյի պապական նվիրակ մոնսինյոր Անտոնիո Բրյունիերին, նրա տարանքում։

Ժամը 5-ին Հայոց Հայրապետը նույնպես այցելում է Ուրուգվայի արքեպիսկոպոս Բարթելի Կաղոսին։

Ժամը 7-ին գաղութային վարչությունն ու ընդունելության հանձնախումբը հյուրանոցում Հայոց Հայրապետի պատվին ողջերթի ընդունելություն են կազմակերպում, նեղ շրջանակում։

Երեկոյան ժամը 8-ին Մոնտեվիդեոյի մեծահարգ պրն. քաղաքապետը իր հարգելի տիկնոջ հետ ազգային թատրոնի շքեղ սրահի մեջ Հայոց Հայրապետի պատվին թատերական հանդիսություն են կազմակերպում, ուր ներկայացվում է Մոլյերի «Տարտյուֆ»-ը։ Ուրուգվայի ողջ հայ համայնքը հյուրն է լինում քաղաքապետի՝ Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելության առիթով։

Հուլիսի 10-ին՝ չորեքշաբթի.—Առավոտյան Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում ուրուգվայահայ համայնքից և հովվապետական այցելության է մեկնում Բրազիլիա՝ Սան-Պավլո քաղաքը։

Վեհափառ Հայրապետը Բրազիլիայում

Հուլիսի 10-ին՝ չորեքշաբթի.—Հեքսմիջօրեի ժամը 3-ին, երկրորդ անգամ լինելով հայրապետական այցելությամբ Սան-Պավ-

լր է ժամանում Վեհափառ Հայրապետը՝ ընկերակցությամբ հայրապետական պատվիրակ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանի, շքախմբի մնայուն անդամների՝ տ. Կոմիտաս, տ. Տիրայր եպիսկոպոսների և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանի։

Սան-Պավլոյի Կոնկոնեաս միջազգային օդանավակայանում՝ սրտագին դիմավորում։ Հանուն քաղաքապետի Հայոց Հայրապետին է հանձնվում քաղաքի բանալին, և Ն. Ս. Օձությունը համարվում է թանկագին հյուրը Բրազիլիայի ժողովրդի և կառավարության։ Մամուլի ասուլիս՝ օդանավակայանում։ Ապա «Հրաշափառ»-ով մուտք՝ հայոց ս. Գևորգ եկեղեցին, օրհնություն և ողջույն՝ բազմահազար հայության։ Այնուհետև Հայոց Հայրապետը իր շքախմբով առաջնորդվում է Հաճի և Սարգիս Սեմերճյանների Սան-Պավլոյի ապարանքը, ուր մնում է մինչև իր մեկնումի օրը՝ վայելելով Կենտրոնական վարչության և Սեմերճյան ընտանիքի հյուրասիրությունը։

Երեկոյան ժամը 9-ին «Հայ կեդրոն»-ի դրահում վարչությունը, ազգային ներկայացուցչական մարմինն ու ընդունելության հանձնախումբը սեղմ շրջանակի մեջ, 80 հոգու մասնակցությամբ, բարի գալստյան հաշկերույթով մեծարում են Հայոց Հայրապետին։

Հունիսի 11-ին՝ Ճինգշաբթի.—Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը շքեղ ծաղկեպսակ է գետեղում Իբիրանկայի անկախության հուշարձանի առաջ։

Ժամը 11-ին Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Սան-Պավլոյի դուքերնոր-նահանգապետ Ռոբերտո Աբրեու Սուզրեին՝ սրտագին հարգանքի և մեծարանքի մթնոլորտում։ Հայոց Հայրապետի և մեծահարգ նահանգապետի միջև տեղի է ունենում բերմ դրույց։

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Սան-Պավլոյի քաղաքապետ դոկտ. Ֆարիա Լիմային, ուր արժանանում է բացառիկ պատիվների և հարգանքի։

Ժամը 1-ին Վեհափառ Հայրապետը մասնավոր հյուրն է լինում Սան-Պավլոյի հայոց Կենտրոնական վարչության անդամ Էդվարդ Դուկասյանի, որը Հայոց Հայրապետի պատվին ընդունելություն է կազմակերպում ժոքեյ Հայտնի ակումբում՝ մասնակցությամբ ավելի քան 50 օտար և հայ հրավիրյալների։

Ժամը 5-ին, հանուն Վեհափառ Հայրապետի, ա. Բաբգեն և տ. Տիրայր սրբազանները, «Էջմիածին» ամսագրի խմբագիրն ու Կենտրոնական վարչության ատենապետ Գարեգին Թյուֆենկյանը փոխադարձ այցելություն են տալիս Սան-Պավլոյի կաթոլիկ արքեպիսկոպոս կարդինալ Դոն Ակիպնի Ռոսսիին, հայ կաթոլիկ և հայ ավետարանական համայնքներին։ Երեկոյան ժամը 9-ին Վեհափառ Հայրապետը օրհնում է պր. Գառնիկ Պազարյանի նորաշեն հարկը, ուր Իր պատվին կազմակերպված էր ընդունելություն, շուրջ 100 հրավիրյալների մասնակցությամբ։

Հունիսի 12-ին՝ ուրբաթ.—Վեհափառ Հայրապետը առաջնորդարանում ժամը 11-ին հայրապետական պատվիրակ սրբազանի ընկերակցությամբ Իր օրհնաբեր այցելությամբ պատվում է ազգային բարերար տեր և տիկին Ժորժ Ռզգալլահի բնակարանը և առողջություն է մաղթում Ռզգալլահների ազնվաշուք ու պատվական մորը։

Ժամը 1-ին Հ. Բ. Ը. միության տեղական մասնաճյուղը ատենապետ Ա. Ռեֆերյանի գլխավորությամբ Հայոց Հայրապետի պատվին ընդունելություն է կազմակերպում, Սեմերճյանների ապարանք-վիլլայում։

Երեկոյան ժամը 6-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը ընդունում է Սան-Պավլոյի հայկական բոլոր կազմակերպությունների, այդ թվում՝ հայրենակցական, մշակութային, բարեգործական, երիտասարդաց, տիկնանց և այլ միությունների ներկայացուցիչների, Սան-Պավլոյի համալսարանի հայկական ամբիոնի վարիչ Նսայի Գոուզյանի։

Ժամը 7-ին առաջնորդարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ և հայրապետական պատվիրակ սրբազանի մասնակցությամբ, գումարվում է Բրազիլիայի հայոց Կենտրոնական վարչության լիագումար նիստ, ուր Հայոց Հայրապետը ողջունելով ներկայությունը պատվարժան բոլոր վարչականների, Իր օրհնությունն է բաշխում վարչությանը՝ ապագա գործունեության լավագույն բարեմաղթություններով, և խոսում է Մայր Աթոռ ս. Էջմիածնի գործունեության և մայր հայրենիքի մշակութային նվաճումների մասին։

Ժամը 8-ին Վեհափառ Հայրապետը մեծ թափորով ուղղվում է առաջնորդարանի մոտ Ավենիտա Սանթոս Դյումոն փողոցի հրապարակի վրա կառուցված Ապրիլյան եղեռնի հիշատակին նվիրված հոյակապ ու գեղեցիկ հուշարձանը և խանդավառ մթնոլորտի մեջ վառում է հուշարձանի երեկոյան լույսերը։ Այնուհետև տեղի է ունենում հանդիսավոր ժողովրդական միտինգ, ուր խանդավառ ճառերով հանդես են դալիս, հանուն Սան-Պավլոյի քաղաքապետի, դոկտ. Խուան Պրադոյ Վիտան և Վեհափառ Հայրապետը։

Երեկոյան ժամը 10-ին Սան-Պավլոյի մա-

Վեհափառ Հայրապետը և Սան-Պաուլոյի գլխավոր-նահանգապետ Դոքտոր Արրեիս Սուդրնն (Սան-Պաուլո, 1988 թ. Հուլիսի 11)

բաշցիների հայրենակցական միությունը իր սրահում մեծ ճաշկերույթով և հանդեսով պատվում է Հայոց Հայրապետին՝ 300 հրավիրյալների մասնակցությամբ։

Հուլիսի 13-ին՝ շաբաթ.—Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը իր շնորհաբեր ներկայությամբ պատվում է Երջանիկ Գրսաճրգյանի ընտանեկան հարկը՝ օրհնելով իր բարձրը պատվին կազմակերպված ընդունելությունը։ Երջանիկ Գրսաճրգյանը բարեբարն է Սան-Պավլոյում կառուցված Ապրիլյան եղեռնի հուշարձանի։

Երեկոյան ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Սանթանա թաղի ազգային Դուրյան վարժարանի մասնաճյուղը, ուր թաղական խորհուրդը հանդեսով և թեյասեղանով պատվում է Հայոց Հայրապետին։

Երեկոյան ժամը 9-ին Սան-Պավլոյի կենտրոնական վարչությունը, ներկայացուցչական մարմինն ու ընդունելության հանձնախումբը փառաշուք ողջերթի ճաշկերույթով պատվում են Հայոց Հայրապետին՝ համաժողովրդական ընդունելությամբ, Ֆաղանոյի շքեղ սրահում, օտար և հայ ավելի քան 700 հրավիրյալների մասնակցությամբ։

Հուլիսի 14-ին՝ կիրակի.—Առավոտյան ժամը 14-ին Վեհափառ Հայրապետը հանդիսավոր ս. պատարագ է մատուցում և քարոզում Սան-Պավլոյի հայոց ս. Գևորգ եկեղեցում։

Հավարտ պատարագի ժողովրդական հոծ բազմության մասնակցությամբ Վեհափառ Հայրապետը շքեղ ծաղկեպսակ է դնում Սան-Պավլոյի Ապրիլյան եղեռնի նահատակաց հուշարձանի առաջ, ուր և կատարվում է հո-

Վեհափառ Հայրապետը Սան-Պավլոյում՝ Ապրիլյան եղեռնի հուշարձանի առաջ
(Սան-Պավլո, 1968 թ. հուլիսի 12)

գեհանգստյան մասնավոր պաշտոն։

Ժամը 2-ին Վեհափառ Հայրապետը օրհնում է Իր պատվին տրված ընտանեկան ճաշը՝ տեր և տիկին Ժողեֆ Տիշչեքենյաններ-ի հյուրընկալ հարկի տակ։

Ժամը 6-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Սան-Պավլոյի արվարձաններից Օզասկոյի հայոց ս. Հովհաննես եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով, օրհնում և ողջունում հայրենասեր և հավատացյալ Իր զավակներին և ապա եկեղեցու բակում կատարում է երիտասարդական միության նոր կառուցվելիք սրահի հողի և քարի օրհնությունը։

Ժամը 9-ին Օզասկոյի հոգաբարձությունը

Հուլիսի 15-ին՝ երեքշաբթի.—Ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը Սան-Պավլոյի Ազգային Դուրյան վարժարանի դասարանների ներսը մտնելով, դասերի ներկայանալ է ուսանողներին։ Ապա Դուրյան վարժարանի դահլիճում

Հայոց Հայրապետին պատվում է Ֆորեստա ակումբում ճաշկերույթով, ուր քաղաքապետ Անտոնիո Կուասու Բիթերին Հայոց Հայրապետին է հանձնում քաղաքի բանալին։

Փիշերվա ժամը 10-ին Հաճի և Սարգիս Սեմերճյան եղբայրներն Հայոց Հայրապետին պատվում են իրենց ապարանքում, թեյասեղանով՝ ընտանեկան սեղմ շրջանակի մեջ։

Վեհափառ Հայրապետը Ռիո դե-Ժանեյրոյում

Հուլիսի 15-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Սան-Պավլոյի հայությունից և մեկնում Ռիո դե-Ժանեյրո՝ ընկերակցությամբ հայրապետական պատվիրակ սրբազանի, Իր շքախմբի, Սան-Պավլոյի հոգևոր հովիվ արժ. տ. Աստվածատուր ավագ քհն. Գասպարյանի, Կենտրոնական վարչության առենապետ Գարեգին Թյուֆենկճյանի, անդամներ պր. Էդվարդ Ղուկասյանի, պր. Ավետիս Ջալբոյանի, ընդունելության հանձնախմբի անդամներ պր. Ա. Ճեֆերյանի, պր. Գ. Պաղարյանի, պր. Օշին Մոստիչյանի։

Ռիո դե-Ժանեյրոյի օդանավակայանում ջերմ և խանդավառ դիմավորում՝ փոքրաթիվ հայ համայնքի կողմից։ Հայոց Հայրապետը Իր շքախմբով առաջնորդվում է Կլորիա հյուրանոց։

Ժամը 5-ին Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս, եկեղեցական և աշխարհական մեծ շքախմբով, Բրազիլիայի հանրապետության վսեմաշուք նախագահ, նորին գերազանցություն մարշալ Կոստա Սիլվային, հանրապետության ապարանքում, ուր ընդունվում է ջերմորեն։

Հայոց Հայրապետն ու վսեմաշուք պրն. նախագահը ճառեր են փոխանակում։ Զրույցի ժամանակ Հայոց Հայրապետը ս. Գրիգոր Լուսավորիչ Ա կարգի աղամանդակուռ շքանշանով դարդարում է կուրծքը պրն. նախագահի։

Երեկոյան ժամը 9-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է օրհնել Իր շնորհաբեր ներկայությամբ Պողոս Ներսիսյանի ընտանեկան հարկը և Իր պատվին տրված ճաշկերույթը և ապա սրտագին մթնոլորտում հանդիպում է ունենում ողջ հայ համայնքի անդամների հետ, որոնք եկել էին Ներսիսյանների հարկի տակ ընդունելու Հայոց Հայրապետի օրհնությունը։ Այս առթիվ Վեհափառ Հայրապետը խոսում է բոլոր ներկաներին Մայր Աթոռ ս. Էջմիածնի և մայր հայրենիքի մասին՝ խանդավառելով և գոտեպնդելով բոլորին։

Հուլիսի 16-ին՝ Երեքշաբթի.—Առավոտյան ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը տ. Կոմիտաս եպիսկոպոսի, Արթուն Հատիտյանի և Ռիո դե-Ժանեյրոյի սիրված և հարգված աղգայիններից պրն. Միհրան Քելեկյանի ընկերակցությամբ այցելում է Ռիո դե-Ժանեյրոյում սովետական կառավարության դեսպան Դիմիտով Նիկոլա Վասիլևիչին։

Ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով պաշտոնական այցելություն է տալիս Բրազիլիայի արտաքին գործոց նախարար Մակելան Բինդոյին։

Ժամը 9-ին Կլորիա հյուրանոցում ողջերթի թեյասեղան է կազմակերպվում ի պատիվ Հայոց Հայրապետի և շքախմբի անդամների։

Ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ տ. Կոմիտաս եպիսկոպոսի և Արթուն Հատիտյանի, հրաժեշտ է առնում և մեկնում Փարիզ՝ արգենտինյան անդրօվկիանոսյան մեծ ինքնաթիռով։

Ն. Ս. Օծությանը և շքախմբի անդամներին ճանապարհում են՝ Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ տ. Բարգեն արքեպիսկոպոսը, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, Սան-Պավլոյի հոգևոր հովիվ ա. Աստվածատուր Գասպարյանը, Բրազիլիայի Կենտրոնական վարչության առենապետ Գարեգին Թյուֆենկճյանը, վարչականներ Էդվարդ Ղուկասյանը, Ավետիս Ջալբոյանը, ընդունելության հանձնախմբի անդամներ Ա. Ճեֆերյանը, Գ. Պաղարյանը, Օ. Մոստիչյանը, Ռիո դե-Ժանեյրոյի վարչության առենապետ Պողոս Ներսիսյանը, Միհրան Քելեկյանը և ողջ հայ համայնքը։

Հուզիչ էր պահը հրաժեշտի։ Արցունք, հուզում կար և՛ Վեհափառ Հայրապետի, և՛ շքախմբի անդամների, և՛ բոլոր ճանապարհողների աչքերում։

Սրտագին աղաչամբույր, համբույրներ, հրաժեշտի սրտառուչ բարեմաղթություններ, օրհնություններ։

Անցան հայրապետական այցելության ուսումնական օրերը նաև հարավային ամերիկահայության ծոցում, հարուստ և անջնջելի տպավորություններով, հուշերով։

Հայոց արի և բարի Հայրապետը վերադառնում է Մայր Աթոռ ու մայր հայրենիք՝ յավատես, մխիթարված ու գորացած հեռավոր և հյուրընկալ այդ ափերի վրա ապրող Իր զավակների որդիական սիրո, պաշտամունքի և հավատարմության զգացմունքով՝ առնելով իր հետ նաև հոգիներն ու սրտերը հայրենակարոտ և պանդուխտ Իր զավակնի-

րի դեպի մեր հավատքի կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածին ու մեր վերածնված աշխարհը հայոց։

Բարի Հանապարհ մեր սիրելի Հայրապետին։

Վեհափառ Հայրապետը Փարիզում

Հուլիսի 17-ին՝ շաբաթշաբթի.—*Հետ միջօրեի ժամը 3-ին Վեհափառ Հայրապետը ժամանում է Փարիզի Օռլի միջազգային օդանավակայանը։ Բացառիկ և ջերմ ժողովրդական դիմավորում։ Մամուլի ասուլիս և ապա «Հրաշափառ»-ով մուտք՝ Փարիզի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, ուր Հայոց Հայրապետը ողջունում և օրհնում է հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպիսկոպոսին, հոգևոր դասին, եկեղեցական համայնքների ներկայացուցիչներին և առաջնորդվում Պլսոգ Աթենե հյուրանոցը։*

Հուլիսի 18-ին՝ հինգշաբթի.—*Ամեն օր առավոտյան ժամը 10—1-ը և ապա երեկոյան ժամը 5-7-ը առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը ընդունում է բազում այցելություններ։ Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետին է այցելում Ստամբուլից տ. Շահան եպս. Սվաճյանը։*

Ժամը 4-ին հյուրանոցում Վեհափառ Հայրապետին է այցելում Լիսաբոնից Գալուստ Կյուլբենկյան հաստատության հայկական գործերի բաժնի աշխատակից ու հայտնի արձակագիր Վահրամ Մավյանը։

Հետ միջօրեի ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի, տ. Կոմիտաս եպիսկոպոսի, տ. Գյուտ ծ. վարդապետի և Արթուն Հատիսյանի ուղեկցությամբ այցելում է Ֆրանսիայում սովետական կառավարության դեսպան, Նորին գերազանցություն Վալերիան Զորինին։

Երեկոյան ժամը 8-ին հյուրանոցի Իր հարկարաժնում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը պրն. Երվանդ Հյուսիսյանի։

Հուլիսի 19-ին՝ ուրբաթ.—*Վեհափառ Հայրապետը, տ. Գյուտ ծ. վարդապետի ընկերակցությամբ, Մայր Աթոռի վերաբերյալ գործով, մեկօրյա այցելությամբ մեկնում է Ժնև և Փարիզ է վերադառնում նույն օրը երեկոյան ժամը 10-ին։ Ժնևում Հայոց Հայրապետին ողջունում են պր. Շարլ Փիլիպոսյանը, պր. Սարգիս Քյուրքչյանը և պր. Կարապետ Ղազարյանը։*

Հուլիսի 20-ին՝ շաբաթ.—*Առավոտյան ժամը 9-ին հյուրանոցում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելություններ Մարսելից ժամանած մի պատվիրակության, որի թվում՝ պրն. Հակոբ Պապիկյանի, Կարապետ Ճանիկյանի, Ավետիս Մելքոնյանի և Սեդրակ Սամվելյանի։*

Ժամը 10-ին հյուրանոցի Իր հարկարաժնում Վեհափառ Հայրապետը ընդունում է Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ տ. Պոսակ արքեպիսկոպոսի այցելությունը։

Ժամը 7-ին Վեհափառ Հայրապետին են այցելում հյուրանոցի Իր հարկարաժնում Լոնդոնից Հարություն Մութաֆյանը, Հայկ Գալստյանը և Աստատուր Կյուզելյանը։ Ապա Վեհափառ Հայրապետին է այցելում Ժնևից պր. Կարապետ Ղազարյանը։

Հուլիսի 21-ին՝ կիրակի.—*Վարդավառ. Օրվա մեծ տպավորի առիթով առավոտյան ժամը 10-ին Փարիզի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում և քարոզում Վեհափառ Հայրապետը, որին ներկա են լինում քույր եկեղեցիների հոգևոր պետեր, այդ թվում՝ պապական նվիրակ մոնսինյոր Պոլ Բերթոլին, մոնսինյոր Կրուեն՝ Փարիզի արք.-ի հոգևոր պետերի ներկայացուցիչ, տ. Կարապետ եպս. Ամատունին, վերապատվելի Գ. Սիսքլյան և ժողովրդական հոծ բազմություն։*

Ժամը 12-ին Արևմտյան Եվրոպայի հայոց Հայրապետական պատվիրակ սրբազանը և Հայաստանյայց տոարիկական եկեղեցու կրոնական ընկերակցությունը ի պատիվ Հայոց Հայրապետի Պլսոգ Աթենե հյուրանոցի շքեղ սրահում ընդունելություն են կազմակերպում, որին մասնակցում են Փարիզի, Լիոնի, Մարսելի, Մոնակոյի, Միլանոյի, Ժնևի, Բելգիայի, Լոնդոնի եկեղեցական վարչության անդամներ, կառավարության ներկայացուցիչներ և փարիզահայ հոգևորականություններ՝ շուրջ 60 հոգի։

Ժամը 4-ին Վեհափառ Հայրապետին է այցելում Երուսաղեմի հայոց դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի և Ընծայարանի տեսուչ տ. Շահե եպս. Աճեմյանը։

Ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը ընդունում է հյուրանոցում այցելությունը Փարիզի հայ կաթողիկե համայնքի պետ տ. Կարապետ եպս. Ամատունու։

Ժամը 6-ին Վեհափառ Հայրապետին են այցելում լոնդոնահայ ազգայիններ պրնք. Հ. Մութաֆյանը, Հ. Գալստյանը և Ա. Կյուզելյանը։

Հուլիսի 22-ին՝ երկուշաբթի.—*Ժամը 11-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելություններ Փարիզի հույն որթոդոքս և Կ. Պոլսի հունաց տիեզերական պատրիարք Աթենագորասի ներկայացուցիչ տ. Մեթոդիոս արքեպիսկոպոսի։*

Ժամը 2-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետին է այցելում երիտասար-

գության մինիստր, պետական քարտուղար Լ. Մարսելի երեսփոխան Ժոզեֆ Քոմիտին։

Ժամը 1-ին առաջնորդարանում Վեհափառ Հայրապետին սեղանակից է լինում Փարիզի հայ հոգևորական դասը։

Փարիզ քաղաքի մեդալը՝ տրված Վեհափառ Հայրապետին՝ պաշտոնական այցելության առթիվ քաղաքապետարան
(Փարիզ, 1968 թ. հուլիսի 23)

Ժամը 8-ին Արևմտյան Եվրոպայի հայոց հայրապետական պատվիրակ սրբազանը և Փարիզի Հայաստանյայց առաքելական եկեղեցու կրոնական ընկերակցությունը Հայոց Հայրապետի պատվին Պլաժա Աթենե հյուրանոցի շքեղ սրահում կազմակերպում են Փարիզի քույր եկեղեցիների հոգևոր պետերի մասնակցությամբ սիրո ճաշ՝ էկումենիկ սրտագին մթնոլորտում, որին ներկա են լինում պապական նվիրակ Պոլ Բերտոլին, մոնսինյոր Ռիդղալլահ արք. Մարոնիտ եկեղեցու, ռուս պրավոսլավ եկեղեցու պետ Նորկիոս արք., հույն-կաթոլիկ եկեղեցու պետ Ժոզեֆ Նասրալլահ արք.-ը, Մոնակոյի Շառլ Ռյուպ եպիսկոպոսը, Փարիզի արք.-ի ներկայացուցիչ մոնսինյոր Կուեն, հույն օրթոդոքս եկեղեցու պետ միտրոպոլիտ Սելիտիոսը, Քենտրբերիի արք.-ի ներկայացուցիչ հայր Ռոժե Կրիհակրը, տ. Կարապետ եպս. Ամատունին, վերապատվելի Գ. Սիսլյանը, պր. Ժան Լարշ, Ֆրանսիայի արտաքին գործերի ներկայացուցիչ, պրն. Օդիբերտ՝ կրոնի մինիստրության տեսուչը, Ֆրանսիայի լուսոքական կոնֆեդերացիայի նախագահ հովիվ Շարլ Վեստհալը և այլ հոգևոր ներկայացուցիչներ։

Հուլիսի 23-ին՝ երեքշաբթի.—Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը ընդունում է Մարսելում հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Հակոբ եպս. Վարդանյանի և ապա՝ Մարսելից մի պատվիրակության, այդ թվում պրնք. Արծրուն Ջրբաշյանի, Զարմայր և Զավեն Ալեքսանյանների և Հարություն Քեչյանի այցելությունները։

Ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի, պաշտոնական այցելություն է տալիս Քե դ՝ Օրսեի մեջ արտաքին գործոց մինիստր Միշել Դեբրեին։

Ժամը 6-ին Վեհափառ Հայրապետը, եկեղեցական և աշխարհական մեծ շքախմբով, պաշտոնական այցելություն է տալիս Օթել Դը Վիլի մեջ Փարիզի քաղաքապետ Բեռնարդ Ռոշեին՝ ի ներկայության ֆրանսիացի և հայ շուրջ 200 հրավիրյալների։

Հայոց Հայրապետն ու պրն. քաղաքապետը ողջույնի ճառեր են փոխանակում։ Ապա Փարիզի քաղաքապետ պրն. Բ. Ռոշեն և քաղաքապետարանի խորհուրդը ի պատիվ Հայոց Հայրապետի Օթել Դե Վիլի շքեղ դահլիճում կոկտեյլի հյուրասիրություն են կազմակերպում, սրտագին մթնոլորտում, որին ներկա են լինում շուրջ 200 ֆրանսիացի և հայ հրավիրյալներ։

Ժամը 9-ին ֆրանսահայությունը ողջերթի շքեղ ճաշկերույթով պատվում և մեծարում է Հայոց Հայրապետին Գրանդ Հոթել հոյակերտ դահլիճում՝ մասնակցությամբ 600 հրավիրյալների։ Հայոց Հայրապետը վերջում հանդես է գալիս հրաժեշտի բովանդակալից ճառով։

Հուլիսի 24-ին՝ շաբաթ.—Ժամը 1-ին Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Փարիզից և շուրջ 100-օրյա 7 երկրներ կատարած իր պատմական ուղևորությունից վերադառնում է Մոսկվա և ամսի 27-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 7-ին, ժամանում է Մայր Աթոռ ս. Էջմիածին։

Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետի ժամանումը ողջունում են Մայր Աթոռի միաբանները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, վանքի պաշտոնեությունն ու հոծ բազմություն, գլխավորությամբ լուսարարապետ տ. Հայկազուն արք.-ի։

Վեհափառ Հայրապետը և Փարիզի քաղաքապետ Բեռնար Ռոշեն
(Փարիզ, 1968 թ. Հուլիսի 22)

Հայոց Հայրապետին բարի գալուստ է մաղթում նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը։

Մայր տաճարում, հանուն Մայր Աթոռ սրբ. Էջմիածնի միաբանության, Գերագույն հոգևոր խորհրդի, պաշտոնության և ժողովրդի, բարի գալուստ է մաղթում Վեհափառ Հայրապետին լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը։

Վեհափառ Հայրապետը ողջունում և օրհնում է բոլորին, նախ սփյուռքի հայությանը եղբայրական ողջույններ է հաղորդում և ապա համառոտակի խոսում արտասահմանյան իր ուխտերորդ ուղևորության հոգևոր-եկեղեցական և հայրենասիրական նշանակության մասին։

Հուլիսի 28-ին՝ կիրակի.— Մայր տաճարում սրբ. պատարագ է մատուցում հայրապետական շքախմբի անդամ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը և քարոզում՝ Վեհափառ Հայրապետը՝ ներկա հոծ բազմությանը ողջունելով և օրհնելով։ Ն. Ս. Օծությունը իր քարոզի մեջ հայտնում է հայրենիքի ժողովրդին սփյուռքի հայության սրտագին և եղբայրական ողջույններն ու պատմում արտասահման իր ուղևորության պատմական, եկեղեցական և հայրենասիրական նշանակության մասին։

Բարի գալուստ մեր սիրելի Վեհափառ Հայրապետին։

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ՔԱՂՎԱԾ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ 1968 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԻՑ

Ամեն անգամ, երբ քրիստոնեական եկեղեցի մը կկառուցվի, Մենք կհիշենք՝ աշխարհը Քրիստոսի Ավետարանով վերակառուցելու մեր առաքելության մասին:

*
* *

Աստված մեռած չէ և ոչ ալ Մարդը՝ մարդուն մեջ: Մենք կհավատանք թե մարդիկ կոչված են աստվածաճանաչության և անմահության:

*
* *

Մի խորհիք թե մեր ժամանակները փոխված են, թե փոխված են կյանքի պայմանները, թե կրոնական առաքելության մասին խոսիլ այնքան ալ այժմեական չէ: Այո փոխված են կյանքի պայմանները, սակայն փոխված չեն և չի կրնար փոխվիլ մարդը, իր խոր ապրումներու աշխարհով, իր հոգիի ծարավով դեպի հավիտենական ճշմարտություններ և փրկության ճանապարհ մը գտնելու հույսով: Ժամանակները այո փոխված են, սակայն անոնք տակավին պիտի փոխվին, ճշմարիտ կըսենք ձեզի:

*
* *

Հայ ժողովուրդը ևս իբրև քրիստոնեական կրոնքը դավանող ժողովուրդ, կազմակերպած է իր անկախ և ինքնագլուխ եկեղեցին, իր նվիրապետությունը, իր հայրապետությունը և այդպես ապրած է իր ամբողջ կյանքը՝ հիա ավելի քան տասն և վեց դարերե ի վեր: Ինքնուրույն և ինքնագլուխ եկեղեցի ըլլալով, ան չէ կամեցած անջատվիլ ընդհանուր քրիստոնեական եղբայրութենեն,

Քրիստոսի ընդհանրական եկեղեցիեն։ Ե դարուն սկիզբ առած հայ եկեղեցվո մեկուսացման ողբերգությունը, հետևանքն է եղած քրիստոնյա Բյուզանդիոնի որդեգրած նվաճողական քաղաքականության, Հայաստանի և հայ եկեղեցվո նկատմամբ։ Բյուզանդիոն կըսեր հայերուն՝ Քրիստոս մեկ է, եկեղեցին մեկ է, հետևաբար մեզի հետ մեկ մարմին պետք է դառնաք։ Փաստորեն Բյուզանդիոն կձգտեր քրիստոնեական կրոնքի տիեզերականությունը ծառայեցնել իր պետության տիեզերականության։ Քրիստոնեական տիեզերականության գաղափարը Բյուզանդիոնի համար դարձավ մղիչ ուժը և դավանանքը իր քաղաքական տիրապետության տիեզերականացման։

Հայ ազգը ընդդիմացավ, հայ եկեղեցին հետևեցավ իր ժողովուրդին։

* * *

Հայ եկեղեցին ու ժողովուրդը դարեր շարունակ պաշտպանեցին իրենց հոգևոր ու ազգային ինքնությունը և անկախությունը, քրիստոնեությամբ՝ ընդդեմ Պարսկաստանի և քաղկեդոնը մերժելով՝ ընդդեմ Բյուզանդիոնի։

* * *

Քրիստոնեական հավատքը վերջնականապես միավորեց, բյուրեղացուց հայ ժողովուրդի հոգին։ Քրիստոնեությունը հայ ժողովուրդին տվավ կյանքի նպատակ, բովանդակություն։ Հայ ժողովուրդը քրիստոնեությունը ընդունեց ոչ իբրև դուրսեն եկած կրոնք մը, արտաքին ազդեցության մը հետևանք, այլ հայ ժողովուրդը քրիստոնեությունը յուրացուց ինքնուրույն ձևով, ստեղծագործ ձևով և զայն մշակեց, փառավորեց և նոր ձևերով զայն արտահայտեց։

* * *

Բոլոր քրիստոնյա եկեղեցիները Մենք կնկատենք մեր հարազատ քույր եկեղեցիները, բոլորի հանդեպ հարգանք և գնահատանք ունինք։ Բոլոր եկեղեցիները պետք է մոտենան իրարու, ճանչնան և սիրեն զիրար, վերացնեն փոխադարձ հին նզովքները և անհանդուրժող ոգին, հեռու մնան իշխանամոլ ձգտումներե, և հավասարե հավասարի գիտակցությամբ, ձեռք-ձեռքի տված գործակցին, իրենց նպատակը բերելու վճռականությամբ՝ արդի աշխարհի առաջ դրված կենսական հարցերու լուծման ի խնդիր։

* * *

Այո՛, տագնապի մեջ է այսօր աշխարհը, և մարդկությունը՝ ցավատանջ որոնումներու մեջ։ Բոլորը կտառապին հոգեկան ստուգությանց, հավասարակշռության ծարավեն։ Այս իրադրությունը հրավեր մըն է մեզի հոգևորականներուս ուղղյալ, որ բանանք մեր աչքերը, փնտրելու և գտնելու համար միջոցները, որոնք պիտի կարողանան հագեցնել ծարավը մեր օրերու մարդուն։ Այս կնշանակե շարունակել մեր քրիստոնեական առաքելությունը նոր կերպով, նոր ոգիով, այնպես, իբրև թե Ավետարանը ավետվեր հատկապես արդի աշխարհին համար։ Կխորհինք թե շատ ճշմարտություն կա Ջիովանցի Բարիի խոսքին մեջ, թե՝ ամեն դար իր Ավետարանը ունի։

*
* *

Եկեղեցիով դիալոկի մեջ գտնվիլ աշխարհի և կյանքի հետ, եկեղեցիով մնալ արդի աշխարհին մեջ ու անոր հետ, կնշանակե նաև որ եկեղեցին դիալոկի մեջ գտնվի այն հասարակության հետ, որ իր հավատացյալներու անմիջական շրջանակը կկազմե։ Մեր պարագային կնշանակե հաղորդակցության մեջ գտնվիլ հայ ժողովուրդին հետ, անոր ներաշխարհին հետ, անոր հոգևոր ապրումներուն, իղձերուն և երազանքներուն հետ։ Մեզի համար արդի աշխարհը նախ և առաջ մեր արդի հավատացյալ ժողովուրդն է։ Աշխարհին ու մարդկության հետ մենք կառնչվինք մեր փոքր ածուի միջոցով։ Մեր եկեղեցին հետևաբար դիալոկի մեջ պիտի ըլլա նախ իր ժողովուրդին հետ ու այդ ճամփով նաև մարդկության հետ։

Անհեթեթ պիտի ըլլար մեր մեջ խոսիլ աշխարհի հետ դիալոկի մասին և անտեսել մեր սեփական ժողովուրդը, որուն ծոցին մեջ կոչված ենք գործելու։ Մեզի հանձնած հոտը, հայ ժողովուրդը՝ այդ մեր աշխարհն է։

*
* *

Հայ եկեղեցին թե իր կրոնական պատմական առաքելությամբ և թե արդի աշխարհի մեջ և անոր հետ դիալոկի մեջ գտնվելու անհրաժեշտությամբ, պետք է առավել սիրով և վճռականությամբ նվիրվի իր սեփական ժողովուրդին և անոր հոգևոր կյանքին շինության գործին։ Նվիրվիլ և ծառայել հայ ժողովուրդի հոգևոր շինության գործին, այդ կթելադրե մեզի նաև պահպանել հայ եկեղեցին իր հայկական ազգային նկարագրով։ Մեր համոզումն է, թե աշխարհի հետ դիալոկի մեջ գտնվելու ձևերեն ու պայմաններեն մեկն է դավանիլ ազգություններու գոյության իրողությունը, որպես օրինաչափ, բնական իրողություն։ Մարդկային հասարակական կյանքի գոյության ու կեցության պատմականորեն ամենաբնորոշ ձևը ազգայինն է։

*
* *

Ինչքան ժամանակ մարդկությունը կազմավորված և կազմակերպված կմնա ազգային հավաքականությանց մեջ, քրիստոնեական եկեղեցին ազգային ձև տալ, տվյալ ազգի մը ծոցին մեջ, կնշանակե այդ ազգային հավաքականությունը օրգանապես ներգրավել եկեղեցվո մեջ, կրոնական առաքելության ճամփուն վրա։ Այս իրավ է մասնավորապես մեր հայ եկեղեցիին պարագային։ Մերկացնել հայ եկեղեցին իր ազգային դիմագծութենեն, իր մշակութային, ազգային արժեքներեն և իր ժողովուրդին ապրումներեն, իդեալներեն, պիտի նշանակեր տկարացնել հայոց կրոնական հավատքը և անհարազատ դարձնել հայ եկեղեցին մեր ազգին։

*
* *

Մեր մտածողության մեջ, ազգություն-ազգային հասկացությունները՝ մարդկային ոգեկանության ձևեր և արտահայտություններ են, առողջ, բնական ու ստեղծարար։

Ուղիղ գնահատելով ազգային նկարագիրը մեր եկեղեցիին, պիտի կարողանանք առավել արդյունավետությամբ դիալոկի մեջ մնալ մեր ժողովուրդին հետ, ի խնդիր մեր կրոնական առաքելության հաջողության։

«Պահպանում հայ եկեղեցվո ազգային նկարագրին» ըսելով, Մենք բնավ չենք հասկնար շեղում մեր եկեղեցվո զուտ կրոնական առաքելութենեն, այլ կհասկնանք այդ առաքելությունը կենսագործել մեր ազգային հավաքականության հատուկ ձևերում և սահմաններում մեջ:

*
* *

Եկեղեցական հարցերու նկատմամբ երկու մոտեցում հնարավոր է: Մեկը՝ բանական մտածելակերպն է, որով մեզմե ամեն մեկը կրնա իր բանականությամբ, իր տրամաբանությամբ քննարկել հարցերը և լուծում առաջադրել: Երկրորդը՝ մտածելակերպն է ավանդության ձևերու սեջ, կամ ինչ որ նույնն է՝ հետևելով ավանդության և պատմության տրամաբանության: Մենք, Հայաստանյայց եկեղեցին, անշարժ պետք է մնանք մտածումի այս երկրորդ պատվանդանին վրա, որ ապահովն է և փորձվածը: Օրմանյան պատրիարք պիտի ըսեր՝ «Իրական գործերու լուծումը փորձառական մեկնությամբ կկատարվի, և ոչ հնարավորությանց բացատրությամբ» (Արարատ, 1888 թ., էջ 286): Ուրիշ եկեղեցիներու փորձառություններեն Մենք դյուրավ կրնանք հաստատել թե ո՞ր կրնա տանիլ զմեզ ռացիոնալիստ ուղղությունը: Այդ ճամփով է որ ձեր երկրին մեջ ծանոթ քրիստոնյա աստվածաբաններ հասան այնտեղ, որ հանդիսավոր կերպով ի լուր աշխարհի շեփորեցին թե «Աստված մեռած է»:

*
* *

Սպասելի է որ մենք հոգևորականներս ավելի հավատք ունենանք մեր սուրբ գործի նկատմամբ, ավելի գաղափարական բովանդակություն դնենք մեր կյանքին և մեր աշխատանքին մեջ, առանց անձնատուր ըլլալու արծաթին, անկարգության և ծուլության և եսակեդրոն հակումներուն:

*
* *

Սուրբ սեղաններեն մենք կքարոզենք մեր ժողովուրդին՝ սեր և եղբայրություն, գութ և ներողամտություն, և բարոյական առաքինություններ: Կդատապարտենք արծաթասիրությունը, փառասիրությունը, սուտն ու կեղծիքը, նախանձն ու ատելությունը: Մեր կոչումն է այդ, մեր սեպուհ պարտքը: Եվ մեր խոսքը պետք է ըլլա իրավ արտահայտությունը մեր բովանդակ էության և մեր սեփական կյանքին: Այլապես խոսքը կդառնա մեռյալ և մենք կրնանք նմանիլ «խոսքի վաճառականներու», որոնց մասին արգահատանքով կխոսի Պողոս առաքյալ (Բ Կորնթ. Բ 17):

*
* *

Հայոց պատմությունը, համաշխարհային իմաստով արժեք կներկայացնե, իբրև պատմությունը ժողովուրդի մը որ հանուն քրիստոնեական հավատքին և հանուն ազատության երկու հազար տարիներե ի վեր կմարտնչի: Եթե

քրիստոնեական հավատքի պահպանումը, և հանուն ազատության պայքարը, դատարկ խոսքեր չեն և իսկապես համամարդկային արժեք կներկայացնեն, այն ժամանակ հայոց պատմությունը իր պատվավոր տեղը ունի հսմաշխարհային պատմության բեմին վրա: Հայոց պատմությունը դյուցազներգություն մըն է հանուն Քրիստոսի և հանուն ազատության: Եվ այդ պատմությունը պետք է ավանդել, սորվեցնել մեր նոր սերունդին, որպեսզի ան ճանչնա ինքզինքը և հպարտ ըլլա իր ազգությամբ:

* * *

Ազգերու պատմությունը իրար հաջորդող հանգրվաններու շղթա մըն է: Ապագան կապված է անցյալի ժառանգությանց, ներկայի միջոցավ. չտեսնել ու չհասկնալ ներկան, չգնահատել ու չնպաստել անոր զարգացմանը՝ կնշանակե չաշխատիլ ապագայի համար:

* * *

Կխորհինք թե օգտակար է որդեգրել գործելու այնպիսի եղանակ, որ այսօր ոչ իրագործելի գաղափարները և ծրագիրները, արգելք չհանդիսանան ազգապահպանման համազգային ճիգերուն և ծրագիրներուն, որոնց կենսագործումը հնարավոր է մեր օրերուն:

* * *

Հայաստանի ձեր եղբայրները և քույրերը, այսօր ավելի քան երբեք, ոգեշնչված են ու գոտեպնդված իրենց հերոսական պատմության շունչով, իրենց բազմադարյան մշակույթի ժառանգությամբ, իրենց հայրենիքի գերագույն շահերու գիտակցությամբ և իրենց ազգային արժանապատվության ու հպարտության զգացումով:

Մեր մայր երկրի մեջ, տնտեսական, մշակութային և քաղաքաշինական լայնածավալ զարգացման զուգընթաց, այսօր պայծառորեն կծաղկի նաև ազգային ինքնաճանաչման ու ինքնակերտման ոգին: Ամենայն հայոց ապագան կդարբնվի հայոց մայր հողի վրա, ներկա իրականության հաստատուն պատվանդանին վրա՝ չարքաշ, շինարար և ստեղծարար աշխատանքովը հայրենաբնակ ձեր եղբայրներուն:

* * *

Մայր Աթոռ ս. Էջմիածին, այսօր է և հավետ պիտի ըլլա ինչ որ եղած է ի սկզբանե՝ այսինքն վեմ հավատքի, լույս հոգիներու և պաշտպան հայրենյաց:

* * *

Հայ հոգևոր անկախությունը և գիտակցությունը պայծառացավ վերջնականապես, հայ եկեղեցիին մեջ, ս. Էջմիածնի գլխավորությամբ, քրիստոնեությունը ընդունելե 120 տարի հետո, Ե դարու սկիզբներուն, մեր ազգը իր հոգե-

վոր և ազգային վերածնունդի ամենամեծ պահը ապրելու ս. Մեսրոպի, ս. Սահակ կաթողիկոսի և Վռամշապուհ թագավորի սքանչելի օրերուն: Սխալ չըլլար, եթե հաստատենք, թե իսկապես, ամբողջական և վերջնական կերպով հայ ժողովուրդը հոգեպես վերածնավ և կազմակերպվեցավ Ե դարուն: Ս. Էջմիածինն է որ այս ճանապարհը բացավ հայ ազգի առջև և երբ պարսիկները 451 թվականին արշավեցին Հայաստան, քրիստոնեությունը արմատախիլ ընելու համար, այն ժամանակ հայ ժողովուրդը հոգևոր և ազգային ամբողջական գիտակցությամբ ոտքի կանգնեցավ և կերտեց Ավարայրի հերոսամարտը: Այն սո՛րը որ բարձրացավ թշնամիին դեմ, Վարդանի սուրը ս. Էջմիածինեն փայլատակեց: Ավարայրի ճակատամարտը ոգեշնչողը ս. Էջմիածինն էր և Հայոց Հայրապետը, Հովսեփ կաթողիկոս:

* * *

Ապրեցեք և գոյատևեցեք, այնպես ինչպես Աստված է ձեզ ստեղծեր և այնպես ինչպես մեր եկեղեցին ու դարերն են կերտեր ձեզ և ոգեշնչեր: Մենք հոգի կրող և հոգի ստեղծող ազգ ենք: Մեր հոգիի հայելին մեր կրոնական հավատքն է, մեր ազգային մշակույթն է, աշխարհի կյանքը ապրելու ու գործելու մեր ազատ կամքն է, աստվածակառույց ս. Էջմիածնի օրհնության ներքև:

* * *

Հայ եկեղեցի և հայ դպրանոց, մեկը մյուսով կապրին ու մեկը մյուսով կրնան գոյատևել: Առանց հայ լեզվի, առանց հայ գիր-գրականության, առանց հայոց պատմության, հայ եկեղեցին ժամանակի ընթացքին կկորսնցնե իր ոգեկան իսկությունը, կկորսնցնե նույնիսկ իր ինքնուրույն գոյության իմաստը: Մինչդեռ ձեր բոլորին ուխտը և առաքելությունը պետք է ըլլա անսասան ու անաղարտ պահպանել մեր նախնյաց եկեղեցին, իբրև Հայաստանյայց առաքելական եկեղեցի: Իր հայկականությամբ, և միմիայն իր հայկականությամբ է որ մեր եկեղեցին այիտի կարողանա պահպանվիլ իբրև ինքնարժեք և ինքնատիպ վաղեղական քրիստոնեական եկեղեցի:

Մենք չենք ըսեր ձեզի՝ մի ըլլաք ամերիկացիներ. սակայն ամերիկացի ըլլալ չի նշանակեր հայ չմնալ:

* * *

Հայ ըլլալ և հայ ապրիլ, ահա աշխարհի հոգևոր-բարոյական գեղեցկություններեն մին:

* * *

Ամեն ժողովուրդ իր հավաքական կյանքով կձգտի, գաղափարի մը ծառայել և գերագույն նպատակի մը կենսագործումը հետապնդել: Մենք հայերս մարդկային աշխարհի մեջ ի՞նչ գաղափարի պետք է ծառայենք, ի՞նչ նպատակ պետք է հետապնդենք, ինչո՞վ պիտի արտահայտենք և արդարացնենք մեր գոյությունը, մեր կյանքի իմաստը:

Սեր կաշիքով, հայ ազգը իր առաքելությունը, իր կոչումը պետք է նկատե՝ ինքնահիրականացումը, ինքնակերտումը, այսինքն արտահայտումը, աճե-

ցումը, երանգավորումը իր ոգեկան շնորհներուն, իր ստեղծագործ ուժերուն, կյանքը իր ազատ կամքով ապրելու, ընթանալու և արտացոլելու իր ոյժերն կերպերուն:

* * *

Մենք համրանքով փոքր ենք և ցրված, չունինք ոսկի և արծաթ, չենք կրնար զմեզ աշխարհին պարտադրել գինու զորությամբ: Մեր գենքերը մեր հոգևոր ու մշակութային արժեքներն են որով պիտի կարողանանք շարունակել իմաստ տալ մեր ազգային գոյության: Ու մենք կհավատանք թե տակավին թաքուն և անսպառ ուժեր կան հայ ազգի հոգեկան ներաշխարհին մեջ: Պեղել հարկ է զանոնք և լույս աշխարհ բերել: Հայ ժողովուրդը տակավին իր խոսքը ունի ըսելու աշխարհին:

* * *

Հայ ժողովուրդը ստեղծված է և կոչված՝ ապրելու և իր մեջ և իրմով և իր ոճով՝ իրականացնելու կերպարը մարդուն, մարդկայինին:

* * *

Անթիլիասի կիլիկյան Աթոռը չի կրնար հայ եկեղեցվո գլուխ ըլլալ. անոր իշխանությունը կտարածվի միմիայն այն թեմերուն վրա, որ իրեն փոխանցված են 1929-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի հաճությամբ և օրհնությամբ, և Երուսաղեմի պատրիարք Եղիշե Դուրյանի կարգադրությամբ:

Մենք անշեղ կերպով կդեկավարվինք մեր երջանկահիշատակ նախորդներուն ոգիով և կընդունինք Անթիլիաս հաստատված կիլիկյան Աթոռի գոյությունը և կազմակերպությունը իբրև անքաժան մասը մեջ եկեղեցվո մարմնին և ճվիրապետության, իր ուրույն և ինքնավար տեղական իշխանությամբ ու իրավասություններով, պայմանավ որ ան հարգե իրեն շնորհված իշխանության սահմանները և իսպառ հրաժարի Մայր Աթոռ սուրբ Էջմիածնից հակադրվելու իր վերջին տարիներու մտայնութենեն:

* * *

Որևէ Հայոց Հայրապետ և որևէ իրավ հայ քրիստոնյա երբեք չեն կրնա հաշտվիլ Անթիլիասի վերջին տասը տարիներու որդեգրած ոգիին և գործելակերպին հետ: Ոգի և գործելակերպ, որոնք հստակ կերպով կբնորոշվին և կարտահայտվին այդ Աթոռին նոր կանոնադրության 32-րդ և 33-րդ հոդվածներով:

* * *

Անթիլիասի անջատողականության քաղաքականությունը որ շարունակվեցավ նաև 1963-ի ողջագուրումեն հետո, հայ եկեղեցիին և ժողովուրդին հասար վնասարարություն կհանդիսանա: Եթե այդ կացությունը տևական մնա, ապագային պիտի դառնա կատարյալ աղետ մը, գուցե այլևս անդար-

մանելի հայ ժողովուրդի համար, թե եկեղեցական և թե ազգային տեսակետով։ Հետևաբար, մենք պիտի շարունակենք անձանձրույթ կերպով ալոթել և փոյ-ձել որպեսզի սփյուռքի մեջ վերահաստատվի հայ եկեղեցիին խաղաղությունը և գործակցությունը։ Եվ խաղաղությունն ու գործակցությունը կարելի է իրա-գործել վերահաստատումովը օրինականության, կարգապահության և միու-թյան։

* * *

Սուրբ Պողոս առաքյալ մեզի կպատվիրե հնազանդ ըլլալ մեկս մյուսին, Քրիստոսի երկյուղով, Քրիստոսի սիրով։ Արդարև, ով իրավ հավատք և սեր ունի առ Աստված և դեպի սուրբ եկեղեցին, ան կհարգե, կսիրե իր եղբայրը, ա-նոր մեջ տեսնելով արտահայտությունը իր սեփական ապրումներուն և իր մար-տակիցը ի խնդիր իր սեփական իղձերու իրագործումին։ Հիշենք կրակե խոս-քերը Հովհաննես առաքյալին. «Եթե մեկը ըսե թե զԱստված կսիրե, բայց իր եղբայրը կատե, անիկա սուտ է», «ով որ զԱստված կսիրե, կսիրե նաև իր եղ-բայրը» (Հովհ. Դ 22—21)։

* * *

Ջանացեք դառնալ սիրո համայնք մը, հայաստանյայց քրիստոնյաներու նշմարիտ եղբայրություն մը՝ սիրով միաբանած, և գործեցեք միասին և միաս-նաբար, կարգ ու կանոնի գիտակցությամբ, համերաշխած փոխադարձ գնա-հատանքով ու հարգանքով, ի հարկին փոխադարձ ներողամտությամբ։

Ուր խաղաղություն կա և եղբայրական սեր, այնտեղ կիջնե Տիրոջ օրհ-նությունը։

* * *

Ինչպես Քրիստոս, երրորդ օրը մեռելներեն հարություն առավ, այնպես ալ հայ ժողովուրդը, երեք տարի հետո հարություն առավ և կոչվեցավ նոր կյանքի, գրեթե հրաշքի համազոր պայմաններու մեջ։ 1915-ի Ապրիլին հա-ջորդեց 1918-ի Մայիսը։ Եվ այնպիսի մեկ պահու, երբ երկրորդ եղեռն մը կըս-պառնար մեր վերապրող ժողովուրդին, Արևելահայաստանին, արյունաքամ ժողովուրդի մեր զավակները մեկտեղվեցան, բռունցքի մը վերածվեցան անխորտակելի և ստեղծեցին, կոթողեցին հայոց պատմության երկրորդ Ավար-այրը՝ Սարդարաբադի ճակատամարտը։

* * *

Հայ ժողովուրդը հազիվ իր վերքերը սկսեր էր ամոքել և երազել ապա-գայի մասին, ահա նոր սև ամպեր կուտակվեցան հայոց աշխարհի վրա, երբ հայ ժողովուրդին գրեթե պիտի պարտադրվեր Ալեքսանդրապոլի սև դաշնա-գիրը։ Նորեն հրաշքի համազոր իրադարձություններով, հայ ժողովուրդը իր խաղաղ կյանքը կարողացավ շարունակել իր նորաստեղծ մայր հայրենիքի, հավիտենական Հայաստանի հողին վրա։

Հայ ժողովուրդը այդ մահագույժ սև թուղթը պատռեց և ընթացավ դեպի նաուաջ՝ անվտանգության, խաղաղության և նոր զարգացման ու հառաջդիմության ճանապարհով։

Մեր նոր պատմության մեծ ճշմարտություններեն մեկն է, որ եթե Ալեքսանդրապոլի դաշնագիր կոչվածը գործադրվեր՝ մեր ազգը պիտի կորսնցներ այն ինչ որ շահած էր Սարդարաբադի ճակատամարտին և մայիս 28-ը սուգի մեջ պիտի թաղվեր։

•
• •

Այնպես, ինչպես մայր երկրի հողի վրա կաճի ու կզարգանա հայրենական ծառը, այնպես ալ մշակույթի որևէ արժեք իր արմատներով անբաժան է հայրենի հողեն, անբաժան է անցյալեն, այսօրվան կյանքեն և արդի ազգային հասարակութենեն, անոր հոգիեն և ապրումներեն։

•
• •

Որևէ հայ արվեստագետ արտասահմանի մեջ, բանաստեղծ, գրագետ, երաժիշտ կամ նկարիչ, եթե պիտի ուզե իսկապես առնչվիլ հայ ազգային մշակույթին հետ և տեղ մը գրավել չափով մը գոնե, հայ արվեստի պատմության մեջ, պետք է հերոսական ճիգ ի գործ դնե իր ներշնչումը և ստեղծագործական ավիշը ստանալու՝ արդի ապրող ու զարգացող հայոց հայրենիքի և հայաստանցի ժողովուրդի կյանքի ակունքներեն։

•
• •

Անհրաժեշտ չէ ամեն գնով և միշտ՝ ազգայինը, հայրենասիրականը շեշտել, գեղարվեստական ստեղծագործության մեջ։ Վասն զի երբեմն այդ ճանապարհով գեղարվեստական խոսքը կրնա վերածվին ճառախոսության կամ բարոյախոսության։ Գրական գործ մը կրնա շատ ազգայնաշունչ ըլլալ, սակայն եթե արվեստի մակարդակի վրա չէ, կմնա ճառ, և ոչ թե արվեստի գործ։ Միսաք Մեծարենց նույնքան հայ ազգային բանաստեղծ է, ինչքան Սիամանթո, և գուցե քանով մը ալ ավելի։

•
• •

Ոչ մեկ սփյուռքահայ արվեստի մարդ, առավել ևս ոչ մեկ հայ հոգևորական **պետք չէ թույլ տա իրեն քաղաքական վերաբերմունք ճշտելու արդի Հայաստանի գրական-գեղարվեստական ստեղծագործություններու նկատմամբ և առավել ևս հայ ժողովուրդի հոգևոր կեդրոն ս. Էջմիածնի նկատմամբ։** Քաղաքական-գաղափարական մակարդակի վրա կրնան տարբեր դիրքավորումներ ըլլալ, սակայն ոչ հայ մշակույթի և հայ եկեղեցական կյանքի մակարդակի վրա։ Մեր սիրտը կայրի երբ կտեսնենք, թե տակավին կշարունակվին բաժանումները սփյուռքահայ եկեղեցական, գրական-գեղարվեստական կյանքի մեջ։ Այս իրադրությունը հայ սփյուռքը կտանի դեպի քաոսացումը հայկական հոգիին, զոր պետք չէ հանդուրժենք, եթե վճռած ենք իսկապես կենդանի պահպանել արտասահմանի հայությունը։ Մեր ազգային խիղճը կմղե զմեզ աղաղակել այս ճշմարտությունը ի խնդիր պահպանման մեր պան-

դուխտ զավակներու հոգևոր և մշակութային միության և անաղարտության, այնպես, ինչպես ապրեցան դարեր շարունակ մեր լուսաբնակ հայրերը իրենց նահատակությանց իսկ գնով:

* * *

Խաղաղությունը կյանքի առողջ և ստեղծարար ուժերու ներդաշնակորեն զարգացող գոյավիճակն է արդարության լույսի տակ: Մեր օրերուն երբ մարդու հանճարը թռիչք է առած նվաճելու համար նյութական տիեզերքը ամբողջ մինչև արև՝ աղբյուրը լույսին, ինչքան հրաշալի պիտի ըլլար տեսնել հաղթանակը նույն մարդուն բարոյական հանճարին, նվաճումը արդարության և խաղաղության լույսին, որ դարեր առաջ շողաց հավատքի և հույսի բարձունքներեն, աշխարհին բերելով պատգամը Աստուծո՝ «Ցերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն»:

* * *

Թող բոլոր ազգերը և պետությունները գնահատեն զիրար իբրև եղբայրներ և օգնեն իրարու այս աշխարհի վրա որ իր բազում բարիքներով բոլորին կպատկանի հավասարապես, այս արևին տակ որ բոլորը կլուսավորե հավասարապես, միևնույն Աստուծո օրհնության ներքև որ բոլորին կբաշխվի հավասարապես:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 13-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Կիրակի, 8 հոկտեմբերի. Այսօր Վեհափառ Հայրապետի գահակալության 13-րդ տարեդարձն է:

Այս ուրախ առիթով Մայր Աթոռ էին ժամանել բազում ուխտավորներ:

Այս տարվա սեպտեմբերին լրացավ նաև Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակը:

Թեև Ն. Ս. Օծության 60-ամյակի և գահակալության հանդիսությունները պաշտոնապես տեղի ունեցան 1969 թ. հոկտեմբերի 5-ին, այնուամենայնիվ, գահակալության 13-րդ տարեդարձն էլ Մայր Աթոռում նշվեց պատշաճ հանդիսությամբ ի մխիթարություն բազում ուխտավորների, որոնք եկել էին Մայր Աթոռ ս. Էջմիածին Հյուսիսային Ամերիկայից, Արգենտինայից, Սան-Պավլոյից, Բուենոս-Այրեսից, Բեյրութից, Փարիզից և այլ վայրերից:

Օրվա տոնակատարության առիթով Մայր տաճարում հանդիսավոր պատարագ է մատուցում Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ գեր. տ. Տիրայր եպս. Մարտիկյանը:

Տաճարը լիքն է աղոթողներով և բարեպաշտ հավատացյալներով:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է Մայր տաճար՝ ներկա լինելու ս. պատարագի արարողությանը: Երգեցողությունը կատարվում է երգչախմբի կողմից վեհ խորհրդավորությամբ, որին իրենց մասնակցությունն են բերում երգչուհիներ Գոհար Գասպարյանը և Լուսինե Զաքարյանը:

Դասերում տեղ են գրավել Մայր Աթոռի բարերարներ տիարք Հ. Գավուքչյանը, Տ. Տատուրյանը, Հ. Թաթոսյանը՝ իրենց տիկնանց հետ, և այլ հյուրեր:

Հավարտ ս. պատարագի քարոզում է պատարագիչ գեր. տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝ խոսելով հայ ժողովրդի կյանքում Մայր Աթոռ ս. Էջմիածնի կատարած լուսավորական, հայրենասիրական, ազգապահպանման գործունեության մասին, ապա վեր է հանում վերջին տասնամյակում Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի եկեղեցաշեն, հայրանանվեր աշխատանքները, ինչպես նաև հովվապետական այցելությունները սփյուռքի հայության՝ համրապնդումն մեր եկեղեցու միության և հանուն խաղաղության կատարած գործունեության: Ապա կատարվում է հայրապետական

մասղթանք Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Իջման սուրբ սեղանի առաջ:

Հավարտ հայրապետական մաղթանքի Վեհափառ Հայրապետը հանդիսավոր թափորով և հյուրերի ուղեկցությամբ մուտք է գործում Վեհարանի գահասրահը, ուր հանում միաբանության, Գերագույն հոգևոր խորհրդի և հայ ժողովրդի, Վեհափառ Հայրապետի գահակալությունն է շնորհավորում գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը՝ մաղթելով երկար կյանք, արևշատություն Հայոց Հայրապետին և անսասանություն ու պայծառություն՝ Մայր Աթոռին:

Վեհափառ Հայրապետը խոսք առնելով Իր գոհունակությունն է հայտնում հանուն հայ եկեղեցու և ժողովրդի հայտնված շնորհավորական գեղեցիկ խոսքերի, արտահայտությունների համար և նշում է, որ այս տարին բացառիկ է մանավանդ նրա համար, որ մեր ժողովուրդը նշում է նաև այս ամսում իր սիրելի մայրաքաղաքի 2750-ամյակը:

Ն. Ս. Օծությունը բարեմաղթում է, որ մեր վերածնած ժողովուրդը և մայր հայրենիքը ապրեն բարօրության և խաղաղության մեջ:

Ժամը 9-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի գահակալության 19-րդ տարեդարձի, Վեհարանում տրվում է ճաշկերույթ, որի ընթացքում տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, պրոֆ.-դոկտ. Առաքել Առաքելյանը և երաժշտագետ Միհրան Թոմասյանը շնորհավորում են Վեհափառ Հայրապետին:

Ճաշկերույթը վերջանում է Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով և «Պահպանիչ»-ով:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՈՒՓՍԱԼԱՅՈՒՄ

Հուլիսի 4-ին (1968), հինգշաբթի օրը, առավոտյան, Շվեդիայի Ուփսալա քաղաքում բացվեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի չորրորդ համագումարը՝ 2800 մասնակցողներով, որոնք պատկանում էին 80 տարբեր ազգությունների և 230 տարբեր եկեղեցիների: Համագումարի գլխավոր նպատակն էր՝ գտնել միջոցներ և լուծումներ արդի մարդկության դիմաց ծառացող բոլոր հրատապ հարցերի:

Այս նպատակով համախմբվել էին փոքրիկ Ուփսալա համալսարանական քաղաքում 702 պաշտոնական պատգամավորներ՝ քվեարկելու իրավունքով, 71 եղբայրական պատգամավորներ, 147 խորհրդատուներ, 135 երիտասարդ մասնակիցներ, 61 պատգամավորյալ դեսեր, 30 դեսեր, 93 հյուրեր, 53 հյուրընկալ հյուրեր և շուրջ 1500 թղթակիցներ, պաշտոնյաներ և ծառայողներ:

Հայաստանյայց եկեղեցու և ամենայն հայոց հայրապետության անունից որպես պատգամավորներ համագումարին մասնակցում էին՝

Գեր. տ. Սերովբե արքեպ. Մանուկյան (Փարիզ), պատվիրակության նախագահ,

գեր. տ. Պարգև եպս. Գևորգյան (Մոսկվա),

հոգ. տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյան (Վիեննա),

հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյան (Էջմիածին),

հոգ. տ. Արսեն վրդ. Բերբերյան (Լոնդոն):

Համագումարը բացվեց առավոտյան ժամերգությամբ, որ տեղի ունեցավ Ուփսալայի Մայր տաճարի մեջ ժամը 10.30-ից 12-ը: Ներկա էին բոլոր հոգևորականները, պատգամավորները և ժողովականները՝ իրենց պաշտոնական սարազներով: Բացման արարողությանը ներկա եղավ Շվեդիայի թագավոր Գյուստավ Ադոլֆ Զ-ն: Օրվա քարոզիչն էր դոկտ. Դ. Տ. Նայլզը, որը խոսեց բնաբան ունենալով համագումարի նշանաբան-խոսքը Հայտնության գրքից՝ «Ես ամեն ինչ կնորոգեմ» բնաբանով:

Համագումարի բացման պաշտոնական նիստը տեղի ունեցավ նույն օրը հետմիջօրեի ժամը 4.30-ին՝ նախագահությամբ Հյուսիսային և Հարավային Ամերիկաների հույն եկեղեցու արքեպիսկոպոս Յակովոսի:

Բարի գալստյան և հաջողության մաղթանաց ողերձներ կարդացվեցին Շվեդիայի կառավարության և Ուփսալայի քաղաքապետության ներկայացուցիչների կողմից: Մոխրագույն շնորհակալական խոսքից հետո համագումարը անցավ գործնական հարցերի առաջարկության և կարգադրության՝ նախագահությամբ Կենտրոնական կոմիտեի փոխ-ատենապետ դոկտ. Էռնեստ Բելֆի: Ժողովի համար նախապատրաստված ընդհանուր օրակարգը վավերացվեց, աշխատանքային կոմիտեի, ինչպես նաև այլ հանձնախմբերի անձնակազմերը ամբողջացվեցին և հայտարարվեցին: Նախագահը ապա կարդաց Կենտրոնական կոմիտեի հանգուցյալ ատենապետ դոկտ. Ֆրանկլին Ֆրայի կիսատ տեղեկագիրը՝ համալրված փոխ-ատենապետի կողմից: Երեկոյան ցուցադրվեց շարժանկար՝ ներկա աշխարհի որոնումների, հուզումների, անհիրավությանց և կարիքների մասին: Ապա տիար Չարլզ Բարլենի նախագահությամբ և ղեկավարու-

թյամբ տիար Ալբերտ Լահամի քննարկվեցին ցուցադրված շարժանկարները՝ տարբեր աշխարհամասերի, և տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներ կատարեցին համապատասխան դիտողություններ և մեկնաբանություններ:

2. Դոկտ. Վ. Ա. Վիսսերտ Հուֆտ՝ «Էկումենիկ շարժման մանդատը»:

3. Պրոֆ. Հ. Բերքոֆ՝ «Հիսուս Քրիստոսը որպես վերջին կետ-նպատակ»:

4. Հայր Ռոբերտ Տուճճի, դոկտ. Ռոբերտ Բերտրամ և քարոզիչ Քրիստիան Կրուստ՝

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի չորրորդ համագումարի բացումը
(Ուփսալա (Շվեդիա), 1968 թ. հուլիս 4)

Հաջորդ օրերին, հուլիսի 5—8-ը, գումարվեցին ընդհանուր նիստեր, կարդացվեցին տեղեկագրեր և եղան բանախոսություններ՝ համագումարի գլխավոր նյութերի շուրջը: Ներկաները մեծ հետաքրքրությամբ և խոր գնահատանքով լսեցին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Էոժեն Բլեյկի տեղեկագիրը՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի վերջին շրջանի բազմակողմանի գործունեության և արդյունքների մասին:

Համագումարի աշխատանքներին նյութ հայթայթեցին հետևյալ բանախոսված ուսումնասիրությունները.

1. Միտրոպոլիտ Իգնատիոս Հազիմ՝ «Ահավասիկ ես կնորոգեմ ամեն ինչ»:

«Մեծ քրիստոնեական հասարակաց վկայությունը»:

5. Զամբիայի նախագահ Կենեթ Կաունդա և դոկտ. Բարբարա Վորտ (տիկին Ջեկսոն)՝ «Հարուստ և աղքատ ազգեր»:

6. Ջեյմս Բալդուին և լորդ Գարդոն՝ «Սպիտակ ցեղասպանությո՞ւն, թե համաշխարհային համայնք»:

Հռոմեական եկեղեցու վարդապետ հայր Տուճճին հույս հայտնեց հռոմեական կաթոլիկ եկեղեցու անդամակցության հավանականության Եկեղեցիների համաշխարհային խորհրդում՝ մինչև հառաջիկա համագումարը:

Հուլիսի 5-ին Եկեղեցիների համաշխարհային խորհրդում ընդունվեցին հետևյալ

չորս եկեղեցիները, որպես նոր ամբողջական անդամներ՝ բոլորն էլ Աֆրիկայից. ա) մեթոդական եկեղեցի (Քենիա), բ) ավետարանական-լութերական եկեղեցի Հարավային Աֆրիկայի (Տրանսվաալի շրջան), գ) Միացյալ Գոնկրեկասիոն եկեղեցի Հարավային Աֆրիկայի և դ) Մորավյան եկեղեցի Հարավային Աֆրիկայի արևելյան նահանգի: Ընդունվեցին նաև որպես հարակից անդամ եկեղեցիներ՝ բողոքական եկեղեցին Աֆրիկայի Լոլոտորֆ (Կամերուն) և մեթոդական եկեղեցին Կուբայի: Հարակից անդամ են կոչվում այն եկեղեցիները, որոնք 10 000-ից նվազ անդամ ունեն:

Հուլիսի 8-ին ներկայացվեցին համագումարի վեց մասնախմբերի նյութերն ու նախագծերը: Ամենայն հայոց հայրապետության պատգամավորները գործակցեցին հետևյալ կերպով.

ա) Աշխատախումբ-նյութ՝ «Ս. Հոգին և եկեղեցու ընդհանրականությունը», մասնակից՝ տ. Արսեն վրդ. Բերբերյան:

բ) Աշխատախումբ-նյութ՝ «Վերանորոգում առաքելության մեջ»:

գ) Աշխատախումբ-նյութ՝ «Համաշխարհային տնտեսական և ընկերային զարգացում», մասնակից՝ տ. Պարգև եպս. Գևորգյան:

դ) Աշխատախումբ-նյութ՝ «Դեպի արդարություն և խաղաղություն միջազգային գործերի մեջ», մասնակից՝ տ. Սերովբե արքեպ. Մանուկյան:

ե) Աշխատախումբ-նյութ՝ «Աստուծո պաշտամունքը աշխարհիկ ժամանակաշրջանում», մասնակից՝ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյան:

զ) Աշխատախումբ-նյութ՝ «Դեպի կյանքի մի նոր ոճ», մասնակից՝ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյան:

Ա

«Ս. Հոգին և եկեղեցու ընդհանրականությունը»: Այս բաժանմունքի ուսումնասիրության և քննարկման համար դրվել էին հինգ խնդիրներ՝ հետևյալ ենթավերնագրերով.

1. Ներածություն:
2. Խնդիր զանազանության մասին:
3. Խնդիր շարունակականության մասին:
4. Ընդհանուր միության խնդիր:
5. Մարդկության միավորման խնդիր:

Հիշյալ խնդիրները քննարկելու համար կազմված ենթախմբերի մեջ իրենց աշխատանքի բաժինները բերեցին պատգամավորները: 5-րդ ենթախմբում էր գտնվում տ. Արսեն վարդապետը, որը մասնակցեց զրույցներին և արտահայտվեց եկեղեցու ընդհանրականության և միության մասին՝ մի անգամ ևս հիշելով Օգոստինոս Հայրապետի ասած և Ներսես Շնորհալի Հայրապետի շեշտած խոսքը՝ «Միութիւն ի կարևորը, ազատութիւն յերկրայնականն և ամէն յամենայնի»: Արսեն վարդապետը շեշտեց միջեկեղեցական գործունեության միասնականության և փոխադարձ սիրո և գործակցության մասին, որոնք աշխարհի խաղաղության գործին ամրապնդման անպայման կնպաստեն:

Բ

«Վերանորոգում առաքելության մեջ»: Այս աշխատախմբի ուսումնասիրության նյութերն էին հետևյալները.

1. Մանդատ առաքելության համար, ս. Գիրքը իբրև ավետիս վերափոխյալ մարդկության:
2. Պատեհություններ առաքելության համար:
3. Ազատություն առաքելության համար:
4. Գործակցություն առաքելության մեջ:
5. Մարդկության վերջնական հույսը Հիսուս Քրիստոսով:

Սույն բաժանմունքի տեղեկագրերը համագումարի կողմից միաձայնությամբ ընդունվեցին:

Գ

«Համաշխարհային տնտեսական և ընկերային զարգացում»: Սույն աշխատախմբին մասնակցում էր տ. Պարգև եպս. Գևորգյանը: Բաժանմունքը մանրամասնորեն քննարկեց հետևյալ հարցերը և խմբագրեց համապատասխան տեղեկագիր.

1. Քրիստոնեական մտահոգությունը համաշխարհային զարգացման նկատմամբ:
2. Զարգացման մղիչ ուժը:
3. Համաշխարհային զարգացման քաղաքակրթական պայմանները:
4. Տնտեսական և ընկերային զարգացման կապակցությամբ մի շարք մարդկային հարցեր:
5. Քրիստոնյաների և եկեղեցիների և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պարտականությունը:

Տ. Պարգև եպիսկոպոսը մի շարք օգտակար ելույթներ ունեցավ տնտեսական և ընկերային հարցերի վերաբերյալ, որոնք հանձնախմբի վարիչների կողմից լուրջ ուշադրության առարկա դարձան:

Դ

«Դեպի արդարություն և խաղաղություն միջազգային գործերի մեջ»: Սույն աշխատախմբին մասնակցեց գեր. տ. Սերովբե ար-

քեալ. Մանուկյանը։ Աշխատախումբը քննարկեց մանրամասնորեն հետևյալ կարևոր հարցերը.

1. Նախաբան։
2. Քրիստոնեական տեսակետ։
3. Աշխատանքի ծրագիր։

Այս բաժնում քննարկվեցին և խուսակցության նյութ դարձան կորիզային զենքի սահմանման, ատոմային զենքերի արտադրության դադարեցման, ազգային փոքրամասնության հանդեպ ցուցադրվող անարդարության, ցեղային խտրականության վերաբերող հարցեր։ Սույն ժողովի ընթացքում խոսք ասավ գեր. տ. Սերովբե սրբազանը՝ անդրադառնալով աշխարհի վրա կատարվող ցեղասպանություններին և այդ առթիվ շեշտեց նաև, որ 1915 թվականին հայ ժողովուրդը ևս Թուրքիայում մոտ 2 միլիոն զոհեր է տվել։

Ե

«Աստուծո պաշտամունքը աշխարհիկ ժամանակաշրջանում»։ Սույն բաժանմունքը գրավվեց պաշտամունքի այժմեականության և վավերականության հարցերով։ Նկատի ունենալով կյանքի և ժամանակաշրջանի աշխարհիկ (սեքյուլեր) նկարագիրը, տնտեսության, տեխնիկայի զարգացումը, եկեղեցիներն անհրաժեշտ են համարում վերանայել իրենց պաշտամունքի բովանդակության և ձևերին, որպեսզի կարողանան իսկապես խոսել աշխարհին և մարդկությանը ներգրավեն իրենց շրջանակի և կյանքի մեջ։ Այս նպատակով թելադրություններ եղան, որպեսզի եկեղեցիներն ըստ ժամանակի պահանջների կարողանան բարեփոխել իրենց պաշտամունքի լեզուն, երաժշտությունը, զգեստները, արարողությունները, աղոթքներն ու ճարտարապետական ձևերը։

Ե աշխատախումբը բաժանվեց ենթախմբերի՝ հետևյալ շարքով.

1. Ներածություն։
2. Աշխարհականացման մարտահրավերը եկեղեցիներին՝ պաշտամունքի կապակցությամբ։
3. Շարունակականություն և փոփոխություններ։
4. Քարոզչություն, մկրտություն և ս. հաղորդություն։
5. Օգնել ժողովրդին աստվածապաշտության գործում։

Մեր եկեղեցու ներկայացուցիչը՝ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, մասնակցեց երկրորդ ենթաբաժանմունքի գործերին մի շարք ելույթներով՝ կատարելով որոշ դիտողություններ և թելադրություններ։

Զ

Այս ենթաբաժանումի քննարկման նյութն էր. «Դեպի կյանքի մի նոր ոճ» նշանաբանը։ Մոտ 450 պատգամավորներ, դիտորդներ, խորհրդականներ և երիտասարդության ներկայացուցիչներ մասնակցում էին ենթաբաժանումի գործին։ Գրեթե ամենադժվարին հարցն էր այս՝ լի հակամարտություններով և երկվություններով։ Ի՞նչն էր արդյոք կյանքում նորը. մի՞թե նորը այս ժողովում բացահայտվելու էր։ Նոր կյանքի ոճը բնականաբար քրիստոնեական կյանքի նոր իրագործումն ու նվաճումն էր՝ Հիսուս Քրիստոսի պատգամների իրագործումով կյանքի ընթացքում։

Զ ենթաբաժանումը իր հերթին հինգ մասերի բաժանվեց՝ քննարկելու համար հետևյալ հարցերը.

1. Երիտասարդը և տարեցը։
2. Նորը և հինը։
3. Աղքատն ու հարուստը։
4. Այր մարդիկ և կանայք։
5. Անհատի դերը համայնքի կյանքում։

Այս մանրամասնյալ ստորաբաժանմունքներում քննարկվեցին արդի աշխարհի ընկերային-տնտեսական-քաղաքական ու կրոնական կարևոր հարցերը։ Սկսելով Վիետնամից, հասնելու համար մինչև ցեղային խտրականության ցավալի երևույթներն ու պայքարները։

Այս առթիվ Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը ելույթներ ունեցավ՝ ի պաշտպանություն աշխարհի վրա խաղաղության ամրապնդման և ազգերի միջև եղբայրասիրության հաստատման ի նպաստ։

Խմբերը իրենց աշխատանքները ավարտեցին հուլիսի 11-ին, ապա համագումարի մասնակիցները բաժանվեցին 32 կոմիտեների հարցերը քննարկելու և կազմելու տեղեկագրերը. ծրագրերն ու առաջարկները։ Տ. Սերովբե արքեպիսկոպոսը անդամակցելով միջազգային գործոց վերաբերող Կոմիսիոնի կոմիտեին, տ. Պարգև եպիսկոպոսը՝ միջեկեղեցական օժանդակության բաժանման կոմիտեին, տ. Մեսրոպ ծ. վարդապետը՝ վերստուգիչ Բ կոմիտեին, տ. Ներսես ծ. վարդապետը՝ կրթական կոմիտեին, իսկ տ. Արսեն վարդապետը՝ «Էկումենիկ» կրթական հաստատության կոմիտեին։

Աշխատախմբերի և կոմիտեների հանդիպումների կողքին երեկոներն ու գիշերները շարունակվեցին լիակատար նիստերը, որոնց ընթացքում կարդացվեցին տեղեկագրեր և բանախոսություններ՝ ս. Հոգի մարդկային իրավունքի, հասարակության մի-

ջոցների, եկեղեցու և մարդկության կարիքների մասին:

Դ համագումարը վերընտրեց և ամբողջացրեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մի շարք հանձնախմբերը: Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը ընտրվեց «Հավատքի և կարգի կոմիսիա»-ում: Տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը ընտրվեց Կենտրոնական կոմիտեում:

Դ համագումարը գեղեցիկ մի առիթ հանդիսացավ քրիստոնեական շուրջ 230 եկեղեցիների հանդիպման՝ փոխադարձ առավել ճանաչումի, աշխարհի բազմաթիվ ու այլազան խնդիրներին ու տագնապներին նոր ու իրապաշտ դիրք որդեգրելու: Միահամուռ կերպով որոշվեց շարունակել նյութական ու բարոյական օգնությունը Բիաֆրայի գաղթականների (Նիգերիա), սովահարների և վիրավորների: Վիետնամի, Միջին ու Մերձավոր Արևելքի և Նիգերիայի պատերազմների և հարցերի կապակցությամբ հրապարակվեցին թելադրություններ և խնդրանքներ, որոնք նպաստելու են հավանաբար տագնապների բարվոք լուծումին: Աշխատախմբերի մշակած ուսումնասիրությունները և հանգած եզրակացությունները այժմեական ու արժեքավոր փաստաթղթեր եղան, համագումարի կողմից վավերացվեցին, տպվելով ուղարկվեցին առ որ անկ է:

Հուլիսի 19-ը համագումարի վերջին օրն էր: Նիստերը եզրափակվելուց, նոր որոշումները վավերացվելուց հետո երեկոյան ժամը 8-ին հավաքվեցինք Ուսիսալայի Մայր տաճարում, հավաքաբար, բազմալեզու և բազմադավան էկումենիկական մի արարողություն կատարելու համար: Բոլորս նավաքաբար և միասիրտ աղոթեցինք, որ Աստված մեր բոլոր ջանքերը հաջողությամբ պսակե, լուսավորե երկրի կառավարիչների մտքերը և պահե աշխարհը խաղաղության մեջ: Վերջին օրհնության աղոթքը ասաց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Բլեյկը:

Հաջորդ առավոտյան նորընտիր Կենտրոնական կոմիտեն իր առաջին նիստը գումարեց, որի ընթացքում վերընտրվեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Բլեյկը: Ընտրվեց նոր գործադիր կոմիտե, որ բաղկացած է 16 անդամներից, ինչպես նաև՝ ատենապետություն Կենտրոնական կոմիտեի:

Ներսես ծ. վրդ. Պոզապալյան

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հուլիսի 31-ին՝ շաբաթ.—Երեկոյան ժամը 7-ին Վեհարանում տեղի ունեցավ հանդիպում Վեհափառ Հայրապետի հետ՝ արտասահմանյան Իր շրջագայությունից վերադարձի առիթով։ Հանդիպմանը ներկա էին՝ Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, Վերատուպիչ հանձնաժողովի, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի կազմերը, Արարատյան թեմի թեմական խորհրդի անդամներ և այլ հրավիրյալներ։ Վեհափառ Հայրապետը ջերմորեն ողջունեց ներկայությունը բոլորի, բացատրեց օրվա հանդիպման նպատակը և այնուհետև խոսք տվեց Հայրապետական շքախմբի անդամ և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանին՝ ներկայացնելու արտասահմանյան վերջին ուղևորության հուշագրությունն ու տպավորությունները։ Պրն. Ա. Հատիտյանը սիրով կատարեց Հայրապետի այդ հանձնարարությունը և պատմեց հուշեր, տպավորություններ Հայրապետական շրջագայությունից՝ նշելով այս 8-րդ ուղևորության պատմական նշանակությունը հոգևոր-եկեղեցական, ազգային-հայրենասիրական տեսակետից, ինչպես նաև միջեկեղեցական մակարդակի վրա և դեսպանական շրջանակներում։

Վերջում Վեհափառ Հայրապետը ևս որոշ լրացումներ կատարեց Իր արտասահմանյան ուղևորության վերաբերյալ հուշերի մասին։

Ապա բոլոր ներկաները հյուրասիրվեցին մրգով և կարկանդակներով։

Օգոստոսի 4-ին՝ կիրակի.—Դ կիր. զկնի Վարդավառի.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Օգոստոսի 10-ին՝ շաբաթ.—*Այսօր Վեհափառ Հայրապետը մեկնեց Կիսլովոդսկ՝ հանգչանալու «Կրասնի կամեն» առողջարանում։ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր հոգ. տ. Նարեկ վրդ. Շաբարյանը։*

Օգոստոսի 11-ին՝ կիրակի.—Դ կիր. զկնի Վարդավառի.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսյանը։

Օգոստոսի 18-ին՝ կիրակի.—Վերափոխումն Ս. Աստուածածնի.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. գևորգ վրդ. Սերայդարյանը։

Ս. պատարագին ներկա էր ուխտավորների և հավատացյալների հոծ բազմությունն։

Հավարտ ս. պատարագի կատարվեց խաղողի օրհնություն՝ հանդիսադրությամբ լուսարարապետ դեր. տ. Հայկապուն արքեպ. Աբրահամյանի։

Օգոստոսի 19-ին՝ երկուշաբթի.—Բ օր Վերափոխման։ Յիշատակ մեռելոց.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հովհաննես քհն. Մարությանը։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ «Վասն համօրէն ննջեցելոց»։

Օգոստոսի 25-ին՝ կիրակի.—Բ կիր. Վերափոխման.

Մայր տաճարում պատարագեց Սիրիայից ուխտավորարար ս. Էջմիածնում գտնվող արժ. տ. Զարմայր քհն. Հնդոյանը և քարոզեց «Ուխտս դիր և կատարեցէք» բնաբանով։

* * *

Օգոստոսի 31-ին՝ շաբաթ.—*Այսօր ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց հոգ. տ. Մեսրոպ ծ. վրդ. Սեմերճյանը։*

* * *

Սեպտեմբերի 1-ին՝ կիրակի.—Գ կիրակի զկնի Վերափոխման։ Տօն Գիւտ Գօտւոյ Սրբոյն Աստուածածնի.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը։

* * *

Սեպտեմբերի 4-ին՝ չորեքշաբթի.—*Շուրջ մեկ ամսվա հանգստից հետո Կիսլովոդսկի «Ներասնի կամենա» հանգստատնում, այսօր Մայր Աթոռ վերադարձավ Վեհափառ Հայրապետը՝ ընկերակցությամբ հոգ. տ. Նարեկ վրդ. Շաքարյանի։*

* * *

Սեպտեմբերի 7-ին՝ շաբաթ.—*Այսօր, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետին այցելեցին Շվեյցարիայի ռուս պրավոսլավ եկեղեցու նախագահուհի Եվդոկիա Իվանովնա Քարուսիը և Ցյուրիխի հոգևոր հովիվ տ. Սերաֆիմ վարդապետը։ Հյուրերը այցելեցին նաև ս. Գայանեի, ս. Հռիփսիմեի և ս. Գեղարդի վանքերը։*

Հաջորդ օրը հյուրերը ներկա եղան ս. պատարագին Մայր տաճարում։

* * *

Սեպտեմբերի 8-ին՝ կիրակի.—Դ կիրակի զկնի Վերափոխման։ Տօն ծննդեան Սրբուհւոյ կուսին Մարիամու յԱննայէ.

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռ ս. Էջմիածին ժամանած հոգ. տ. Մեսրոպ ծ. վրդ. Սեմերճյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ ս պատարագի Վեհարանում Վեհափառ Հայրապետը ընդունեց մի խումբ լիբանանահայ և սիրիահայ ուխտավորների։

* * *

Սեպտեմբերի 14-ին՝ շաբաթ.—*Այսօր, ժամը 12-ին, Վեհարանում Վեհափառ Հայրապետը ընդունեց երաժշտագետ Բարսեղ Կանայանի տիկնոջը՝ Քրիստինե Կանայանին, իր դստեր հետ, որոնք ուխտավորաբար գտնվում էին մայր հայրենիքում։*

Հյուրերին ուղեկցում էր Կոմիտասի անվան երգ. երաժշտագետ Միհրան Թումանյանը։

Երեկոյան ժամը 8.30-ին հոգևոր ճեմարանի դահլիճում տ. Մեսրոպ ծ. վրդ. Սեմերճյանը դասախոսեց «Ս. պատարագի բացատրություն» թեմայի շուրջ։

* * *

Սեպտեմբերի 15-ին՝ կիրակի.—Խաչվերաց.

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողոսյանը՝ «Մեք ի յայնմ խաչն եմք յուսացեալ յոր Տէր Յիսուս բեռեցաւ» ընթերցվածով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց ամերիկահայ և ֆրանսահայ մի խումբ ուխտավորների։ Ամերիկահայ ուխտավորներին առաջնորդում էր Հյուսիսային Ամերիկայի հայոց առաջնորդարանի պաշտոնյա տիար Հակոբ Նազրյանը, իսկ ԱՄՆ-ի Հայաստանյայց առաքելական եկեղեցու երիտասարդաց կազմակերպության ուխտավորական խմբին՝ կազմակերպության ընդհանուր դեկավար Հովհաննես սրկ. Գասպարյանը։

Երեկոյան ժամը 6-ին կատարվեց Խաչվերացի անդաստանը՝ հանդիսադրությամբ գեր. տ. Հուսիկ եպ. Ասլթուրյանի։

* * *

Սեպտեմբերի 16-ին՝ երկուշաբթի.—Ցիշատակ մեռելոց.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ «Վասն համօրէն ննջեցելոց»։

Երեկոյան հոգևոր ճեմարանի դահլիճում բանախոսեց հոգ. տ. Մեսրոպ ծ. վրդ. Սեմերճյանը՝ «Հայ և օտար եկեղեցիների նմանությունները և տարբերությունները» թեմայի շուրջ։

* * *

Սեպտեմբերի 17-ին՝ երեքշաբթի.—*Այսօր, շուրջ երեք շաբաթ Մայր Աթոռում ուխտավորաբար գտնվելուց հետո, իր պաշտոնատեղին՝ ԱՄՆ, վերադարձավ հոգ. տ. Մեսրոպ ծ. վրդ. Սեմերճյանը։*

* * *

Սեպտեմբերի 20-ին՝ ուրբաթ.—*Այսօր ժամը 3.30-ին հոգևոր ճեմարանի դահլիճում ե-*

բաժշտագետ Բարսեղ Կանաչյանի մասին հիշողություններով հանդես եկավ Կոմիտասի աշակերտ, երաժշտագետ Միհրան Թումաճանը։ Ելույթն ուղեկցվեց պատկերների ցուցադրությամբ։

Բանախոսությանը ներկա էին նաև հանգուցյալ երաժշտագետի կինը՝ Քրիստինե Կանաչյանը, և իր դուստրը։

* * *

Սրբոյան ժամը 6-ին Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որը քննության առավ 1969 թվականի հոկտեմբերին Մայր Աթոռ ս. Էջմիածնում եպիսկոպոսական ժողով հրավիրելու և այլ հարցեր։

* * *

Սեպտեմբերի 22-ին՝ կիրակի.—Ի կիրակի զկնի Ս. Խաչի.

Մայր տաճարում պատարագեց արժ. տ. Հակոբ քհն. Հակոբյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։



ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 9-ին, երկուշաբթի օրը, ամառային արձակուրդներից հետո, հոգևոր ճեմարանի դռները վերաբացվեցին մեր սաների առաջ։

Սկսվեց 1968—1969 ուսումնական տարեշրջանը։

Վերաբացման հանդիսությանը նախագահում էր Վեհափառ Հայրապետը։ Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, դասախոսական կազմը և ափյուռքահայ ուսուցիչներ, որոնք հյուրաբար գտնվում էին հայրենիքում։

Հանդիսությունը սկսվեց ՀՍՍՀ պետական հիմնի նվագով։ Այնուհետև հոգևոր ճեմարանի սաների երգչախումբը կատարեց «Որք զարդարեցին», «Աշակերտք Քրիստոսի» շարականները և ճեմարանի քայլերգը։

Հոգևոր ճեմարանի վերակացու արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը ընթերցեց Մատթեոսի Ավետարանից սերմնացանի առակը, իսկ Գ լսարանի սան բարեշնորհ Հովհաննես սրկ. Գրիգորյանը՝ Նարեկից սուրբ Հոգուն ուղղված աղոթք-աղերսը (Բան ԼԴ)։

Հոգևոր ճեմարանի վերատեսուչ տ. Ներսես ծ. վարդապետը ողջունեց հոգևոր ճեմարանի 25-րդ ուսումնական տարեշրջանի բացումը՝ շեշտելով որ այս ուսումնական տարում լրանում է ճեմարանի 25-ամյակը, և վեր հանեց նրա կատարած դերը Մայր Աթոռի կյանքում, երիտասարդ հոգևորականների պատրաստման ասպարեզում։

Տեսուչ հայր սուրբը խոսքը ուղղելով ուսանողներին, հորդորեց լինել ուսման մեջ ուշադիր, կարգապահ, նվիրված ու հավատարիմ հայրենի ավանդներին, լինել աշխատասիրի և աղոթքի մարդ։

Հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետը Իր պատգամն ու օրհնությունը տվեց հոգևոր ճեմարանի սաներին և դասախոսական կազմին՝ հորդորելով լինել որքան կոչման, նույնքան գիտության հավատարիմ մշակներ։

Վեհափառ Հայրապետը իր օրհնության խոսքի մեջ շեշտեց նաև Իր սրտասահման կատարած վերջին ուղևորության կապակցությամբ, թե ինչպիսի հույսեր ունի ափյուռքի հայությունը հոգևոր ճեմարանից և Մայր Աթոռի միաբանությունից, հավատացյալ հայ քրիստոնյա ապրելու և մնալու համար, և ճեմարանից շրջանավարտ հոգևորականներն են որ վաղվա մեր եկեղեցական առաջնորդները պիտի դառնան Աստուծո խոսքի ճանապարհով և հայրենասիրական ուղիով առաջնորդելու մեր ժողովրդին։

Հոգևոր ճեմարանի 1968—1969 ուսումնական տարեշրջանի վերաբացման հանդիսություններն ավարտվեցին Հայրապետական օրհնությամբ, «Պահպանիչ»-ով և Տերունական աղոթքով։

Այս ուսումնական տարում հոգևոր ճեմարանի ուսանողության թիվը 35 է՝ բաժանված Ա, Բ, Գ դասարանական և Ա, Բ, Գ լսարանական բաժինների վրա.

Ա դասարան՝ 10, Բ դասարան՝ 7, Գ դասարան՝ 7, Ա լսարան՝ 6, Բ լսարան՝ 3, Գ լսարան՝ 3։

Նույն օրը երեկոյան ժամը 6.30-ին, հոգևոր ճեմարանի տեսչարանում տեղի ունեցավ մանկավարժական, խորհրդակցական ժողով, որի ընթացքում մտքերի փոխանակությունից հետո հաստատվեցին 1968—1969 ուսումնական տարեշրջանի ծրագիրը,

դասաժամերը և ամբողջ տարվա արտադասարանական աշխատանքների ծրագրերը։

Այս ուսումնական տարում նս հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը գլխավորում է **Վեհափառ Հայրապետը**, որը դասավանդում է ևս) քարոզչություն՝ Գ լսարան, բ) տրամաբանություն՝ Բ լսարան, գ) հոգեբանություն՝ Ա լսարան։

Ճեմարանի դասախոսական կազմն է հետևյալը.

Տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյան՝
- ա) աստվածաբանություն — Ա և Բ լսարան
- բ) ծիսագիտություն — Գ դասարան

Տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյան (տեսուչ հոգևոր ճեմարանի)
- ա) Հին Կտակարանի մեկնություն — Գ լսարան
- բ) Նոր Կտակարանի ներածություն — Ա և Բ լսարան
- գ) Հայոց եկեղեցի — Գ լսարան

Տ. Նշան քհն. Բեյլերյան (ավագ վերակացու)՝
- ա) Նոր ուխտի պատմություն — Բ դասարան
- բ) Հին ուխտի պատմություն — Ա դասարան

Տ. Հովհաննես քհն. Մարուքյան՝
- ա) հայոց եկեղեցի — Բ լսարան
- բ) հայոց լեզու և գրականություն — Ա և Բ դասարան

Արթուն Հատիտյան՝
- ա) հայ եկեղեցու իրավունք — Գ լսարան
- բ) հայ եկեղեցու մատենագրություն — Գ դասարան, Ա, Բ, Գ լսարան
- գ) հայ եկեղեցու պատմություն — Գ դասարան, Ա լսարան

Գրիգոր Գյուլյան՝
- ա) հայ ժողովրդի պատմություն — Բ, Գ դասարան, Ա, Բ, Գ, լսարան
- բ) ընդհանուր գրականութ. պատմություն — Ա, Բ, Գ, լսարան

Պարգև Շահբազյան՝
- հայոց լեզու և գրականություն — Գ դասարան, Ա, Բ, Գ, լսարան

Սամվել Անթոնյան՝
- գրաբար — Ա, Բ, Գ, դասրաան, Ա, Բ, Գ, լսարան

Արամ Կարապետյան՝
- անգլերեն — Ա, Բ, Գ դասարան, Ա, Բ, Գ, լսարան

Գևորգ Գևորգյան՝
- ռուսաց լեզու — Ա, Բ, Գ դասարան, Ա, Բ, Գ, լսարան

Սիմոն Հովիվյան (վերակացու)
- ա) ընդհանուր եկեղեցու պատմություն — Ա, Բ, Գ լսարան
- բ) ներածություն Նոր Կտակարանի — Գ դասարան
- գ) քրիստոնեական — Գ դասարան
- դ) ներածություն Հին Կտակարանի — Բ դասարան
- ե) գեղագրություն — Ա, Բ դասարան

Բարսեղ Թաշճյան (վերակացու)՝
- ա) ընդհանուր պատմություն — Բ, Գ, դասարան
- բ) Հին Աշխարհի պատմություն — Ա դասարան
- գ) աշխարհագրություն — Ա, Բ դասարան
- դ) հայ ժողովրդի պատմություն — Ա դասարան

Հակոբ սրկ. Գյոկչյան՝
- ա) պատմական Հայաստանի աշխարհագրություն — Գ դասարան
- բ) հայ եկեղեցու պատմություն — Ա, Բ դասարան

Վարշամ Փարսադանյան՝	
հայկական ձայնագրություն	Ա, Բ լսարան
Խորեն Մեյիսանաջյան՝	
եվրոպական երաժշտություն	Ա, Բ, Գ դասարան Ա, Բ, Գ լսարան
Հայկ Ֆրունջյան՝	
հայ եկեղեցական երաժշտություն	Ա, Բ, Գ դասարան Ա, Բ, Գ լսարան
Հարություն Սիմոնյան՝	
մարմնամարզություն	Ա, Բ, Գ դասարան Ա, Բ, Գ լսարան

Մանկավարժական ժողովից հետո, հոգևոր ճեմարանի վերաբացման առիթով, Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց դասախոսներին:

Տեսուչ հայր սուրբը Ն. Ս. Օծությանը ներկայացրեց մանկավարժական ժողովում քննության առնված հարցերը՝ խնդրելով նրա օրհնությունն ու թելադրությունները:

Դասախոսական կազմի անունից, ճեմարանում գրաբարի լեզվի դասախոս Սամվել Անթոսյանը հավաստիացրեց Վեհափառ Հայրապետին, որ դասախոսները կանեն իրենց կարելին՝ ավելի արդյունավետ դարձնելու համար իրենց աշխատանքները:

Վեհափառ Հայրապետը ջերմությամբ ողջունեց դասախոսների վերադարձը դեպի իրենց սիրած աշխատանքը՝ մաղթելով նրանց քաջառողջություն և բեղմնավոր աշխատանքի տարի:

Հաջորդ օրը, սեպտեմբերի 10-ին, հոգևոր ճեմարանի կամարների տակ դարձյալ ողողանջեց զվարթաձայն զանգը՝ հրավիրելով ուսանողներին աշխատանքի:

Սկսվեց 1968—1969 ուսումնական տարին:



ԱՐՄԻՆ Թ. ՎԵԳՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Շուրջ երկու շաբաթներից ի վեր, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության հրավերով Սովետական Հայաստանում է գտնվում գերմանացի հայասեր, ականավոր գրող ու հասարակական գործիչ, հայ ժողովրդի բարեկամ Արմին Թ. Վեգները՝ իր կնոջ՝ արվեստագիտուհի Իրենե Կովալևսկայայի հետ:

Ապրիլյան եղեռնի զարհուրելի օրերին, 1915—1918 թվականներին, Արմին Թ. Վեգները, որպես գերմանական բանակում առողջապահության սպա, ականատես է եղել հայ ժողովրդի մեծագույն ողբերգությանը Միջագետքում, Տեր-Զորի անապատում և առաջիններից մեկը, որ նույն այդ ծանր օրերին իր բողոքի հուժկու ձայնն է բարձրացրել մարդասիրաբար՝ ի նպաստ նահատակվող հայ ժողովրդի, և ավելի քան իր լուսանկարած 4000 նկար-փաստաթղթերով 20-րդ դարի այդ ահավոր և առաջին ցեղասպանության մեջ մեղադրել է կայզերական Գերմանիային ու Թուրքիային:

Այդ սև օրերից մինչև այսօր, Արմին Վեգները եղել է հայ ժողովրդի անդավաճան բարեկամը և հայանպաստ բեղմնավոր գործունեություն է ծավալել՝ ի նպաստ հայկական դատի և հայ մշակույթի:

Դեռևս 1918 թվականին մեծանուն հայասերը հրատարակում էր իր հայտնի «Բաց նամակ» ԱՄՆ-ի նախագահ Ուդրո Վիլսոնին, նամակ, որը մի անհերքելի վավերագիր էր Երիտասարդ թուրքերի բարբարոսությունների և հայաջինջ քաղաքականության մասին, մի շառաչուն ապտակ միաժամանակ՝ գերմանական կայսերապաշտ կառավարության, որտեղ համարձակորեն պահանջում էր նաև, որ արդարորեն լուծվի հայկական հարցը, որպեսզի «տաղանդավոր հայ ժողովուրդը զարգացնի իր հազարամյակների բարձր մշակույթը» իր նայրենի հողի վրա, խաղաղ ու ազատ պայմաններում:

Այնուհետև Արմին Վեգները գերմանական մամուլով հրատարակած իր հոդվածներով, իր կարդացած դասախոսություններով և ականատեսի իր հու-

Վեհափառ Հայրապետը ս. Գրիգոր Լուսավորչի շքանշան է ուղղում Արմին Թ. Վեգներին

շագրություններով ցնցող տպավորություն էր թողնում ամենուրեք՝ ի նպաստ հայ դատի և հայ ժողովրդի:

Որպես հայ ժողովրդի բարեկամ, Արմին Թ. Վեգները առաջիններից մեկն էր, որ խանդավառորեն ողջունում էր Ապրիլյան եղեռնից հետո հայ ժողովրդի ազգային վերածնունդը և 1927 թվականին, որպես Սովետական Հայաստանի կառավարության հյուրը, Մոսկվա այցելելուց հետո գալիս էր նա Հայաստան՝ մոտիկից ծանոթանալու երեկվա նահատակ, այսօրվա հրաշալիորեն ազգային վերածննդյան ճանապարհը գտած հայ ժողովրդի հայրենաշինության առաջին քայլերին, բուռն թափով վերաշինվող երկրի տնտեսական ու մշակութային կյանքի վերելքին: Նա Հայաստանում եղած օրերին նյութեր էր հավաքում իր հրատարակելիք երեք հատորանի մի վեպի համար, որն ընդգրկելու էր հայ կյանքը 1890-ական թվականներից մինչև մեր օրերը:

Հայրենիք վերադառնալով Արմին Թ. Վեգները մի գիրք էր հրատարակում՝ Սովետական Միությունից և մասնավորապես Հայաստանից ստացած իր տպավորությունների մասին:

Եվ ահա քառասունմեկ տարիներ հետո մեծանուն հայասերը նորից Սովետական Հայաստանում էր, հրճվում, հիանում ու խանդավառվում էր յուրաքանչյուր քայլին՝ տեսնելով իր բարեկամ ժողովրդի և երկրի հրաշալի վերածնունդը, մինչ հուզումից դողդոջուն շրթները մրմնջում են «Հրաշալի է, չքնաղ է... աներևակայելի փոփոխություն... հրաշք է կատարվել, իսկական հրաշք...»:

Սեպտեմբերի 18-ին, չորեքշաբթի օրը, Արմին Թ. Վեգները իր տիկնոջ հետ այցելում է Մայր Աթոռ ս. Էջմիածին և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ ընկերակցությամբ պրոֆ. Կարո Մելիք-Օհանջանյանի:

Հայոց Հայրապետը ջերմորեն և հուզումով ողջունում է մեծանուն հյուրին և բարի մտածումն է ունենում ըստ արժանվույն պատվել հայ ժողովրդի անկեղծ բարեկամին և հայրապետական Իր մասնավոր գնահատությանն արժանացնել նրա կատարած մեծ ու սրտագին ծառայությունները՝ ի նպաստ հայ ժողովրդի և հայ մշակույթի:

Այդ նպատակով սեպտեմբերի 24-ին, երեքշաբթի օրը, Վեհարանում մեծանուն հայասերի պատվին ընդունելություն է կազմակերպվում, որին ներկա են լինում ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության նախագահ Ի. Պարսամյանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը, ակադ. Կարո Մելիք-Օհանջանյանը, տ. Կոմիտաս և տ. Հուսիկ եպիսկոպոսները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագիրը, հոգևոր ճեմարանի դասախոսներ, սփյուռքահայ հյուրեր, որոնց թվում՝ նահատակ Սիամանթոյի քույրը՝ տիկին Զապել Յարաճանյան—Համբարձումյանը (Փարիզից), տեր և տիկին դոկտ. Վ. Բարսեղյանը (Նյու-Յորքից), Զավեն Կոստանյանը (Բեյրութից) և ուրիշներ:

Ժամը 3-ին Վեհափառ Հայրապետը Իր ընդունարանում ողջունելով բոլոր հրավիրյալների ներկայությունը, նրանց է ներկայացնում օրվա թանկագին հյուրին՝ հայ ժողովրդի մեծ բարեկամ Արմին Վեգներին, որի անունը հայ ժողովրդի նահատակության մռայլ օրերին, ասում է Վեհափառ Հայրապետը, նառագայթեց պայծառ լույսի նման, և նրա արդար ձայնը բարձրացավ համարձակորեն ի նպաստ հայ դատի և ի պաշտպանություն հայ մշակույթի՝ եղեռնի օրերից մինչև այսօր: Մեր ժողովուրդը, շեշտում է Հայոց Հայրապետը,

չի մոռանա երբեք իր օտար բարեկամներին, որոնցից շատերը, ինչպես Ֆ. Նանսենը, դոկտ. Լեվսիուսը, Ֆ. Վերֆել և ուրիշներ չկան այսօր, բայց մոռ նետ է այսօր մեր սիրելի բարեկամ Արմին Թ. Վեգները։ Հայոց Հայրապետի սրտի համար մեծ ուրախություն է այս բոպեին մեծ հայասերի կուրծքը զարդարել, որպես մեր ժողովրդի երախտագիտությունը, ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով։

Ընդհանուր խանդավառության և ծափերի մեջ Հայոց Հայրապետը զարդարում է կուրծքը հայ ժողովրդի բարեկամ Արմին Վեգների ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով։

Ապա Ամենայն Հայոց Հայրապետի ուղղյալ խոսքը երախտագիտության և շնորհակալության սրտագին խոսք է ասում Արմին Թ. Վեգները՝ նշելով, որ ինքը հնարավորություն չունի ներկաներին դիմելու հայերենով, բայց շեշտում է, որ հայկական հարցը փոքր տարիքից իր կյանքի ու գործունեության վրա թողել է խորը ազդեցություն, դեռևս 1895 թվականից, համիդյան կոտորածների օրերից, երբ ինքը ինն տարեկան հասակում գերմաներեն մի թերթում կարդացել է հայկական կոտորածների մասին։

Երկրորդ անգամ, նշում է Արմին Վեգները, 1915—1918 թվականների հայկական ցեղասպանությունը ցնցող տպավորություն է թողել նրա վրա, երբ ինքը որպես առողջապահության սպա ականատես է եղել հայ ժողովրդի անլուր ողբերգությանը։ Տարիներ շարունակ, ասում է Արմին Վեգները, ես չէի կարողանում գրի առնել հայ եղեռնի մասին իմ ահավոր հուշերը։ Տարիներ անցան, և ես վերջերս միայն կարողացա գեղարվեստականորեն վերարտադրել հայ ժողովրդի ողբերգությունը։ Այնուհետև Արմին Վեգները ջերմ շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում Հայոց Հայրապետին՝ այս բացառիկ պատվի և հայրապետական գնահատության համար։

Հաճելի զրույցն ու խոսակցությունները շարունակվում են պատվո ճաշկերույթի սեղանների շուրջ, ուր հարգելի հյուրին ողջունում և շնորհավորում են տ. Կոմիտաս եպիսկոպոսը, Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի ընկերության նախագահ Ռ. Պարսամյանը, ակադ. Կարո Մելիք-Օհանջանյանը, դոկտ. Վ. Բարսեղյանը և ուրիշներ։

Ընդունելությունն ավարտվում է հայրապետական օրհնությամբ։

Հայ ժողովրդի մեծ բարեկամ Արմին Թ. Վեգները հրաժեշտ է առնում Մայր Աթոռից և Հայոց Հայրապետից երախտագետ զգացմունքներով և լավագույն տպավորություններով։

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գերագույն հոգևոր խորհուրդս այսու հաղորդում է ի գիտություն Հայաստանյայց եկեղեցվո նվիրապետական Աթոռներին, սրբազան եպիսկոպոսներին, եկեղեցվո հոգևոր սպասավորներին և հայ հավատացյալ ժողովրդին, թե հանգամանորեն քննելով կարգաթող Խոսրով եպիսկոպոս Էմիրզեյանի պարագան և,

1. Ի նկատի ունենալով Թուրքիո հայոց պատրիարք ամենապատիվ տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալստյանի և Կ. Պոլսո կրոնական ժողովի 1968 թվականի փետրվար 19-ի որոշումները.

2. Ի նկատի ունենալով Խոսրով նախկին եպիսկոպոս Էմիրզեյանի կարգաթողության գրավոր հայտարարությունը ուղղված Կ. Պոլսո ամենապատիվ պատրիարք սրբազանին սույն թվականի փետրվար 9-ին.

3. Ի նկատի ունենալով ընդհանուր վիրավորանքի այն մթնոլորտը, որն առաջ է բերել կարգաթող Խոսրով եպիսկոպոսի գայթակղեցուցիչ արարքը ինչպես Կ. Պոլսում, այնպես էլ սփյուռքի բոլոր հայկական գաղութներում.

4. Այլև քննության առնելով կարգաթող Խոսրով եպիսկոպոսի 1968 թվականի ապրիլ 3-ի և հուլիս 30-ի մեղայագրերը և բանավոր բացատրությունները, տրված Մայր Աթոռում Գերագույն հոգևոր խորհրդի հատուկ հանձնաժողովին, սույն թվականի օգոստոսի 1-ին.

Գերագույն հոգևոր խորհուրդս եկավ այն եզրակացության, թե հիշյալ կարգաթող եպիսկոպոսի նկատմամբ պետք է գործադրվեն Հայաստանյայց եկեղեցվո կանոնները, հատկապես Ծահապիվանի ժողովի 14 կանոնը, որ ասված է.

«Եթէ եպիսկոպոս ոք գտցի ի պղծութեան կամ ի պոռնկութեան, և զ'Առաքելական զպատիւն և զսուրբ աթոռն անարգեաց, և վկայութեամբ ի յայտ եկեսցէ, յաթոռոյն և յիշխանութենէն մերժեսցի և զքահանայութիւնն մի պաշտեսցէ...»։

Որով Գերագույն հոգևոր խորհուրդս անհրաժեշտ է գտնում հաստատել Կ. Պոլսո ամենապատիվ արքազան պատրիարքի և կրոնական ժողովի որոշումները ու խնդրել Վեհափառ Հայրապետին կարգալույծ անել Խոսրով եպիսկոպոս Էմիրզեյանին և դասել նրան աշխարհականների շարքը իր նախկին անունով՝ Անդրանիկ Էմիրզեյան (Էմիրզե-Օղլու):

Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսը, ընթացք տալով Գերագույն հոգևոր խորհուրդի վերոհիշյալ խնդրանքին և որոշման, օգոստոս 5-ի հայրապետական Իր վճռով կարգալույծ արեց եպիսկոպոս Էմիրզեյանին՝ դասելով նրան ի շարս աշխարհականաց:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈ

10 օգոստոս 1968
Ա. Էջմիածին



ՀԱՆԳԻՍՏ
ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆԻ
(1883—1968)

1968 թվականի հուլիսի 17-ին, երեկոյան ժամը 8-ին, Բեյրութի մոտ, Ազունիեի ազգային բուժարանի մեջ, վախճանվեց կիլիկյան Աթոռի երիցագույն միաբան և Սսի Աջապահյան գերդաստանի վերջին շառավիղ Խադ արքեպիսկոպոս Աջապահյանը:

Հանգուցյալի մահով ծանր կորուստ կրեց ընդհանրապես Հայաստանյայց առաքելական եկեղեցին և ի մասնավորի՝ կիլիկյան Աթոռը:

Տ. Խադ արքեպ. Աջապահյանի մահը խորունկ վիշտ պատճառեց նաև Ամենայն Հայոց Հայրապետին և Մայր Աթոռի ողջ միաբանությանը: Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո հուլիսի 28-ին, կիրակի օրը, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ հանգուցյալ Խադ արքեպ. Աջապահյանի:

Տ. Խադ արքեպիսկոպոսը հավատավոր, ուխտապահ, առաքինի ու ազնիվ, ինքնատիպ հոգևորական է եղել: Նա նվիրումով ծառայել է իր եկեղեցուն և սիրելի ժողովրդին, ուր նրան կանչել ու տարել է կոչումի ձայնը: Արդարև, նա եղել է բոլոր առիթներում կոչումի և ծառայության անձնվեր զինվորը, «մշակ՝ առանց ամօթոյ»:

Հանգուցյալ սրբազանը ծնվել է 1883

թվականին Սսում, բարեպաշտ հայ քահանայի ընտանիքում: Մեծացել և դաստիարակվել է հայ եկեղեցուն ծառայելու ոգով թե՛ ընտանեկան հարկի տակ, իր հոր շնչի ներքո, և թե՛ մանավանդ Սսի Հայրապետական հանգուցյալ սրբազանը եղել է կաթողիկոսի գավազանակիրը, բախտակիցը ու ընկերուկիցը:

Կաթողիկոսական փոխանորդի պաշտոն է վարում՝ 1923—1924 թթ. Հալեպում,

Վեհափառ Հայրապետը և տ. Խաչ արքեպիսկոպոսը հին Վեհարանում
(1958 թ. հոկտեմբեր)

նոցի հովանու ներքո՝ կազմակերպվելով որպես տեսիլք ունեցող հոգևորական Աջապահյան մեծ կաթողիկոսների և հոգևորականների շնչով և օրինակով, Աջապահյաններ, որոնք մեծ դեր կատարեցին Սսում կիլիկյան Աթոռի պատմության մեջ 18 և 19-րդ դարերում, մինչև 1860-ական թվականները: Փոքր հասակից նա իր անունը և կյանքը կապել է հայ եկեղեցու ծառայության գործին, որպես հավատարիմ Աջապահյան, և ավելի քան 65 տարիներ անընդհատ սիրով և յուրովսանն ծառայել նրան:

1909 թվականին Սսի Մայր տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա և ծառայել Սսի Մայրավանքում: 1916—1922 թթ. վարել է Երուսաղեմի միաբանության Բեյրութի տեսչական պաշտոնը:

Այս նույն տարիներին, երբ կիլիկյան Աթոռը տեղահանվել էր և նրա գահակալը՝ Սահակ կաթողիկոս Խապայանը, պանդուխտի ցուպը ձեռքին շրջում էր տեղից տեղ, 1929—1933 թթ.՝ Դամասկոսում, և 1933—1939 թթ.՝ Անտիոքում:

1929 թ. Սահակ կաթողիկոս Խապայանի կողմից, Հալեպի Ս. Քառասուն մանկանց եկեղեցում, ձեռնադրվում է եպիսկոպոս:

Արքության աստիճանը ստացել է 1936 թվականին:

1941 թվականին, որպես պատգամավոր կիլիկյան Աթոռի, եղել է ս. Էջմիածնում, Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությանը մասնակցելու:

1941—1945 թթ., ինչպես նաև 1952—1956 թթ. Կիլիկիո Աթոռի միաբանական ժողովով ընտրվել և վարել է կաթողիկոսական տեղապահությունը, իսկ 1946—1951 թթ.՝ Լիբանանի թեմի կաթողիկոսական փոխանորդությունը:

Լուսահոգի սրբազանը ձեռնհասորեն գործակցել է որպես կիլիկյան միաբանության կարկառուն անդամներից մեկը լուսահոգի Տ. Սահակ, Տ Բարգեն Ա աթոռակից, Տ.

Պետրոս և Տ. Գարեգին Ա Հովսեփյանց կաթողիկոսներին: Տ. Գարեգին Հովսեփյանց կաթողիկոսի մահից հետո ձեռնհասորեն վարել է կաթողիկոսական տեղապահի պաշտոնը: Հակառակ այն իրողության, որ հանգուցյալ սրբազանը սնցի էր և կիլիկյան Աթոռի միաբան, այնուամենայնիվ ջերմ պաշտպաններից մեկն էր Մայր Աթոռ ս. Էջմիածնի Հայրապետության հեղինակության, հայ եկեղեցու միության և անբաժանելիության սկզբունքի:

Հանգուցյալ սրբազանը, ի պատիվ իրեն, պետք է արձանագրել, անայլայլ և աներեր կանգնեց օրինապահության և միության սկզբունքի վրա: Հավատարիմ հայ եկեղեցու նվիրապետական իշխանության կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնի Հայրապետության հեղինակության:

Խաղ սրբազանը համբերությամբ տարավ բոլոր դառնությունները, բայց չդավանանեց իր ուխտին, հայ եկեղեցու կարգ ու կանոնին: Նա միշտ բարձր պահեց դրոշը կիլիկյան Աթոռի լավագույն ավանդությունների:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, որը շատ էր հարգում լուսահոգի Խաղ արքեպիսկոպոսին, որպես տիպար, ավանդապահ, օրինակելի հոգևորականի, այդ ծանր օրերին գրում էր նրան իր 1962 մարտ 22 թվակիր նամակում.

«Զեզի... սրտանց կմաղթենք երկար կյանք, քաջառողջությամբ, որպեսզի միշտ նույն եռանդով և նույն հեղինակությամբ շարունակեք ծառայել մեր սուրբ եկեղեցիին և հայ ժողովուրդին, միշտ նույն օրինապահ և հայրենանվեր ոգիով:

Վստահ եղեք, սիրելի սրբազան եղբայր, թե ոչ միայն Մենք և մեր ժողովուրդը այսօր կգնահատենք Ձեր ուղիղ կեցվածքը և գործունեությունը, այլ նաև պիտի հիշվիք որպես պայծառ օրինակ մը բարձրաստիճան հոգևորականի, որ գիտցաք բարձր պահել պատիվը կիլիկյան Աթոռի, հավատարիմ մնալով այդ Աթոռի լավագույն ավանդություններուն, հայ ժողովուրդի և հայրենիքի գերագույն շահերու գիտակցությամբ»:

Մի այլ անձնական նամակում, 1963 մարտ 20 թվակիր, Վեհափառ Հայրապետը գրում էր.

«Դուք խորհրդանիշն եք Տանն Կիլիկիոյ Աթոռին լավագույն ավանդություններուն և Գլուխը՝ Մայր Աթոռին և մայր հայրենիքի հավատարիմ, օրինապահ միաբանության և հավատարիմ հավատացյալ ժողովուրդին:

Մենք Ձեր ուխտապահ արի այս կեցվածքը երբեք չենք մոռնար և հավատացած ենք, որ պատմության մեջ Ձեր անունը միշտ պիտի հիշատակվի այդ լույսին տակ»:

1956—1962 թթ. տ. Խաղ արքեպիսկոպոս Աջապահյանը ապրում էր Բեյրութում, իսկ 1963 թվականի Երուսաղեմի ողջագուրումից հետո միայն վերադարձավ իր համար այնքան նվիրական դարձած Անթիլիասի վանքը՝ անցկացնելու համար իր ծերության վերջին օրերը:

Հանգուցյալ սրբազանի վերջին օծումը և թաղումը կատարվել է հուլիս 20-ին, շաբաթ օրը, Անթիլիասի Մայր տաճարում, Տ. Խորեն Ա կաթողիկոսի գլխավորությամբ և իր անյունը ամփոփվել է Անթիլիասի Մայր տաճարի առաջ՝ կիլիկյան Աթոռի Հայրապետների կողքին:

Հանգուցյալ սրբազանի բարի անունն ու հիշատակը միշտ պայծառ կմնան իրեն ճանաչողների և սիրողների երախտագետ սրտերում:

«Երանի մեռելոցն, որք ի Տէր նինջեցին, զի գործք իւրեանց չոգան զհետ նոցա» (Յայտնութ. ԺԴ 13):

ՈՒՂՂՈՒՄ

Մայր Աթոռ ս. Էջմիածնի 1969 թվականի օրացույցում (էջ 200) «Գերագույն հոգևոր խորհուրդ ս. Էջմիածնի» ցանկում սրբագրական անուշադրությամբ թույլ է տրվել վրիպակ:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը ունի հետևյալ կազմը.

Նախագահ՝ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա

Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ամենայն Հայոց Պատրիարք

Անդամք

1. Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամեան (ատենապետ)
2. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկեան
3. Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տէր-Ստեփանեան
4. Տ. Պարգև եպիսկոպոս Գէորգեան
5. Տ. Յուսիկ եպիսկոպոս Սանթուրեան
6. Պրոֆ.-դոկտ. Առաքել Առաքելեան
7. Ճարտարապետ Միքայէլ Մազմանեան
8. Գրականագէտ Սարգիս Մելիքսէթեան
9. Պատմաբան Յովհաննէս Թօփուզեան

ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԵՐՅԱՆ
(Հայրապետական փոխանորդ
Արարատյան թեմի)

ԴՎԻՆԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
(485—927)

Վաղարշապատը Ամենայն Հայոց հայրապետների նստոց դարձավ ս. Գրիգոր Լուսավորչից սկսած անընդմեջ 182 տարի (303—485)։ Ապա, քաղաքական իրադարձությունների հետևանքներով, հայրապետական Աթոռը դարձավ ատտանդական և փոխադրվեց, հետևելով ժամանակի քաղաքական կենտրոնին, նախ Դվին, հետո հաջորդաբար Աղթամար, Արգինա և Անի։

Աթոռի Դվին տեղափոխությունը տեղի ունեցավ Հովհան Մանդակունու օրով, երբ մարզպան էր Վահան Մամիկոնյանը և Դվինը՝ մայրաքաղաք։ Դվինը որպես հայրապետական նստոց ծառայեց մինչև 927 թվականը, երբ Հովհաննես պատմաբան կաթողիկոսը (898—929) տեղափոխվեց Աղթամար և Զորավանք, Գագիկ Արծրունու հովանու ներքո հուսալի պաշտպանություն գտնելու հույսով, որովհետև Բագրատունիների թագավորության մեջ տիրող քաղաքական շփոթը ծայր աստիճան անապահով էր դարձնում կացությունը։ Աշոտ Երկաթի և արաբ Յուսուֆ ոստիկանի միջև տեղի ունեցող պատերազմները հստակորեն հաստատում էին այս կացությունը։

Դվինը հայրապետական նստոց հանդիսացավ 442 տարի (485—927)։ Բնականաբար Աթոռի հետ փոխադրվեց նաև վարդապետարանը։

Կաթողիկոսական Աթոռը Դվին փոխադրվելուց հետո, այնտեղ վերաբացվեց Կաթողիկոսարանին առընթեր մշտապես գործող վարդապետարանը՝ օրվա կարիքներին և հնարավորություններին համապատասխան նոր ծրագրով և դասավանդվող առարկաներով։ Վարդապետարանի նպատակը մնում է միշտ մեկ և նույնը՝ պատրաստել թարգմանչաց ոգով և ավանդություններով սնված ու աճած, իր կոչմանն ու նվիրմանը գիտակից հայ նոր հոգևորականություն։

Աթոռի փոխադրությունից հետո էլ, Էջմիածնի դպրոցը նույնպես գործում էր, բայց որպես սովորական մի դպրոց։ Մարզպան Վահան Մամիկոնյանին ուղղված Ղազար Փարպեցու «Թուղթ»-ից հասկանում ենք Էջմիածնի դպրոցի անկյալ դրությունը, որին մատնված էր նա Աթոռի Դվին փոխադրությունից հետո։

Աթոռի Էջմիածնից Դվին տեղափոխության ժամանակը արժանահավատ մատենագիրները դնում են 485 թվականին, Վահան Մամիկոնյանի մարզպանության ժամանակ, երբ նա հիմնովին վերանոր դեց Դվինի ս. Գրիգոր Լուսավորիչ կաթողիկեն։

Զ դարի հայ մշակույթի զարգացումը իրավամբ կապվում է Դվինի վարդապետարանի գործունեության հետ։ Թեև ստույգ տեղեկություններ չունենք Դվինում գործող

վարդապետարանի ուսումնական ծրագրի մասին, սակայն այնուամենայնիվ Զ դարում ապրող և գործող մեր մեծ մատենագիրներից շատերի ուսումն ու գործունեությունը կապվում է Դվինի Հայրապետանոցի վարդապետարանի հետ:

Զ դարում գործող Սյունյաց հռչակավոր վարդապետարանը և Դվինի դպրեվանքը իրար ամբողջացնող քույր հիմնարկներ են եղել: Կան փաստեր այն մասին, որ մեկ դպրոցում սովորողը կատարելագործվել է մյուսում: Այսպես, օրինակ, Զ դարի առաջին կեսի մեծ գիտնական Պետրոս Սյունեցին, որին Ստեփանոս Օրբելյանը բնորոշում է որպես «քաջ հռետոր, անյաղթ փիլիսոփայ, լի իմաստութեամբ նախաթոռ վարդապետաց Հայոց»[1], հանդիսանում է իր ժամանակի բազմաբեղուն մատենագիրը: Նրանից մեզ են հասել մի շարք ճառեր, ինչպիսիք են «Գովեստ յամենասուրբ կոյսն Մարիամ», «Ի Սուրբ Գրոց լուծմունք» և այլն:

Պետրոս Սյունեցին, որ 445 թվականին ղեկավարում էր Սյունյաց դպրոցը, ըստ Հ. Ն. Ակինյանի, իր ուսումն ստացել է Դվինում: «Մեզի ավելի հավանական կերևվա,—ասում է Ակինյանը,—Դվինա Կաթողիկոսարանը»[2]: Այս պարագան ժամանակին հաստատել է նաև Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրատյանը. «Դվինա Կաթողիկոսարանի մեջ յուր նախնական ուսումն առնելեն հետո՝ կվարժի նախ Մաքինեցոց կրոնաստանի և ապա Սյունյաց վարդապետարանի մեջ... Կաթողիկոսարանի մեջ կրպարապի Հին և Նոր Կտակարանաց ընթերցասիրությամբ և մեկնությամբ»[3]:

Արշակ Ալպոյաճյանն ևս գրում է, որ Դվինի դպրոցը «Վաղարշապատի դպրոցի շարունակությունն էր»[4]:

Իրոք, Պետրոս Սյունեցին Դվինի Կաթողիկոսարանի վարդապետանոցում ունենում է մանկավարժական արդյունավետ գործունեություն. այնտեղ իրեն աշակերտում է Վրթանես քերթողը, ինչպես վկայում է Ժ դարի պատմիչ Ուխտանեսը՝ «ի տան Կաթողիկոսարանին»[5]:

Վրթանեսի ուսման և վայրի մասին Հ. Ն. Ակինյանը գրում է. «Յուր մտավոր զարգացումը ընդունեցավ Վրթանես ապահովապես լավ ձեռքի տակ ի Դվին, որ ժամանակի գիտության կենտրոնը կհամարվեր Պարսկահայաստանի մեջ»[6]:

Վրթանեսը եղել է նաև կաթողիկոսական տեղապահ (604—607): «Տեղապահ կացուցեալ զնա յաղագս այսր ամենայնի գովութեան զկնի մահուանն Մովսիսի մինչև ի ժամանակս Աբրահամու, որ յաջորդեաց զաթոռ նորին»[7]:

Դվինի վարդապետանոցի այս աշակերտի գրչին է պատկանում հայ կրոնաբանական մատենագրության նշանավոր էջերից հանդիսացող «Ընդդէմ պատկերամարտից» ճառը, ի պաշտպանություն հայ եկեղեցու դավանության՝ ուղղված Քաղկեդոնի դեմ:

«Ընդդէմ պատկերամարտից» գործից բացի Վրթանես Քերթողը գրել է նաև թղթեր եկեղեցական և դավանաբանական խնդիրների առնչությամբ: Նրա գրական վաստակն ուսումնասիրելիս Հ. Գ. Զարբհանալյանը ասում է, «անպատրաստ, անմշակ և հմտությունից զուրկ մի միտք չէր»[8]:

Ուսումնասիրողները վկայում են այն մասին, որ Վրթանեսը ծանոթ էր իր ժամանակի ողջ գրականության. «Այն հանգամանքը, որ Վրթանես ծանոթ էր հույն լեզվին և իբրև այդպիսին մինչև անգամ Հունաստան հրավիրված և ապա ժողովի հրամայ, կարծել կուտա, թե ուսումն մասամբ կատարելագործված է բյուզանդական հողի վրա Զ դարու վերջին քառորդին»[9]:

Բացի իր գրական երկերից, Վրթանեսը առավել հայտնի է եղել որպես դասախոսուսուցիչ նախ Սյունյաց դպրոցում և ապա Դվինի Կաթողիկոսարանի վարդապետանոցում: Նա կրոնական և փիլիսոփայական առարկաներից բացի դասախոսում էր քերականություն:

Վրթանես քերթողի ժամանակակից և թերևս ուսումնակիցն էլ է եղել Մովսես Եղիվարդեցի կաթողիկոսը (574—604), որ էր «անեալ և ուսեալ ի Հայրապետանոցին սրբոյ»[10]:

Վրթանես քերթողին որպես ժամանակակից է հիշատակվում նաև մի ուրիշ քեր-

[1] Ստեփանոս Օրբելյան, «Պատմութիւն տանն Սիսական», Թիֆլիս, 1910 թ., էջ 88:

[2] «Հանդէս ամսօրեայ», 1903 թ., էջ 249:

[3] Մելքիսեդեկ վարդապետ Մուրատյան, «Պատմութիւն Առաքելական Ս. Եկեղեցվո Հայաստանեայց», Երուսաղեմ, 1872 թ., էջ 385:

[4] Արշակ Ալպոյաճյան, «Պատմություն հայ դպրոցի», Կահիրե, 1947, էջ 184:

[5] Ուխտանես եպիսկոպոս, «Պատմութիւն Հայոց», Վաղարշապատ, 1872 թ., Բ, էջ 59:

[6] «Հանդէս ամսօրեայ», 1910 թ., էջ 9:

[7] Ուխտանես, անդ, Բ, էջ 59:

[8] Հ. Գ. Զարբհանալյան, «Պատմութիւն հայ մատենագրութեան, Գ, էջ 447—456:

[9] Հանդէս ամսօրեայ», 1910 թ., էջ 9:

[10] Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցի, «Պատմութիւն», Թիֆլիս, 1912 թ., էջ 65:

թող՝ Գրիգորը, որը մի թուղթ է գրել Աբրահամ կաթողիկոսին (607—615)[11]:

Դվինի Կաթողիկոսարանի վարդապետարանը 2 դարի վերջերին այնքան փայլուն է եղել, որ այնտեղ իրենց ուսումն ստանալու համար եկել են նաև օտարներ, ինչպես վրացի Կյուրիոնը, որն աշակերտել է Մովսես Եղիվարդեցուն և հմտացել հույն, հայ, պարսիկ և վրաց լեզուներին[12]:

Վերև բերված բոլոր փաստերը խոսում են այն մասին, որ Մովսես Եղիվարդեցու ժամանակ Դվինի Հայրապետանոցի վարդապետարանը դարձավ ուղղափառ վարդապետության գիտանոց և հակաքաղկեդոնականության կենտրոն:

Մովսես Բ Եղիվարդեցին (574—604), ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, հաջորդեց Հովհաննես Բ Գաբեղյանին (557—574): Նա իր ուսումն ստացել է Դվինի Կաթողիկոսարանի վարդապետարանում. «Յետ սորա (Հովհաննես Բ Գաբեղյանի— Վ. Ե. Տ.) ապա զՄովսէս, զայրն Աստուծոյ, որ յԵղիվարդ գեղջէ, որ և սնեալ և ուսեալ ի Հայրապետանոցին սրբոյ, կացուցին յԱթոռ Սուրբ Գրիգորի»[13]:

Դվինի Հայրապետանոցի վարդապետարանում, Մովսես Եղիվարդեցու ձեռքի ներքո մեծ է դաստիարակվել նաև Կոմիտաս կաթողիկոսը (615—628), որ նախ ս. Հռիփսիմեի վկայարանի փոքրակալ և ապա Տարոնի և Մամիկոնյանների եպիսկոպոսն էր: Օրմանյանը ևս Կոմիտասի մասին ասում է, որ «դյուրություն ունեցած է Դվնա Հայրապետանոցին աշակերտիլ Եղիվարդացի Մովսես կաթողիկոսի ստրով»[14]:

Կոմիտասն իբրև գրող կամ բանաստեղծ որ արժանավոր համբավը պարտական է իր ստեղծած այն հոյակապ և հոգեզմայլ շարականին, որը նվիրված է Հռիփսիմյանց հիշատակին. «Անձինք նուիրեալք» սկզբնաբառով. բանաստեղծությունը բաղկացած է 36 քառյակից, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկվում է այբուբենի մի տառով: Հետագայում, Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք»-ի ետևողությամբ գրված շարականները կոչվել են «Անձինք»:

Թե այս բանաստեղծության և թե իր մյուս արձակ գրվածքներում («Գիր դաւանութեան», «Թուղթ առ Մոդեստոս տեղապահն Երուսաղեմի» և այլն) «Կոմիտաս ազգված չերևիր նախորդ դարում ելնող աստ հուսաբանական ոճեն»,—դիտել է տալիս Եղիշե պատրիարք Դուրյանը[15]:

Արշակ Ալպոյաճյանը, անդրադառնալով Դուրյան պատրիարքի վերոհիշյալ կարծիքին, ասում է. «Ինչ որ փաստ մը էր, տակավին Հայրապետանոցի մեջ կշարունակվեին Վաղարշապատի դպրոցի ավանդությունները՝ լեզվի տեսակետով»[16]:

Կոմիտաս կաթողիկոսի օրով (615—628) Դվինի վարդապետանոցում դասախոսում էր հավանորեն նաև Հովհան Մայրավանեցին, որն Այրարատ-Նիգ գավառի Բջնի գյուղի մոտ գտնվող Մայրոց վանքի վանահայրն էր: Ասողիկ պատմիչը նրա մասին վկայում է. «որում կաթողիկոսութիւն հաւատացեալ էր Կոմիտասս»[17]: Օրմանյան պատրիարքը Ասողիկի այս վկայության տալիս է այն բացատրությունը, թե Մայրավանեցին Կաթողիկոսարանի ներքին գործերն էր վարում իբր փոխանորդ կամ դիվանապետ: Սակայն նույնքան հավանական էր նաև, որ Հովհանը կոչված լինի իբր ուսուցիչ Դվինի Կաթողիկոսարանի վարդապետանոցին. «Կաթողիկոսարանը յուր սեփական աշակերտներն ալ կունենար, և կրնար Հովհան անոնց ուսուցիչն ալ եղած ըլլալ: Այդ ամեն մանր տեղեկությունները իրարու քով բերելով, զորավոր փաստ մը կկազմեն Կոմիտասի արժանյաց, իբր ուսմանց և զարգացմանց քաջալերիչ մը»[18]:

Արդարև, Դվինի Կաթողիկոսարանի վարդապետարանի նշանավոր ուսուցիչը հատկանշվում է որպես «փիլիսոփայ կատարեալ և աստուածային գրոց գիտութեան բանիբուն»[19]:

Եսայի Ա Եղիպատրուշեցի կաթողիկոսը ևս (775—778) իր ուսումն ստացել է Դվինի Հայրապետանոցի վարդապետարանում «սնեալ և ուսեալ ի նմին Հայրապետանոցի», օրըստօրե աճում է և առաջադիմում: Օրմանյան պատրիարքի հաշվումով, «Օձնեցիի ժամանակին կիյնա Եղիպատրուշեցի որբուկին Կաթողիկոսարանի աշակերտության ընդունվելու ժամանակը»: Այս բոլորը պատմելով Դրասխանակերտցին եզրակացնում է. «Գրեթէ մարգարէութիւն իմն վասն մանկանն կինն գտանէր»[20]:

---

[11] «Գիրք թղթոց», էջ 153—160: Օրմանյան, «Ազգապատում», Ա, էջ 646:

[12] Հ. Գ. Զարբհանալյան, անդ, էջ 451:

[13] Դրասխանակերտցի, անդ, էջ 65:

[14] Օրմանյան, անդ, էջ 657:

[15] Եղիշե պատրիարք Դուրյան, «Պատմութիւն հայ մատենագրութեան», Երուսաղեմ, 1965, էջ 118:

[16] Ա. Ալպոյաճյան, անդ, էջ 119:

[17] Ասողիկ, «Պատմութիւն», Փարիզ, 1859 թ., էջ 86:

[18] Օրմանյան, անդ, էջ 678:

[19] Դրասխանակերտցի, էջ 77:

[20] Դրասխանակերտցի, անդ, էջ 107—108:

Դվինի Կաթողիկոսարանի վարդապետանոցում նույնպիսի արդյունավետ գործունեություն է ունեցել հունարենի քաջահմուտ, իսկական դվնեցի և նույն քաղաքի ավագերեց Սահակի որդին՝ Ստեփանոսը, որը ծնվել է 688 թվականին և հետագայում Սյունյաց եպիսկոպոս ձեռնադրվելով կոչվել է «Սյունեցի»:

ԺԴ դարի անվանակից մատենագիր Ստեփանոս արքեպիսկոպոս Օրբելյանը, Ստեփանոս Սյունեցու գովեստը անելով, գրում է. «Ստեփաննոս, սիւն երկնի և խարիսխն հաւատոյ, վէմն անդրդուելի և ախոյեանն անվախ սուրբ եկեղեցւոյ, մարդն երկնային և հրեշտակն երկրային, հանապազ մեռեալն և միշտ կենդանին, հիացուցիչն հրեղինացն և զարմացուցիչն քերովբէից, զորոյ զգովութեանց հոյլս ոչ է պարտ իմոյ տհաս և թերավարժ մտացս աղաւաղեալ բանիւք»[21]:

Ստեփանոս Սյունեցին էլ իր նախնական ուսումն ստացել է Դվինի Կաթողիկոսարանի վարդապետանոցում, այնտեղ ձեռնադրվել է վարդապետ և ապա մտել Մաքենացոց վանքը, որտեղ այն ժամանակ գտնվում էր Սյունյաց վարդապետարանը և արքեպիսկոպոսական Աթոռը:

Ըստ Օրբելյանի, «Յետ լնլոյ հասակին, ոչ կամէր թաքչել ջահն ընդ գրուանաւ մարմնոյն, այլ հրաժարէր ի բազմամբոխ քաղաքէն և գնայր ի համբաւասենչ և մեծասքանչ հանդիսարանն, ի հրաշակերտ կրօնաստանն սուրբ և յաստուածաբնակ առաքինարանն Մաքենացոց»[22]:

Ստեփանոս Սյունեցու Դվինի Կաթողիկոսարանի վարդապետարանում ուսանելու իրողության հետ համաձայն է նաև պրոֆ. Ա. Մովսիսյանը. «Ստեփանոս Սյունեցին.... իր սկզբնական կրթությունը ստացել է Դվինի Կաթողիկոսարանի դպրոցում»[23]:

Ստեփանոս Սյունեցին Մաքենյաց վանքից, իր ուսումը կատարելագործելու և զարգանալու համար, դիմում է «յաղբիւրն իմաստից՝ ի վայդապետարանն Սիւնեաց, որ գլուխն էր ամենայն գիտնոց Հայոց և պայծառացեալ դպրոցքն որ ի նա»[24]: Սյունյաց այդ դպրոցում Սյունեցին աշակերտում է Մովսես եպիսկոպոս Սյունեցուն և հմտանում աստվածաբանական գիտություններին: Ապա եկեղեցական ասպարեզն ընդգրկելով, նա բարձրանում է վարդապետական աստիճանի, որով և ստանձնում է նույն դպրոցի ուսուցչական ամբիոնը և աշակերտներին մեկնաբանում աստվածաշունչ գրքերը: Մովսես եպիսկոպոսն իր կյանքի վերջալույսին Աթոռի հոգաբարձությունը հանձնում է Ստեփանոսին: Որոշ ժամանակ անցնելուց հետո, Ստեփանոսը վերադառնում է Դվին, Եղիա Արծիշեցի (708—717) կաթողիկոսի մոտ և Անանիա վարդապետին եպիսկոպոս ձեռնադրել տալուց ու Սյունյաց Աթոռի պետ նշանակելուց հետո, նրան ուղարկում է Սյունիք: Ստեփանոսը մնում է Դվինի Հայրապետանոցում և սկսում է սպարապել Հին և Նոր Կտակարանների մեկնաբանությամբ: «Եւ ինքն դադարէ անդէն ի Կաթողիկոսարանին, և ոչ դադարէր երբէք ի մեկնելոյ զգրեանսն Հին և Նոր Կտակարանաց»[25]:

Ստեփանոս Սյունեցին իր դասընկերոջ՝ Գրիգոր Գրգիկի հետ անցնում է Կոստանդնուպոլիս. «Անդէն գտին նոքա զգիրսն Դիոնիսիոսի Արիսպագացոյ, զոր գրեաց ի թելադրութենէ Պաւղոսի Առաքելոյ և Յեռոթէոսի տարրական աստուածաբանութեանցն: Իսկ նոքա մեծաւ ցանկութեամբ թարգմանեցին զնա ի յունականէն ի հայ բարբառ և զի դժուարիմաց էր բան գրոցն, Սուրբն Ստեփաննոս ըստ տուեալոյ նմա իմաստութեանն ի վերուստ, եդ ի վերայ նորա լուծմունս մեկնաւորէն, որ երևէ մինչև ցայսօր: Գտին և ի նմին քաղաքի զբազմիմաստ զիրսն Գրիգորի Նիւսացւոյ, որ վասն բնութեան մարդոյ և կազմութեան կարգեալ էր, և զայն ևս թարգմանեցին: Եւ զի յերկար ժամանակս կացին ի գրեալ քաղաքին, ծանօթացան բազմագ և գլխովին իսկ Գերմանոսի պատրիարքին»[26]:

Աթենքում և Կոստանդնուպոլսում այսպիսի գործեր կատարելուց հետո, Ստեփանոս Սյունեցին 720 թվականին վերադառնում է հայրենիք. «Յայնմ ժամանակի յայտնեցաւ Սուրբն Ստեփաննոս ի նմին քաղաքի, որ թարգմանի Բլուր»[27], որտեղ և նա մտնում է «ի Կաթողիկոսարանին ի Դուին, զի քաղաքն այն էր Աթոռ հայրապետացն Հայոց.... և լուսաւորէր զամենեսեանն բանիւ վարդապետութեանն իւրոյ»[28]:

Ստեփանոս Սյունեցու մատենագրական և

---

[21] Օրբելյան, անդ, էջ 174—175:

[22] Անդ, էջ 175:

[23] Ա. Մովսիսյան, «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության», Երևան, 1958, էջ 80:

[24] Ստեփանոս Օրբելյան, էջ 174:

[25] Օրբելյան, անդ, էջ 177:

[26] Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, «Միխիթար Այրիվանեցի», «Սիոն», Երուսաղեմ, 1931 թ., էջ 215:

[27] Նույնը, անդ:

[28] Նույնը, անդ, էջ 216:

թարգմանական վաստակը բազմաթիվ է և բազմազան: Մեսրոպ վարդապետ Գրիգորյանը, իր «Ստեփանոս Սյունեցի» ուսումնասիրության մեջ (տպված Բեյրութում 1958 թ., էջ 29), տալիս է Ստեփանոս Սյունեցու թարգմանական և ինքնագիր աշխատությունների ցանկը:

Դվինի Հայրապետանոցում Դավիթ կաթողիկոսը նրան տալիս է «զամենայն գործս հոգևորս ի տան Կաթողիկոսարանին», ասյա ձեռնադրում Սյունյաց եպիսկոպոս:

Ստեփանոս Սյունեցուց հետո Ը դարում հիշատակվում են նաև ուրիշ նշանավոր վարդապետներ: Այդ մասին Կիրակոս Գանձակեցին հաղորդում է. «Էին և վարդապետք աշխարհիս Հայոց ընտրեալք և լուսաւորք՝ Տէր Եփրեմ և Անաստաս և Խաչիկ և Դաւիթ Հոռոմայրեցի, և մեծն իմաստասէրն Ստեփանոս Սյունեցի, աշակերտ Մովսէսի, զոր ի վերագոյնն յիշատակեցաք, որ թարգմանիչ եղև ի յունականէն ի հայ լեզու, և ի վերայ թարգմանութեանն արար և երգս հոգևորս քաղցր եղանակաւ՝ շարականս և կցորդս և այլ երգս. արար և մեկնութիւն համառօտ՝ Աւետարանացն և քերականին և Ցոբայ, և «Տէր եթէ գշրթանցն գիշերոյ»[29]:

Բանասերները տարակարծիք են Ստեփանոս Սյունեցու ուսման վայրի մասին: Սակայն Ալպոյաճյանը ենթադրում է, որ «անհավանական չէ, որ գոնե անոնցմե ոմանք Հայրապետանոցին (Դվինի—Վ. Ե. Տ.) մեջ հրահանգված ըլլան, քանի որ Ը դարուն Հայրապետանոցի մեջ ուսումնարանի մը կամ վարդապետարանի մը գոյությունը պահված էր: Ասոր փաստ կարելի է նկատել այն հիշատակությունը, որ Սիոն կաթողիկոսի (767—775) համար եղած է, զայն ներկայացնելով իբրև «ի տղայական հասակէ սնեալ և ուսեալ ի սրբումն Հայրապետարանի» անձ մը, որ Կաթողիկոսական Աթոռի վրա հանդիսացավ բարեկարգիչ մը: Նույնպես ասոր հաջորդը՝ Եսայի կաթողիկոս (775—788), էր «սնեալ և ուսեալ ի նմին Հայրապետանոցի Հովհաննես Օձնեցի «իմաստասէր» կաթողիկոսի ատեն»[30] (Հովհաննես կաթողիկոս, էջ 187): Նույն Կաթողիկոսարանի մեջ ուսում առած էր Հովհաննես Դրասխանակերտցի պատմաբան կաթողիկոսը (898—921), որ նաև Սևանի մեջ իր ազգականին՝ Մաշտոցի աշակերտած է և ապա Գևորգ կաթողիկոսի ատեն՝ Հայրապետանոցին մեջ»[31]:

Հովհաննես Դրասխանակերտցու մասին Թովմա Արծրունին ասում է. «Սնեալ և ուսեալ էր սա առ ոտս Սրբոյն Մաշտոցի, նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեան վարիւք առոգացեալք, այր քաղցրաբարոյ և հեզահայեաց»[32]:

Վասպուրականում կային երկու հայրապետական նստոցներ, Աղթամարը և Զորավանը:

Հայրապետական Աթոռը Աղթամարում մնում է մոտավորապես 40 տարի (927—969): Անկասկած է, որ Կաթողիկոսարանին կից վարդապետարանը գործեց և այս նստոցներում: «Հավանորեն Հայրապետանոցը ուներ իր քով նաև ուսումնարան մը»[33]:

Գագիկ թագավորը Աղթամարում կառուցել էր հոյակապ վանք ու վարդապետարան, «որ Հայոց Ընդհանրական Հայրապետական Աթոռին ալ անշուշտ ծառայեց, որքան ատեն, որ անիկա հոն մնաց»[34]:

Անանիա Մոկացի կաթողիկոսը (948—968) իր պաշտոնավարության առաջին հինգ տարին անցկացրեց Աղթամարում, իսկ վերջին տասնյոթը՝ Զորավանքում: Երբ Բագրատունյաց թագավորությունը Աբաս թագավորից սկսած ծաղկեց և հզորացավ, Անանիա Մոկացին փոխադրվեց Արգինա՝ Անիի մոտ: Այդտեղ Խաչիկ Արշարունի կաթողիկոսը կառուցել տվեց հոյակապ Կաթողիկոսարան, վարդապետարան և մատենադարան:

Անդրադառնալով այս անցուդարձերին, Օրմանյան պատրիարքը գրում է. «Առաջին կետը, զոր պետք է նկատի առնենք, Աթոռի փոխադրությունն է: Անեցին բացարձակ կերպով կգրե, թե յուր 22 տարիներուն, 5 ամ յԱղթամար և եօթնեւտասն ամ ի Վարագ եկաց....» Անանիա պետք զգաց.... Աղթամարի առանձնությունը թողլով, որ Կաթողիկոսարանի ազդեցության կոտրվելուն գլխավոր պատճառն էր, և թերևս քիչ մը ատեն ալ յուր սիրեցյալ Վարագը մնալե հետո, եկավ Կարս Աբաս թագավորի մոտ»[35]:

Անանիայի ընտրդին՝ Արշարունյաց Խաչիկ եպիսկոպոսը, կաթողիկոսանալով հայրապետական հեղինակությունը վերականգնեց և ապահովեց նրան հաստատուն մի նստոցով, որը գտնվում էր իր ձեռակերտ

---

[29] Կիրակոս Գանձակեցի, «Պատմություն», Երևան, 1961 թ., էջ 72:

[30] Ա. Ալպոյաճյան, անդ, էջ 121—122:

[31] Թովմա Արծրունի, «Պատմութիւն»:

[32] Ա. Ալպոյաճյան, անդ, էջ 122:

[33] Նույնը, անդ:

[34] Օրմանյան, անդ, էջ 1086—1087:

Արգինայում: Շինարար կաթողիկոսը բախտն ունեցավ օգտվելու իր ժամանակին մեծ համբավ վայելող Տրդատ ճարտարապետի ծառայությունից: Շուտով Արգինայի վարդապետարանը հռչակվեց ոչ միայն իր պատրաստած մեծատաղանդ սաներով, այլև այնտեղ կատուցված ճարտարապետական կոթողներով, ճոխ գրադարանով[35]:

Ժամանակակից Մատթեոս Ուռհայեցի պատմիչը, Արգինայի վարդապետարանի մեծությունը ցույց տալու համար, ներկայացնում է նրա սաներից մեկին, այն էլ աշխարհականի՝ Բագրևանդի իշխան Արտըրներսեհին (կամ պարզապես Ներսես իշխանին) որպես իր ժամանակի իմաստուն և գիտուն իշխաններից մեկին: Ուռհայեցին այսպես է նկարագրում Արգինայի Կաթողիկոսարանի վարդապետարանի նախկին ուսանողին. «Այր կորովի և յոյժ հանճարեղ, բանիբուն և իմաստասէր.... հասեալ ամենայն շնորհաց աստուածաշէն Կտակարանացն.... հզօր գիտութեամբ և զարմանալի ատենախօսութեամբ.... ուսեալ ի մեծն Արգինա»[36]:

Արգինան կաթողիկոսներին որպես ընտրող երկար չծառայեց: Վարդապետարանում իրենց ուսումն առած և ազգին ծառայության նվիրված սաները շուտով մեծ անուն հանեցին գերապանծ Անի քաղաքում:

Հայրապետական Աթոռը մոտ 60 տարի մնաց Անիում (992—1054): Խնդրական է այն հարցը, որ Աթոռի տեղափոխության հետ վարդապետարանն ու գրադարանն էլ տեղափոխվեցի՞ն արդյոք Անի: Հավանաբար ոչ: Արգինան շատ մոտ էր Անիին և կարելի էր այն իբր մայրաքաղաքի մաս նկատել և չհրաժարվել նրա իրեն վանք ընծեռած առավելություններից, հոգևորականներ պատրաստելու տեսակետից: Ամեն պարագայի Սարգիս Սևանցուց սկսած Կաթողիկոսարանի սաները ավելի շուտ անեցի են կոչվում, քան արգինացի:

Այս սերնդի ամենից հիշատակելի դեմքն է Ասողիկ պատմիչը: Ծննդյամբ Տարոնից էր նա, ուսումն ստացել էր Արգինայում, բայց երկար տարիներ ծառայել էր Անիի Կաթողիկոսարանում: Իր պատմությունը գրել է Սարգիս կաթողիկոսի (922—1019) հրամանով, որի տեղակալն ու եռանդուն գործակիցն էր: Խոսելով իր կրթության մասին, Ասողիկը պատմում է. «Զոմանն ի ծերութենէն իրեանց՝ ի տղայութենէն մերում տեսաք աչօք մերովք և ճաշակեցաք ի քաղցր ճաշակաց բանից նոցա»: Ակնարկությունը Արգինայի վարդապետարանի պատրաստած ուսուցիչներին է վերաբերում[37]:

Դպրոցական հարցերում Սարգիս Սևանցուն որպես գործակից են հիշվում Սարգիս, Տիրան, Ենովք վարդապետները, որոնք վարդապետարանի մնայուն դասախոսներն են եղել. «Եւ էին յայնմ ժամանակի վարդապետք՝ Սարգիս և Տիրանուն, և Ենովք, որ Կաթողիկոսարանին էին վարդապետք»[38]:

Մշակույթի, ճարտարապետության և հարստության մարզերում մեծ անուն հանած Անի քաղաքում վարդապետարանը չունեցավ այն փայլը, որ նրանից սպասելի էր այդպիսի հոյաշեն և ծաղկելու բոլոր տրվյալներով օժտված մի քաղաքից:

Վարդապետարանները Կիլիկյան թագավորության շրջանում (1064—1441)

Անին 1064 թվականին գրավվեց սելջուկ-թուրքերի կողմից: Մոտ 80 տարի կաթողիկոսական Աթոռը, ինչպես նաև նրան կից մշտապես գործող վարդապետարանը թափառական կյանք ունեցավ: Կաթողիկոսները, բարբարոսական արշավանքների թոհուբոհի մեջ, իզուր ապահով տեղ էին որոնում: Չկար մի հայ իշխան, որ կայուն ուժ ունենար և ժողովրդի մեծամասնությունը իրեն ենթարկեր, թե, թիկունք ու սատար հանդիսանար հայրապետի կրթական ճիգերին: Հայաստանը զանազան մահմեդական գազանաբարո ռազմիկների մրցության կրկես էր դարձել, անասելի դժբախտություն պատճառելով հայության: Տեղի էր ունենում ուժեղ արտագաղթ դեպի Տավրոսի լանջերը՝ Կիլիկիա, որտեղ Բագրատունի արքայական տան խնամի և ազգական մի քանի իշխաններ, բյուզանդական կայսեր անվանական գերիշխանության ներքո, իշխանապետություններ էին ստեղծել իրենց համար: Այս իշխանապետություններից մեկը միայն՝ Ռուբինյանը, աստիճանաբար դեմք և գույն ստացավ և 1080 թվականին դարձավ անկախ իշխանություն, հետագայում էլ թագավորություն, որը տե-

[35] Հ. Գ. Զարբհանալյան, անդ, էջ 549: Ասողիկ, անդ, էջ 172: Օրմանյան, անդ, էջ 1189:

[36] Մատթէոս Ուռհայեցի, «Պատմութիւն», Երուսաղեմ, 1869 թ., էջ 183:

[37] Ասողիկ, «Պատմութիւն», Փարիզ, էջ 165:

[38] Արիստակես Լաստիվերտցի, «Պատմություն», Երևան, 1968, էջ 28:

վեց մինչև ԺԴ դարի վերջին քառորդը՝ 1375 թվականը:

Այս շրջանում կաթողիկոսական նստոց են հանդիսանում Սեբաստիան, Ծամնդավը, Թավբլուրը, Ծովք-դղյակը, Շուղրը և այլ վայրեր: Հայրապետանոցի թափառումները սկսում են Պետրոս Գետադարձի օրով, հույների ստիպումով, և շարունակվում են մինչև 1149 թվականը, երբ Գրիգոր Գ Պահլավունին հաստատվում է Հռոմկլայում, հորենական ամրոցում:

Աթոռը համեմատաբար կայուն դրություն ստացավ Ծովք-դղյակում՝ Պահլավունիների հայրենի կալվածում և շուտով դղյակը ծածկվեց հայրապետական շուք ու շնորհք ունեցող եկեղեցիներով, դպրոցով ու նրանց կապված այլ արժանավայել շինություններով: Ապահովաբար Ծովքում էր, որ ծնունդ առավ վարդապետարանի լուսավոր շրջաններից մեկը, երբ Գրիգոր Պահլավունի կաթողիկոսի երկսեր եղբայրը՝ Ներսես Շնորհալին, վերջնական կերպով լծվեց հայրապետական գործերի ղեկավարման ու վարդապետարանի վերելքին:

Աթոռը մնաց Հռոմկլայում մինչև 1293 թվականը՝ Ստեփանոս կաթողիկոսի գերության և Հռոմկլայի եգիպտացիների կողմից ավերման ժամանակ, երբ նորընտիր կաթողիկոս Գրիգոր Է Անավարզեցին տեղափոխվեց Սսի մայրավանքը, որտեղից էլ Աթոռը վերջնական կերպով տեղափոխվեց ու հաստատվեց իր առաջին և հիմնական նստոցը՝ ս. Էջմիածին, 1441 թվականին:

Աթոռի Հռոմկլա տեղափոխության մասին Կիրակոս Գանձակեցին գրում է. «Ի ՇԿԲ (562) թուականին վախճանեցաւ Տէր Բարսեղ՝ կալեալ զհայրապետութիւնն սմս երեսուն և երեք, և յաջորդէ զԱթոռն Տէր Գրիգորիս, եղբայրն Ներսեսի....: Սա փոխեաց զԱթոռն Հայրապետական ի բերդն, որ կոչի Հռոմկլայ, քանզի իբրև տարան յոյնք առ իւրեանս զԳագիկ թագաւորն և զՏէր Պետրոս, այնուհետև ոչ եղև յարևելս Աթոռն Հայրապետական, այլ ընդ իշխանութեամբ յունաց՝ երբեմն ի Սեբաստիա, երբեմն ի Ծովքն կոչեցեալ վայր, իսկ սա փոխեաց ի Կիլայն Հռոմայական»[39]:

Համաձայն Օրմանյան սրբազանի հաշվումների, այդ դեպքը տեղի է ունեցել 1149 թվականին:

Հայրապետանոցի փոխադրությունը Հռոմկլա «հարմար է նշանակել 1149 թվին, Ծոսլինի գերության և մահվան տարին, որով 1116-են, երբ Աթոռը Շուղրե Ծովք փոխադրվեցավ, անցեր էր 20 տարի»[40]:

Այս շրջանում աչքառու են վարդապետարանի այն տայրիները, որոնք անցել են Սև լեռան վրա, Հռոմկլայում և մասամբ էլ Սիս մայրաքաղաքում: Հակառակ քաղաքական անկայուն դրության, Ամենայն Հայոց Կաթողիկոսարանին կից վարդապետարանը, շնորհիվ Պահլավունի կաթողիկոսների ճիգերին ու ջանքերին և հայ իշխանների պաշտպանության ու գործակցության, գիսավորների տպավորություն թողնող կարճակյաց, բայց փայլուն արդյունքով դպրոցները զգալի ծառայություն են մատուցում, այն աստիճան, որ ստեղծվում է շատերի կողմից մեր գրականության և արվեստի «արծաթե դար» որակվածը: Վարդապետարանի ավելի աչքառու կայաններն են Շուղրը, Ընկուզուտը, Հեսունյաց անապատը և այլ վայրեր:

Այս շրջանում գործող ակնառու վարդապետներ են եղել Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը, «այր քաջակիրթ և ամենայն հմտութեանց հետևեալ, և բովանդակ հասեալ ի վերայ Հին և Նոր Կտակարանացն Աստուծոյ.... ընդ իմաստասէրսն նստէր ի յամպիցն ի մէջ Սրբոյն Սոփիի», հայրապետական ճեմարանին մեջ, և «իսօսէր ընդ վարդապետացն Հռոմոց և ի կարգին վարդապետացն էր յաղագս Հայոց»[41]: Այնուհետև նա Սև լեռան վանքերում «միշտ պարապեալ ընթերցման սուրբ գրոց և ստուգաբանութեանց աղօթից»[42]:

Շնորհալին ավելի մանրամասն է խոսում Գրիգոր Վկայասերի Սև լեռան վրա անցկացրած կրթական գործունեության մասին.

«Ի Սեսս մըթին լեառն անուանեալ,
Զքանի սիրողսն հաւաքեալ,
Եւ առ ինքեան բնակեցուցեալ,
Զգիրս Հոգւոյն միշտ ընթերցեալ,
Եւ ընդ նոսին յար խօսակցեալ»[43]:

Կարմիր վանքը, Քեսունի մոտ Շուղր անվանված լեռան վրա, երբեմն ունեցել է շատ փայլուն վիճակ: Այդ վանքում է փայլել Ստեփանոս Մանուկ վարդապետը՝ իր անունով հռչակ տալով նաև վանքին: Նրա մասին հիշատակագիրն ասում է. «Մանուկ մի քահանայ գոլով և վարժեալ ի Հին և Նոր Կտակարանս վարդապետական ուսմամբ՝ ի հօրեղբօրէն իւրմէ, անուն կոչեցեալ Ստեփանոս, որպէս ութեստասնամեանց, սորա ընդ այլ փախստական հասեալ

[39] Կիրակոս Գանձակեցի, անդ, էջ 108:

[40] Օրմանյան, անդ, էջ 1357:

[41] Ա. Այվազյան, անդ, էջ 193:

[42] Հ. Ղ. Ալիշան, «Սիսուան», էջ 406:

[43] Ներսես Շնորհալի, «Բանք չափաւ», էջ 250:

ի գաւառն Քեսունոյ, ի մէջ հռչակ սուրբ ուխտն, որ Կարմիր վանքն կոչիւր.... ի նոյն տեղին բնակեցաւ, բայց ծածկեաց զանուն վարդապետութեանն վասն մանկական հասակին»[44]:

Ստեփանոս Մանուկի անունը շուտով տարածվում է. «Եղ համբաւ նորա ընդ բազում գաւառս»[45]: Այս անվանի և պերճախոս վարդապետի մոտ են հավաքվում բազմաթիվ աշակերտներ, որոնցից նշանավոր են հանդիսանում և իրենց ստացած ուսմամբ և կրթությամբ փայլում են Գրիգոր փոքր Վկայասեր, Ներսես Շնորհալի, Սարգիս, Իգնատիոս և Բարսեղ մեկնիչները, բոլորն էլ «շնորհալի» տիտղոսով են պատվվում: «Շնորհալի մականունին կրկնումը նշանավորագույն աշակերտներուն վրա, մտածել կուտա, թե այդ կոչումը որոշիչ պատվանուն մը եղած է Շուղրի կամ Քեսունի Կարմիր վանքի աշակերտության մեջ, ինչպես քերթող պատվանունը Սյունյաց դպրոցին և իմաստասեր պատվանունը Արագածոտնի դպրոցին հատկացյալ մակդիր անունի պես գործածվեցան»[46]:

Ստեփանոս Մանուկի աշակերտներից Ներսեսը՝ Մատթեոսի, Բարսեղը՝ Մարկոսի և Իգնատիոսը՝ Ղուկասի ավետարանների մեկնությունները գրել են, իսկ Սարգիսը՝ Կաթողիկյաց թուղթինը:

Ստեփանոս Մանուկը մինչև իր մահը մանկավարժական գործունեություն է ծավալել, չնայած իրենից ոչ մի գրավոր աշխատություն չի հասել մեզ, սակայն իր ձեռքի տակ մարզված աշակերտների գրավոր աշխատությունները ցույց են տալիս, թե «անիկա մեթոդ ունեցող ուսուցիչ մը և ավելի գործնական ու հմուտ անձ մը եղած է»[47]:

Ստեփանոս Մանուկի աշակերտներից են հանդիսացել նաև Կարմիր վանքում Ներսես Լամբրոնացին, որ «տեսլականին կրթությամբ հառաջ էր»[48]:

Վկայություններ կան, որ Արևելյան Հայաստանի վարդապետներից էլ են գնացել Կիլիկիա՝ Կարմիր վանք: Դրանցից նշանավոր է հանդիսացել Մխիթար Գոշը[49], որ ըստ ավանդության, ծածկել է ինքնությունն ու աստիճանը, որպեսզի հնարավորություն ունենա սովորելու Ստեփանոս Մանուկի դպրոցում: Մենք մանրամասնորեն կանգ առանք Սև լեռան Կարմիր վանքի վրա այն պատճառով, որ «ԺԲ դարու առաջին կեսին, ըստ Վարդանի (էջ 128) հայրապետական Աթոռ ալ եղած է ան պահ մը»[50]:

Կիլիկիայի հայկական վանքերի կրթության, գիտության և արվեստի կենտրոններն ուսումնասիրելիս և քննարկելիս, համոզվում ենք, որ Դրազարկը և Սկևռան հանդիսացել են քաղաքական-վարչական կենտրոններ, այնպես էլ Հռոմկլան հոգևոր կենտրոն՝ իր վարդապետարանով:

Հռոմկլայի Հայրապետանոցում Ներսես Շնորհալին հիմնադրում է մի վարդապետարան, որտեղի ուսանողներից մեկն է Գրիգոր Պահլավունի Տղա կաթողիկոսը (1173—1193): Այս իրողության մասին գրում է Դուրյան պատրիարքը. Գրիգոր Տղան «իր կրթությունը առած էր Հռոմկլայի Կաթողիկոսարանին մեջ, բայց չի թվիր թե որևէ օտար լեզվի տեղյակ եղած ըլլա»[51]:

Դժբախտաբար Հռոմկլայի Հայրապետանոցի վարդապետարանի կյանքը կարճատև է լինում, որովհետև Հռոմկլան գրավվելով եգիպտացիների կողմից (1292 հուլիսի 28-ին), հայոց հայրապետական Աթոռն էլ փոխադրվում է Սիս, այդ ժամանակ, երբ Կիլիկիայում առավել ապահովությամբ բացվեցին վարդապետարաններ, որոնցից Դրազարկի վարդապետանոցը ծառայել է Հայրապետանոցին որպես նրա կրթարանը: Այլուստեղ Գևորգ Լոռեցին իբրև կաթողիկոս գործել է, օգուտ տալով Դրազարկի վանքին, որը նորոգել է 1105 թվականին[52]: 1112 թվականին Կիրակոս վարդապետն իր հիշատակարանում ասում է. «զերից աւուրքս խոհականութեամբ զեղբայրն մեր և զանդրանիկ մերոյն կրթավարժ և հրահանգայեղձ աշակերտութեան զքրիստոսազեւան Գէորգ մականուն Մեղր կոչեցեալ»[53]:

Այս հռչակավոր վանքը Ռուբինյանց թագավորության մայրաքաղաքի՝ Սսի արքե-

---

[44] Ա. Ալպոյաճյան, անդ, էջ 194:

[45] Հ. Ղ. Ալիշան, «Հայապատում», էջ 820—821:

[46] Օրմանյան, անդ, էջ 1336:

[47] Ա. Ալպոյաճյան, անդ, էջ 195:—կարմիր վանքի աշակերտների և Ստեփանոս Մանուկի գործունեության մասին ավելի մանրամասն է խոսում Օրմանյան պատրիարքն իր «Ազգապատում»-ի Ա հատորում, էջ 1336, «Ստեփանոս Մանուկ» և էջ 1391, «Սև լեռնցի վարդապետներ» ենթավերնագրերի տակ:

[48] Հ. Ղ. Ալիշան, «Հայապատում», էջ 405:

[49] Հ. Գ. Զարբհանալյան, Հայկական հին դպրոցական պատմություն», էջ 686:

[50] Ա. Ալպոյաճյան, անդ, էջ 196:

[51] Ե. պատրիարք Դուրեան, «Պատմութիւն հայ մատենագրութեան», էջ 209:

[52] Հ. Մ. Ջամչեան, «Պատմութիւն Հայոց», Գ, էջ 26: Ալիշան, «Սիսուան», էջ 291 և 457:

[53] Հ. Ղ. Ալիշան, «Հայապատում», Բ, էջ 258:

պիսկոպոսների Աթոռն էր[54]: Այստեղ են ուսանել Հովհաննես Է կաթողիկոսը, Հեթում Հեղի՝ Լամբրոնացու եղբայրը, Բարսեղ արքեպիսկոպոսը՝ Հեթում Ա-ի եղբայրը, Հովսեփ երաժիշտը և Սարգիս Պիծակը:

Դրազարկի միաբանության գործն է եղել արտագրել մատյաններ. ինչպես նաև ս. Գրքի և սուրբ Հայրերի աշխատությունները: Այս իսկ պատճառով այդ վանքը ժամանակակիցներից կոչվել է «Հռչակաւոր և անկաւոր վանք» կամ «մեծ ուխտ և հռչակաւոր անապատ»[55]:

Կաթողիկոսական Աթոռը Սիս է փոխադրվում 1292 թվականին: Աթոռը մնում է այնտեղ, իր վարդապետարանի հետ, մինչև 1441 թվականը: Այդ մեծ ժամանակամիջոցում չենք հանդիպում վարդապետարանում կրթված կամ այնտեղ գործող կարկառուն անունների: Ընդհակառակը, այն օր ավուր հետադիմում է և մնում ստվերի մեջ, համեմատած տարբեր հայկական կենտրոններում ծաղկող անապատներին:

[54] «Տաթև» տարեգիրք, 1927, էջ 188:

[55] Հ. Դ. Ալիշան, «Սիսական», էջ 298:

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

IV.—Զանղրրը

Բառն անգամ կփշաքաղե մեզ հիմա։ Զանղրրը, Այաշի հետ մեկտեղ, այն վայրը դարձավ ուր մեր մտավորականությունը իր անդոհանքի վերջին շաքաթները ապրեցավ իր եղերական ճակատագրին հանդելե առաջ։ Ճիշտ է որ ավելի դժբախտ եղան Այաշ տարվողները, ու դահիճը ավելի անխնա եղավ անոնց հանդեպ, և ճիշտ է նաև որ Զանղրրբեն ետ դարձողներ ալ եղան՝ մինչ Այաշեն Ռոդոպրոները շատ ցանցառ էին, այնուամենայնիվ Զանղրրը ոչ նվազ ախուր էջ մը ունի հայ մարտիրոսագրության պատմության մեջ։

Նախ որ հայ մտավորական դիմքերին կարեվոր խումբ մը Զանղրրին վիճակվեցավ, ու հոն կրեց իր խաչը։ Հետո՝ հայ մտավորականությունը Զանղրրը տարվածներուն մեջ ալ իր զոհերն ունեցավ, անփոխարինելի Վարուժանեն ու Սեպուհեն սկսյալ մինչև Տիրան Քելեկյան, Արմեն Տորյան, Իսրայել Տխրունի, Երվանդ Չավուշյան, և դեռ ուրիշներ։

Զանղրրը գյուղաքաղաք մըն էր Քասթեմունիի կուսակալության մեջ, և փոքր հայ համայնք մը ևս ուներ իր փոքրիկ եկեղեցիով։ Թալեաթ դայն ընտրած էր որովհետև մեկուսացած էր ան, և հեռու էր բանուկ ճամփաներեն, և մանավանդ հսկա զորակոց մը ուներ ուր կարելի էր հաղարներով մարդ համախմբել։

Պոլսեն մեկնող մեծ կարավանը 85 հոգի ձգելե հետո Սինճանքեոյի մեջ,—ուրկե Այաշ պիտի ղրկվեին,—շարունակեր էր իր ճամփան դեպի Անկարա, և այնտեղեն կառքերով մեկներ դեպի Զանղրրը, ճամփու ընթացքին Բավլիի և Գալայճիքի մեջ միայն կանգ առնելով։

Եվ ահա ապրիլ 15/28-ին, երեք օրվան տաժանագին ճամփորդութենե մը հետո, 125 կալանավորներ կհասնեին Զանղրրը, միասին բերելով նաև Կոմիտասը, և կորովի և քաջության մարմնացումին տակ,—ինչպես ան եղեր էր ձերբակալութենեն առաջ և հետո,—մռայլ և անխոս հուսահատ մը իջեցնելով կառքեն վար։

Պայաքյան վարդապետ հետևյալ կերպով կպատմե կարավանին ժամանումը Զանղրրը.

«Նախորդ օրվան կրկին խոլ վազքով, փոշիի ամպերով և ցավատանջ ոսկորներով ավելի քան 10 ժամվան անդադրում ճամփորդութենե մը վերջ, հուսկ ուրեմն կտեսնեինք Զանղրրի աղոտ լույսերը խիստ հեռվեն։ Վերջապես մոտալուտ հավանական հանգիստի մը հույսով զորացած, և զսպված անհամբերությամբ կսպասեինք վայրկյանե վայրկյան մեր ժամանման։

...Սակայն փոխանակ քաղաք մեզ առաջնորդելու, հանկարծ ճամփան փոխելով դեպի աջ կերթայինք կանգնելու գիշերային խավարին մեջ թաղված հսկա շենքի մը մեծ դուռ-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի ՄՄ Ա-ից, Ե—Ժ-ից, 1966 թվականի ՄՄ Ա—Զ-ից, Ը—Ժ-ից, 1967 թվականի ՄՄ Գ—Զ-ից և 1968 թվականի ՄՄ Ա—Ե-ից։

ներուն առջև։ Առաջինը՝ եկեղեցականներուս հատկացված կառքը ըլլալով, նախնառաջ կիջնայի վար, երկյուղալի կասկածոտ ակնարկ մը նետելով շորս բոլորս։

...Երբ ամենքը իրենց կառքերեն արդեն վար իջած էին, հարյուրապետ մը մեզ առաջնորդեց կամարակապ մեծ դռնեն ներս դեպի հսկա շենքին ներքին մասը, որ 4—5000 դինվոր առնելու չափ ահագին քարաշեն զորանոց մըն էր, շուրջանակի քառանկյուն շենքերով իրարու կապված, մեջտեղը ընդարձակ մարզարանով մը։

Ցարարաստիկ վարագույր մը ևս ինկած էր հոս, և կսկսեր նոր ողբերգություն մը...»[6]։

Կոմիտաս ապրիլ 15/28-ի այդ դաժան պիշերը կմտներ ուրեմն Ջանղբրբի ահավոր զորանոցեն ներս, հոգևորական ուրիշ շորս ընկերներու հետ որոնք Գրիգորիս Պալաքյան և Հովհան Կարապետյան վարդապետները և Հուսիկ Քաջունի և Վարդան Գարակյոզյան քահանաներն էին։

«Հնար չէ մոռնալ այն ահավոր գիշերները,—կգրե Պալաքյան,—երբ հարյուրավոր մտավորականներ, կրոնականներ, բժիշկներ, խմբագիրներ, մեծահարուստ վաճառականներ, սեղանավորներ զորանոցի շոր տախտակներուն վրա՝ գիշերները իրարու մոտ կողք-կողքի ինկած՝ կմրափեին, զի քնանալ անկարելի էր այդ պայմաններու ներքև»[7]։

Բյուզանդ Քեչյան դրվագներ պատմելով իր աքսորի կյանքեն, կհիշե համախ Կոմիտաս վարդապետն ալ, որուն հետ Ջանղբրբի զորանոց-բանտը մեկ սենյակ բնակած է՝ միասին ունենալով Տիրան Քելեկյանը, Պալաքյան վարդապետը, Հովյան վարդապետը, բժիշկ Թորգոմյանը, պատվելի Քերովբեյանը, վաճառական Հակոբ Գոբյանը և սեղանավոր Հովհաննես Թերլեմեզյանը[8]։

Միքայել Շամտանճյան տարագրության իր հուշերուն մեջ ինք ևս պատմելե հետո թե հայ աքսորականները, հարյուր քսանհինգ հոգի, 1915 ապրիլ 15/28-ին ժամանեցին Ջանղբրբ զարհուրելի ճամփորդությենե մը հետո և դեռեղվեցան տեղվույն զորանոցը ուր տառապանքի ամբողջ շարաթ մը պիտի անցընեին,

«Մեկեն, մեր խումբին մեջ ներշնչումի մը պես կծնի, հավաքականորեն կծնի ապրելու պետքը, կգրե Շամտանճյան։ Իսկույն կհավաքվինք մեր բնակության սահմանված սրահակը. ամենքս ալ անխտիր հոն ենք, սկեպտիկն ու հավատացյալը։ Արդեն երկրորդական կմնա հավատքը, երբ մարդս ներշնչումով է որ մղված է ապրելու։ Մեկ քանի ժամերու վախկոտ լռություններուն տակ և մեր սրահին անկյուններուն խորը արդեն թանձրորեն կոված սավերներուն մեջ, երևնիս արևելքին, վաղվան հույսին, հսկում կկատարենք։ Քահանան Ավետարան կկարդա, պատվելին փառաբանություն կրնե, աշխարհականը շարականը կերգե և Կոմիտաս վարդապետը «Տեր ողորմյա»-ն կպերսե, «տուր աշխարհիս խաղաղություն, ազգիս հայոց ապաստություն»։ Ա՛լ անկից վերջ ամեն իրիկուն, առանց երբևք խոսված ու որոշված ըլլալու, իրերու հասկացողությամբ մը, մայրամուտին, հսկումի հրաշագործ մխիթարության կու գանք ապավինիլ։ Պահապանները, դուրսը, հեռուն հակՃիռ կմնան մեր ապոթասացության ձայներուն ի լուր, և մեր վերացումեն կպատկառին։

«...Յոթը օր մնացինք զորանոցին մեջ, և յոթը իրիկուններ այդ հսկումներուն վերացումն ու մխիթարությունը, յոթն անգամ ապրեցանք։ Ութերորդ օրը, զորանոցեն դուրս քաղաքին մեջ ապրելու իրավունք երբ տրվեցավ մեզ, մեր համեմատական ազատագրումին մեջ, խորապես ցավեցանք որ կկորսնցնենք այդ հսկումները իրենց երանությամբ»[9]։

«Ընդհանուր հայտնված փափագին վրա,—կպատմե Պալաքյան,—տեղվույն հայոց մատուռեն ժամապիրք մը բերել տալով, արտոնությամբ զորանոցի հսկիչ հարյուրապետին, սկսանք մեր զորանոց մտնելուն չորրորդ օրը երեկոյին «Եկեսցէ»-ի ժամերգության։

...Ջանղբրբի մեծաղանգված զորանոցին ամրակուռ պարիսպներուն հետ, ջարդուփշուր եղած պատուհաններեն փչող հյուսիսի սառնաշունչ գարնանային փոթորկին դեմ, մենք 150-է ավելի Պոլսեն աքսորական մտավորականներ և ընկերներ ի մի եկած, առանց խտրության կուսակցություններու և դասակարգի, հավատացյալի թե կրոնքի անտարբերի և կամ թերահավատի, մթնշաղին մոմի տմուզն լույսի մը մեջ, ժամերգություն կրկատարեինք։ Երբ Կոմիտաս վարդապետ սկսավ իր մելամաղձոտ և սրտառուչ «Տեր ողորմյա»-ն, ձայը ավավ հեկեկանք մը ամեն կողմե, որը հնար չէր զսպել։ Կուլայինք ամենքս ալ ողու պես, կուլայինք մեր ձյած սիրելիներուն վրա, կուլայինք մեր սև ճակատագրին վրա, կուլայինք մեր ազգի անբախտության վրա, կուլայինք մեր անցուցած արյունի օրերուն վրա, առանց ենթադրելու,

[6] Հայ Գողգոթան, էջ 94։

[7] «Գողգոթա», էջ 100։

[8] Թեոդիկ. Ամենուն տարեցույցը. 1922, էջ 54։

[9] Միքայել Շամտանճյան, «Հայ մտքին հարկը՝ եղեռնին», Կ. Պոլիս, 1919, էջ 46—47։

թե արյան աշխարհավեր անանխորնթաց նոր փոթորիկներու արդեն նախօրյակին կգտնըվեինք։ Երբ ազգ ու հայրենիք ի մի հարված պիտի փորձեին քնաջնջել մեր ցեղային դարավոր թուրք թշնամիները։ Մեր մեջեն ամենաքարացյալ սառնասիրտներն իսկ կմասնակցեին աս ողբ ու կոծին, որ երբեք բրոնաբոսիկ չէր, ընդհակառակը՝ հակառակ զսպումի ամեն եիգերու, կուգար մեր տանջված հոգիներու խորքերեն և հուղումն պոռթկացող ներքին հորձանքներեն։

Թերեւս տարաբախտ Կոմիտաս վարդապետ իր ամբողջ կյանքին մեջ այսքան հուզիչ երգած չէր երբեք «Տեր ողորմյա»-ն։ Որովհետեւ, մինչդեռ ամեն անգամ «ի պաշտոնեա» երգած էր «Տեր ողորմյա»-ն, ուրիշներու ցավերուն, վշտերուն, սուգին առ ի մխիթարություն, այս անգամ սակայն, «Տեր ողորմյա»-ն կերգեր իր իսկ վշտին, հույզերուն ու հուզումներուն համար, հայցելով սփոփանք, մխիթարություն հավիտենական Աստուծմեն, որ սակայն լուռ կմնար...»[10]։

«Եկեսցէ՛ աղոթքը սրտառուչ եղավ,—կըպատմե Թյուզանդ Քեչյան։ Քարահատակ մեծ դովուշին մեջ, 130 հայեր, ցուրտ գիշեր մը, փոքրիկ կանթեղի մը աղոտ լույսովն ավելի ու ավելի խորունկցած սովերներուն մեջեն գիրար հազիվ նշմարելով, «Հանգստյան» ժամերգություն կկատարեին, «Հավատով խոստովանիմ»-ով, «Ընկալ քաղցրություն»-ով, «Տեր ամենակալ»-ով, «Տեր ողորմյա»-ով, հոգինին իրենց ներսիդին հալած, ղգալարանքնին թմրած, անստուգության մղձավանջովը լլկված իրենց միտքը չկրնալով կամ չուզելով կռահել թե վաղվան լույսը ո՞րպիսի աղետներ կվերապահեր։ Պահ մը հառաջ մեզի հետ սաստիկ կասկածով վարվող թուրք պահակներ, պատուհաններուն առջև շարված, հետաքրքիր կդիտեին Պոլսեն եկած «Ֆեստայիա»-ներուն ջերմեռանդությունը։ Եվ երբ Վեր. Քերովբեյան աստվածային այցելություն հայցեց մեր տառապյալ ազգին, և երկնավոր հոգատարության հանձնեց մեր հեռավոր սիրելիները, որոնցմե այնքան եղերական կերպով անակնկալ բաժանում մ'ունեցեր էինք, ամեն աչքեր լեցվեցան, և արցունքը, զոր բարեդիպորեն կսքողեին համատարած սովերները, թեթնացում բերավ ծանրաբեռն սիրտերու։

Մեր մեջ կային երեք վարդապետ և երկու քահանա, բայց աշխարհականներեն ալ կըգտնվեին «Հավատով խոստովանիմ»-ը ծայրե ի ծայր անթերի արտասանողներ»[11]։

Հայկ Խոնասարյան որ նույնպես մեկն եղավ Կոմիտասի հետ Ջանդրը աքսոր տարվողներեն և սակայն ողջ վերադարձողներեն, պատմելե հետո վարդապետին վշտաբեկ ու նկուն վիճակը ճամփու ընթացքին, կշարունակե.

«Իր հոգեկան այս տխուր վիճակը անփոփոխ մնաց աքսորավայրը հասնելես վերջն ալ։ Հալածանքի մտասեռումը լլկած էր իր միտքը. իր մտերիմներեն ալ կխուսափեր և անկյուն մը քաշված կուզեր առանձին ըլլալ իր հոգին բզկտող խորհուրդներուն հետ։ Իր միակ մխիթարությունը աղոթքն էր և սրտովին նվիրված էր աղոթքի։

Մտահոգ էինք իր մասին և երբ կմոտենայինք իրեն զվարթ բառ մը կամ հուսադրիչ խոսք մը ըսելու, չափազանց կնեղվեր և աղերսագին շեշտով մը կըսեր.—«Խնդրեմ, մի՛ խանգարեք սղոբխս, զիս միայն ձգեցեք». և հապճեպ կհեռանար մեր մոտեն, նոր անկյուն մը իր մենության մեջ ամփոփվելու։

Այս հուսալքումը անշուշտ միայն իր բաժինը չէր. մենք ալ գրավված էինք նույն տխուր մտածումներով. սիրելիներեն անդարձ բաժանումը, հետո վաղվան անստուգությունը մեր ալ մեջ չքացուցած էր ամեն տրամադրություն։ Այս ընդհանուր անհուսության մեջ խորհեցանք աղոթքի ապավինիլ և որոշեցինք բանտի մեջ «Եկեսցէ»-ի արարողություն կատարել։

Աղոթքի հմայիչ բառը նորեն մեզի մոտեցուց Կոմիտաս վարդապետը. ինք պիտի վարեր երգեցողությունը։

Սրտատրոփ հուզման և խոր լռության մեջ սկսավ «Եկեսցէ»-ի արարողությունը. հայ երգի հոյակապ Վարպետը համակ զգայնություն էր. չեմ կարծեր որ իր համերգներուն մեջ այնքան հոգի ու աղերս դրած ըլլար որքան այդ օրը։ Իր երգը սկսավ հատկապես արցունքներով և վերջացուց հեկեկանքով։ Ան իր տառապանքը երգեց. իր սիրտը փեռեկտող ցավերը և լլկանքները. բանտի այդ մութին սենյակեն լալագին աղերսներով փրկություն կհայցեր իրեն և ազգին համար։ Երբ արարողությունը վերջացավ մեր աչքերը արցունքներով թրջած էին։

Հաջորդական օրերու մեջ հեգ Վարդապետը ավելի մռայլ և տխուր էր. մեր մեջեն ոչ ոք կհամարձակեր մոտենալ։ Այլևս մտահոգ էինք իր առողջությանը մասին. կզգայինք որ իր մեջ փլուզումը սկսած էր և իր պայծառ ի-

[10] Գրիգորիս եպ. Պալաքյան, Հայ Գողգոթան, էջ 103—104։

[11] «Ամենուն տարեցույցը», 1922, էջ 35։

մացականությունն ալ մթագնած։ Իր ազգությունն մարմինը ինչպես պիտի առկար այրքան ծանր մտալլկումիս»[12]։

Ջանդրբրի բանտարկյալներուն առաջին մտահոգությունն եղավ արտոնություն ձեռք բերել կիրակին կիրակի հայոց եկեղեցին երթալու և աղոթելու։ Իշխանությանց մոտ դիմում ընելու հոգը Բյուզանդ Քեչյան սատանաներ էր, և հաջողեր ալ էր։

«Իրոք նույն իրիկունը փոլիսին մեծը զորանոց գալով ծանույց թե տասն հոգիի եկեղեցի երթալուն հրաման կա։ Դիտել տվինք թե քաղաք ելլելու համար 20—25 հոգիի հրաման արդեն կա, ինչո՞ւ նվազ թույլտվություն եկեղեցիի։

Երեսուն հոգիե ավելի էինք առաջին կիրակին եկեղեցի դացողներս։ Քառասուն տուն տեղացի հայերը ամբողջ հոն էին։ Երախտապարտ էինք իրենց բարեսրտության. որովհետև մեր զորանոց հասնիլը հաղիվ լսած, 40 ձեռք մաքուր անկողին բերած էին, որով 100 հոգի պատրաստվեցան։

Տեղվույն քահանան ալ մեր խնդրանքով ժամագիրքերը առած զորանոց եկած էր մեր դիշերային աղոթքը դյուրացնելու»[13]։

«Այսպիսի ընկճված հանդամանքներու ներքև կանցնեինք զորանոցին մեջ մեր օրերը,—կդրե Պալաքյան,—միօրինակ և վազվան մտահոգությամբ լեցուն, միշտ աչքերը հառած դեպի զորանոցի ավագ դուռը, ուրկե կհուսայինք մեր փրկության ավետավոր լուրը։

Մասնավոր և բացառիկ թույլտվությամբ, մեր ընկերները հերթով կերթային քաղաք ոստիկաններու հսկողությամբ գնումներ ընելու, և վերադարձին մեզ կրերեին ղանազան լուրեր և տեղեկություններ, որոնք հակառակ իրենց հեռության, իրր նոր լուրեր հաճույքով կլսեինք արտաքին աշխարհեն մեկուսացված աքսորականներս»[14]։

Եվ ահա, օր մը, զորանոցը իր ավագ դուռը բացավ։ Բանտարկյալները քաղաք կփոխադրվեին։ Աքսորի կվերածվեր իրենց բանտարկությունը։

V.—«Քրիստոս պատարագեալ»

Ջանդրբրի աքսորականները ապրիլ 22-ին (5 մայիս) կփոխադրվին քաղաք, ուր ամեն մեկը բնակարան մը կփորձե ճարել իրեն և ուր իրենց կուգան միանալ Պոլսեն բերված ուրիշ քսան հայեր։

«Զորանոցի կյանքեն հետո, մեր առաջին կիրակին բաղաքին մեջ,—կպատմե Շամտանճյան,—հոգեկան մխիթարության օր մը եղավ ամենուս համար։ Լեցված ենք պզտիկ փայտաշեն մատուռի մը մեջ, զոր հայ բարեպաշտությունը կրցեր է ունենալ, գերազանցապես թուրք, հակաքրիստոնյա միջավայրի հենքանոս պայմաններուն տակ։ ... Եկեղեցիի խնկարկությունը, հոգիի հուզումով մը կդինովցնե մեզ։ Զորանոցի հսկումները առանց խնկարկության էին։ Կոմիտաս վարդապետ և իրենները փլչող փղձկումի մխիթարով խոսքը կուտան մեր հոգիներուն։ Ես ամենեն ավելի ա՛յս առիթով զգացած եմ թե կրոնքը և ի մասնավորի քրիստոնեական կրանքը, թշվառին ապավենն է։ Ասոր համար մենք, հոգիով թշվառացած աքսորականներս, անկից վերջ կիրակի առավոտները մխիթարության մեր բաժինը կերթանք առնել ամենուն Աստուծմենն»[15]։

«Վերջապես երկու շաբաթ վերջ ապրիլի վերջընթեր օրերուն կստանայինք ազատություն դուրս գալու զորանոցեն,—կպատմե իր կարգին Պալաքյան։—Ամեն ոք կառուցարեր ընակարան մը ճարել ընկերովի կամ հայրենակիցներու մտերմական շրջանակով մը, անցընելու համար սպասողական այս սիրտմաշուք օրերը, մինչև որ մեր ճակատագիրը որոշվեր ի բարին կամ ի չարն։

Ամեն ոք չանք ու ճիգ կթափեր և հեռագրով կդիմեր ներքին գործոց ամենազոր նախարար հայասեր!!! Թալեաթին և արգարություն կխնդրեր...։ Կային և աքսորականներ՝ որ իրենց ամեն ազգե ազդեցիկ բարեկամներուն կդիմեին և միջնորդություն կխնդրեին։ Իսկ շատեր ալ իրենց մոտավոր թե հեռավոր ազգականներուն կդիմեին գաղտնի միջոցներով, և կհանձնարարեին որ փորը թե մեծ դրամական կաշառքով դնեն իրենց ազատությունն՝ իմա կյանքը։

Զորանոցե մեկնելեն շուրջ շաբաթ մը վերջ, շնորհիվ ամերիկյան դեսպան Մորկընթաուի և ուրիշներու զորավոր միջնորդությանց հինգ աքսորական բախտավոր ընկերներ (դոկտ. Վ. Թորգոմյան, պատվելի Գրիգորյան, Բյուզանդ Քեչյան, Երվանդ Թոլայան, դեղագործ Հակոբ Նարկիլեճյան) հաջողեցան դառնալ Ջանդրբրեն Պոլիս»[16]։

Ըստ Հայկ Խոճասարյանի պատմածին՝ «Կիրակի առավոտ մ'ալ, իր լալագին պատարագած պահուն, կառավարական պաշտոնյա մը եկավ ըսելու թե Կոմիտաս վարդապետի ներում շնորհված է և արտոնված է Պոլիս վե-

[12] «Հայաստանի կոչնակ», 1936 հունվար, էջ 13։

[13] «Ամենուն տարեցույցը», 1922, էջ 39—40։

[14] Հայ Գողգոթան. էջ 104։

[15] Մելսիկ Նաժտանճյան. անդ. էջ 53—54։

[16] «Գողգոթա», էջ 106։

բաղառնալ։ Իր տաղանդին հիացողներեն Գահաժառանգ Իշխանը, (ամերիկյան դեսպան) պր. Մորկընթաու և (նախկին նախարար) Ոսկան Մարտիկյան հաջողած էին Թալեաթի Ճիրաններեն իր կյանքը փրկելու։

Մեր ուրախությունը անսահման էր. այս շնորհին մեջ Վարդապետին առողջության սպառնացող մոտալուտ վտանգին հեռացումը կտեսնեինք. հետո մեր մեջ առաջին ազատվածն էր, հուսատու սփոփանք մ'ալ մեզ համար։

Պատարագեն վերջ ուրախությամբ շրջապատեցինք վարդապետը. ինքն ալ ուրախ էր. ամիսներե ի վեր առաջին անգամ իր դեմքին վրա ժպիտի մը թեթև ցոլքը կնշմարեինք. մտերմորեն խոսեցավ մեզ հետ և հուսադրական բառեր ալ ըսավ։ Բայց հետևյալ առավոտ իր մեկնման պահուն նորեն մոայլ մտածումներ գրաված էին իր միտքը. հալածանքի սեեռուն գաղափարը նորեն կշարչարեր զինքը։ Արցունքներով ճամփու դրինք. գիտեինք որ քայքայված ու հիվանդ կվերադառնար[17]։

Դոկտ. Թորգոմյան այսպես կպատմե.

«Հաջորդ կիրակին եկեղեցի գտնված պահուս, ուր Կոմիտաս վրդ. կպատարագեր, երվանդ Թոլայան ինձի իմացուց թե ոստիկան մը պատվիրած է որ երթամ ոստիկանապետին ներկայանամ։ Զարագուշակ անակնկալ, որովհետև ԳալեՀիբի մեջ ոստիկանությունը մեզմե զատած, Պոլիս տարած էր հնչակյան Արծրունին, պատերազմական ատյան հանձընվելու համար։ Ոստիկանապետեն իմացա որ պիս ուզողը կառավարիչն է եղեր։ Եթե գեշ լուր մ'ըլլար, Մյութեսարրիֆը չէր որ պիտի հաղորդեր, որովհետև անախորժ գործերը կթողվին փոլիսին։

— Դուք այստեղ անցյալ օր դիմում մ'ըրած էիք։

— Այո՛, Ձերդ Վսեմություն, աղոթելու հրաման խնդրած էի։

— Աստված աղոթքներդ լսեր է, կարդացեք սա հեռագիրը։

Տախիլիեն (ներքին գործերու նախարարությունը) կծանուցաներ թե ութը հոգի ազատ կթողվին (Կոմիտաս վրդ., վեր. Քերովբեյան, դոկտ. Թորգոմյան, Թոլայան, մանուֆակտուրայի խանութպան մը, ատամնաբույժ մը, դեղագործ մը, և ծառաներ)։ Ներքին անունները տառասխալով էին։ Մյութեսարրիֆը հարցուց թե իմ կարդացածս շիտա՞կ էր։ Ապահովվելեն ետքը

— Հիմա ո՞ւր են, ըսավ։

— Եկեղեցին են։

— Գացեք բերեքս։

Կոմիտաս վրդ. վերջին Ավետարանը կը-կարդար։ Ավետարանը համբուրելու համար դոկտ. Թորգոմյանի հետ իրեն մոտենալով, ըսինք թե շուտով պատրաստվի և հետերնիս գա, որովհետև ազատման հեռագիրը կա։ Պատվական պատարագիչին դեմքը հանկարծ տարօրինակ պայծառությամբ մը շողաց։ Իր ուրախությունը՝ չէր կրնար ծածկել նույնիսկ խուռն բազմության առջև, ինչ որ կցուցներ թե մեր վիճակը ո՛րչափ երկյուղ պատճառած էր իրենց։

Վերջին խոսք մըն ալ տանք Կոմիտաս վարդապետի աքսորի մեկ ուրիշ ընկերոջ՝ Հովհաննես Թերլեմեզյանին.

«Էնկյուրիեն, բեռան կառքերով մեզ ղրկեցին Զանղրը։ Երկրորդ իրիկունը Զանղրը հասանք և մեզ բանտարկեցին քաղաքեն քիչ հեռու հին զորանոցի մը մեջ։

Հաջորդ օրը, բոլոր բանտարկյալներս հավաքվեցանք և հսկում կատարեցինք։ Երեք վարդապետ—Կոմիտաս, Պալաբյան և Հովնան (ուղղե՝ Հովհան) Կարապետյան—«Տեր ողորմյա» երգեցին։ Ամենքս ծունկի եկած էինք։ Կոմիտաս վրդ. շատ հուզված էր և կարտասվեր։ Այդ «Տեր ողորմյա»-ն անմոռանալի եղավ բոլորիս համար։

8—10 օր ետք, արտոնվեցանք քաղաքին մեջ բնակելու, պայմանավ, որ ամեն օր ներկայանանք ոստիկանատուն։

Կոմիտաս և Հովնան (ուղղե՝ Հովհան) վարդապետները, Տիրան Քելեկյան, Հակոբ Քարյան (ուղղե՝ Գորյան) և ես, Ջերքեզյան անուն հայու մը տունը վարձեցինք։ Մյուսներն ալ ուրիշ տուներ։

Հաջորդ կիրակի, Կոմիտաս վրդ. պատարագեց։ Անոնք որ ներկա եղած են իր պատարագին, գիտեն թե ինչ հոգեմայլ հանդեսի մը ներկա կգտնվեին, բայց այդ օրը Կոմիտաս գերազանցեց ինքզինքը։ Երբ հուզված և սքանչացած կաղոթեինք, Կոմիտասի արձակման հեռագիրը հասավ։ Առաջին աքսորյալն էր որ պիտի վերադառնար Պոլիս։ Իր ազատ արձակման հրամանը կվերագրվի ամերիկյան դեսպանին և կամ գահաժառանգ Մեհմետ էֆենտիի միջնորդության, որովհետև երկուքն ալ սիրահար էին զիղարվեստին։

Կոմիտասեն ետք, քանիներս հաջողեցան հետգհետե ազատիլ և վերադառնալ Պոլիս, իսկ մնացյալները դեպի անապատ ճամփա հանեցին և ամենքն ալ անխնա սպաննեցին»[18]։

[17] «Հայաստանի կոչնակ», 1936 Ցանվար, էջ 13։

[18] «1915. Աղետ և վերածնունդ», Փարիզ, 1952. էջ 237։

(Շարունակելի)

ԱՎԱՐՏԱԺԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 7-ին, երկուշաբթի օրը, ժամը 1-ին, հոգևոր ճեմարանի հանդիսասրահում, ի ներկայության ճեմարանի դասախոսական կազմի, ուսանողության, Մայր Աթոռի միաբանության և պաշտոնեության, տեղի ունեցավ 1967—68 ուսումնական տարեշրջանի հոգևոր ճեմարանի շրջանավարտներ Վրեժ սրկ. Ներսիսյանի, Սասուն սրկ. Վարդանյանի և Հովսեփ սրկ. Հակոբյանի ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը և վկայականների հանձնումը:

Հանդիսությանը նախագահում էր Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը:

Քննիչ հանձնաժողովի նախագահ և հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը հայտնելուց հետո, թե քննիչ հանձնաժողովը երկու գերազանց և մեկ բավարար գնահատելով ներկայացված գրավոր աշխատանքները, միջնորդել է հոգևոր ճեմարանի տեսչությանը թույլատրելու շրջանավարտ սարկավագներին ներկայանալ բանավոր պաշտպանության, համառոտակի ներկաներին ծանոթացրեց ներկայացված աշխատանքների առավելություններին ու թերություններին:

Ապա բանավոր պաշտպանության համար խոսք տրվեց շրջանավարտ բարեշնորհ սարկավագներին: Նրանցից յուրաքանչյուրը համառոտակի ներկայացնելով իր ավարտաճառի նյութը, օգտագործած աղբյուրները, պատասխանեց հանձնաժողովի հարցերին:

1. Բարեշնորհ Սասուն սրկ. Վարդանյանի նյութն էր «Գրիգոր Նարեկացի»՝ բաղկացած առաջաբանից և մեկ գլխից՝ 10 ենթաբաժանումներով (109 մեքենագրված էջ):

2. Բարեշնորհ Վրեժ սրկ. Ներսիսյանի ավարտաճառի նյութն էր «Եսայի մարգարեն»՝ բաղկացած ներածությունից և յոթ մասերից (71 էջ): Այս երկու ավարտաճառերը գնահատվեցին գերազանց:

3. Բարեշնորհ Հովսեփ սրկ. Հակոբյանի նյութն էր «Ասի Ե ժողովը»՝ բաղկացած ներածությունից և երկու մասերից (55 էջ): Աշխատությունը գնահատվեց բավարար:

Վերջում հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը ամփոփելուց հետո ավարտաճառերի պաշտպանության արդյունքները՝ խնդրեց հանդեսը նախագահող գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանին շրջանավարտներին հանձնել վկայականները, որը կատարվեց ներկաների բուռն ծափահարությունների ներքո:

Վկայականների հանձնումից հետո հոգ. տեսուչ հայր սուրբը շրջանավարտ սարկավագներին առաջնորդեց Վեհարան, ուր նրանք ստացան Վեհափառ Հայրապետի օրհնությունները և բարի մաղթանքները: Այս առթիվ Վեհափառ Հայրապետը նրանց նվիրեց նաև մեկական ձեռքի ժամացույց:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունն էլ իր հերթին շնորհավորելով նորավարտ բարեշնորհ սարկավագներին, մաղթում է, որպեսզի նրանք դառնան հայ եկեղեցու սրբազան անդաստանի արժանավոր, բարի մշակներ և իրենց ժողովրդին նվիրված անձնադիր հովիվներ: